ԿԱՆԱՆՑ ՕՐԱԿԱՐԳ
Women's Agenda

ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հակիրճ նախաբան 1

ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներածություն 3

1. ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ 4

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՉՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ 6

Միջազգային մեխանիզմները և չափորոշիչները 7
ՀՀ ներպետական իրավունքը և քաղաքականությունը 10
Եզրակացություններ 11 11

3. ԳՈՒՅՔԱՅԻՆ ԵՎ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 13

Միջազգային մեխանիզմները և չափորոշիչները 14
ՀՀ ներպետական իրավունքը և քաղաքականությունը 16
Եզրակացություններ 19

4. ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 20 20

Միջազգային մեխանիզմները և չափորոշիչները 21
ՀՀ ներպետական իրավունքը և քաղաքականությունը 23
Եզրակացություններ 25

5. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 26

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 28

ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1 Ամփոփագիր 31
2 Նպատակ/խնդիրներ 31
3 Մեթոդաբանություն 32
3.1 Տվյալների տրիանգուլյացիա 33
3.2 Ընտրանք 34
3.3 Տեսական շրջանակ 35
3.4 Էթիկական նկատառումներ 36
3.5 Սահմանափակումներ 36

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ 37

Պետական աջակցության մեխանիզմների վերլուծություն 37

Հիմնական ծրագրերի և ծառայությունների համառոտ աղյուսակ 40

7. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 43

7.1 Տնտեսական արդարության ընկալումներ. անհատական ջանքից դեպի կառուցվածքային պայմաններ 44
7.2 Աշխատանքի հասանելիություն և մարզային ու տարածքային անհավասարություն 45
7.3 Եկամուտ, անձնական կարիքներ և ֆինանսական ինքնավարություն 49

7.4 Խնամքի տնտեսություն, ժամանակի աղքատություն և ձեռնարկատիրության սահմանափակումներ 51
7.5 Ձեռնարկատիրություն, շուկա և տեսանելիություն 54
7.6 Ֆինանսական ծառայությունների հասանելիություն 59
7.7 Գույք, ժառանգություն և բնակարանային անվտանգություն 62
7.8 Ճանաչում, անտեսանելի աշխատանք և հաջողության սոցիալական չափանիշներ 64
7.9 Տեղահանություն և հետկոնֆլիկտային տնտեսական վերակառուցում 66
7.10 Ինստիտուցիոնալ աջակցություն, ՀԿ-ներ, պետություն և ֆինանսական համակարգ 68
7.11 Խաչվող խոցելիություններ և ինտերսեկցիոնալ վերլուծություն 71
7.12 Կազմակերպությունների ծառայությունների քարտեզագրում 73
7.13 Եզրակացություն 75
7.14 Առաջարկներ 77


8. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 78


Կառավարությանը և պետական կառույցներին ուղղված առաջարկներ 79
Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և պետություն-ՔՀԿ համագործակցությանն ուղղված առաջարկներ 82
Ֆինանսական ոլորտի տեղական և միջազգային ինստիտուտներին ուղղված առաջարկներ 83

Գրականության ցանկ 85

9. ՆԵՐԴԻՐ 87

Խորքային հարցազրույցի հարցաշար 88
Փորձագիտական հարցաշար 92
Քանակական հարցաշար 95
Կազմակերպությունների ծառայությունների մատուցում 98





Հակիրճ նախաբան

Սույն հետազոտությունն ուսումնասիրում է Հայաստանում կանանց տնտեսական արդարության հիմնախնդիրները՝ վերհանելով կանանց տնտեսական մասնակցությունն ու անկախությունը խոչընդոտող հիմնական կառուցվածքային, սոցիալական և ինստիտուցիոնալ գործոնները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով չվարձատրվող խնամքի բեռին, տարածքային անհավասարություններին, գույքային իրավունքներին, ֆինանսական ներառականությանը և գենդերային կարծրատիպերին: Հետազոտությունը բաղկացած է երկու մասից՝ իրավական և որակական: Այս համապարփակ մոտեցումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու և հասկանալու իրավահավասարության սկզբունքների և կանանց տնտեսական իրավունքների իրացման առօրյա փորձառությունների միջև առկա խզումը:

Հետազոտությունն անդրադառնում է նաև տարբեր խոցելիություններ ունեցող կանանց փորձառություններին՝ դիտարկելով, թե ինչպես են փոխկապակցված անհավասարությունները խորացնում տնտեսական անապահովությունն ու սահմանափակում հնարավորությունները: Հետազոտության նպատակն է նպաստել Հայաստանում կանանց տնտեսական արդարության հիմնախնդրի համապարփակ ընկալմանը և դրա լուծմանն ուղղված համակարգային մոտեցումների ձևավորմանը:

ԿԱՆԱՆՑ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նվարդ Փիլիպոսյան

Գենդերային հարցերով իրավական փորձագետ



Ներածություն

Սույն իրավական վերլուծության նպատակն է ուսումնասիրել ՀՀ օրենսդրությամբ և պետական քաղաքականությամբ նախատեսված՝ կանանց տնտեսական արդարության ապահովման մեխանիզմները՝ համադրելով դրանք Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների և արդի միջազգային չափորոշիչների հետ:

Վերլուծությունն իրականացվել է միջոլորտային և կոնֆլիկտազգայուն մոտեցումների հիման վրա: Ուսումնասիրվել են ՀՀ քաղաքացիական, ընտանեկան, սոցիալական ապահովության և հարկային օրենսդրությունները, պետական ռազմավարական փաստաթղթերը և միջազգային իրավական ակտերը, այդ թվում՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան», ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաները:

Վերլուծությունն անդրադառնում է աշխատանքային, գույքային, ժառանգական և հարկային իրավունքների ոլորտներում կանանց տնտեսական արդարության ապահովման մարտահրավերներին: Վերլուծության առանցքում խնամքի տնտեսությունն է (care economy), մասնավորապես՝ խնամքի աշխատանքի ճանաչումը, արժևորումը և վերաբաշխումը, որոնք կանանց տնտեսական արդարության ապահովման առանցքային նախապայմաններից են: Վերլուծության ընթացքում վերհանված խնդիրներն ու ներկայացված առաջարկները մեծապես առնչվում են խնամքի տնտեսության այս կամ այն բաղադրիչին: Վերլուծությունը հիմնված է բովանդակային հավասարության սկզբունքի և դրա իրագործմանը նպաստող իրավական ու քաղաքական մեխանիզմների վրա, քանի որ միայն ֆորմալ հավասարությունը բավարար չէ տնտեսական արդարություն ապահովելու համար:

Ինչպես աշխատանքային իրավունքի խնդիրների (հավասար վարձատրություն, ոտնձգության կանխարգելում, աշխատաժամերի ճկունություն, ընտանեկան և աշխատանքային պարտականությունների համադրում), այնպես էլ գույքային ու ժառանգական հարաբերություններում ծագող հարցերի (խնամքի աշխատանքի ճանաչումը ընդհանուր սեփականության ձևավորման ու պահպանման գործընթացում, փաստացի միություններում կանանց իրավունքների պաշտպանությունը) և հարկային քաղաքականության բացերի (գենդերային ազդեցության գնահատման անհրաժեշտություն, խնամքի «զամբյուղի» պարագաների ԱԱՀ-ից ազատում, եկամտային հարկման արդարացիություն) հասցեագրումը անհրաժեշտ նախապայման է կանանց տնտեսական արդարության հասնելու ճանապարհին:

Վերլուծության վերջում ներկայացվում են օրենսդրության և պետական քաղաքականության վերաբերյալ առաջարկներ՝ ուղղված ՀՀ իրավական համակարգում միջազգային չափորոշիչների տեղայնացմանը:

1 ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ



Կանանց տնտեսական արդարությունը տնտեսական համակարգերին և տնտեսական որոշումների ընդունման գործընթացներին մասնակցելու, դրանցից օգտվելու և դրանք ձևավորելու՝ կանանց իրավունքի լիարժեք իրացումն է: Սա ենթադրում է տնտեսական կյանքին լիարժեք մասնակցելու իրավական և գործնական հավասար հնարավորությունների ապահովում, այդ թվում՝ աշխատանքի, վարձատրության, սեփականության և սոցիալական պաշտպանության հավասար հասանելիության ապահովում: Կանանց տնտեսական արդարության գաղափարը ձևավորվել է ֆեմինիստական տեսությունների շրջանակում և ամրագրվել միջազգային իրավական փաստաթղթերում՝ դառնալով գենդերային հավասարության և համապարփակ զարգացման ապահովման հիմնարար բաղադրիչ:

Կանանց տնտեսական արդարության չափորոշիչներն ամրագրող հիմնական միջազգային փաստաթղթերն են.

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (1979 թ.) (CEDAW):

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագիրը (1966 թ.) (ՏՍՄԻԴ):

Եվրոպայի խորհրդի վերանայված սոցիալական խարտիան (1996թ.):

Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության (No 100, 1951 թ.), աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության (No 111, 1958 թ.), ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների (No 156, 1981 թ.), մայրության պաշտպանության (No 183, 2000 թ.), տնային աշխատողների (No 189, 2011 թ.), ինչպես նաև բռնության և ոտնձգության (No 190, 2019 թ.) մասին կոնվենցիաները:

Այս փաստաթղթերը միասին ձևավորում են կանանց տնտեսական արդարության չափորոշիչների համակարգ, որն ընդգրկում է ոչ միայն վարձատրության և աշխատանքի պայմանների հավասարությունը, այլև սեփականության և ժառանգության իրավունքների հավասար իրացումը, հարկային քաղաքականության արդարացիությունը և սոցիալական ծառայությունների հավասար հասանելիությունը:

Վերոնշյալ փաստաթղթերը, բացառությամբ ԱՄԿ-ի No 156, 183 և 189 կոնվենցիաների, վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:



2 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՉՎԱՐՁԱՏՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ



Միջազգային մեխանիզմները և չափորոշիչները

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի[1] 11-րդ հոդվածով ամրագրվում է մասնակից պետությունների պարտավորությունը՝ վերացնելու զբաղվածության ոլորտում կանանց նկատմամբ ցանկացած խտրականություն՝ ապահովելով կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները, մասնավորապես.

- աշխատանքի ընտրության ազատության,
- համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության,
- սոցիալական ապահովության, առողջության պաշտպանության և աշխատանքի պայմանների անվտանգության:

Նույն հոդվածով ամրագրվում է նաև պետությունների՝ հետևյալ քայլերը ձեռնարկելու պարտավորությունը՝ կանանց նկատմամբ խտրականությունը կանխելու նպատակով.

- արգելել հղիության, մայրության կամ ամուսնական կարգավիճակի հիմքով աշխատանքից ազատումը,
- տրամադրել վճարովի մայրության արձակուրդ՝ աշխատատեղի պահպանմամբ,
- խրախուսել սոցիալական ծառայությունների տրամադրումը, մասնավորապես՝ նախադպրոցական հաստատությունների ցանցի ստեղծման և զարգացման միջոցով, ծնողների աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղումը հնարավոր դարձնելու համար,
- ապահովել հղի աշխատողների հատուկ պաշտպանությունն աշխատանքի այն տեսակներում, որոնց վնասակարությունը նրանց առողջության համար ապացուցված է:

Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաները լրացնում և մանրամասնում են այս դրույթները:

ԱՄԿ-ի No 100 կոնվենցիան (Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության մասին կոնվենցիա, 1951 թ.)[2], որը Հայաստանը վավերացրել է 1995 թ., պարտավորեցնում է պետություններին ապահովել համարժեք աշխատանքի դիմաց կանանց և տղամարդկանց հավասար վարձատրություն՝ դիտարկելով ոչ միայն նույն, այլև համարժեք աշխատանքները[3] այդպիսով նպաստելով կանանց և տղամարդկանց վարձատրության տարբերության կրճատմանը: Կոնվենցիայի 3-րդ հոդվածն անդրադառնում է աշխատատեղերի (job) օբյեկտիվ գնահատմանը՝ տվյալ աշխատատեղում կատարվելիք աշխատանքի հիման վրա, որի արդյունքներով էլ պետք է սահմանվեն վարձատրության դրույքաչափերը: Սա կնպաստի համարժեք աշխատանքի համար հավասար վարձատրության ապահովմանը և վարձատրության գենդերային խզվածքի կրճատմանը[4]:

ԱՄԿ No 111 կոնվենցիան (Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին կոնվենցիա, 1958 թ.)[5], որը Հայաստանը վավերացրել է 1995 թվականին, պարտավորեցնում է պետություններին զբաղվածության և աշխատանքի ոլորտում կանխել և վերացնել խտրականությունը՝ սեռի, ռասայի, կրոնի, քաղաքական հայացքների կամ այլ հիմքով, և ապահովել հավա-

1 https://www.arlis.am/hy/acts/60505/latest

2 https://www.arlis.am/hy/acts/81163

3 Համարժեք են համարվում նույնանման հմտություններ, կրթություն, փորձ, աշխատանքային պարտականություններ պահանջող աշխատանքները, օրինակ՝ մաքրուհիների և բանվորների աշխատանքները գործարաններում:

4 Հայաստանի աշխատաշուկայում վարձատրության գենդերային խզվածքի մասին ավելի մանրամասն տե՛ս https://armstat.am/file/article/analysis_of_the_gender_pay_gap_armenia_am.pdf

5 https://www.arlis.am/hy/acts/81179

սար հնարավորություններ և վերաբերմունք բոլոր աշխատողների համար: Կոնվենցիան նախատեսում է նաև պետության կողմից համապատասխան քաղաքականության մշակում և իրականացում՝ աշխատանքի և զբաղվածության ոլորտում խտրականությունը վերացնելու նպատակով:

ԱՄԿ No 183 կոնվենցիան (Մայրության պաշտպանության մասին կոնվենցիա, 2000 թ.)[6], որը Հայաստանը մինչ օրս չի վավերացրել, աշխատանքի ոլորտում արդի միջազգային չափորոշիչներից է: Այն սահմանում է մայրության արձակուրդի նվազագույն տևողությունը (14 շաբաթ), սոցիալական պաշտպանության, ինչպես նաև աշխատավայրում հղի և կրծքով կերակրող կանանց առողջության պաշտպանության երաշխիքները, մայրության հիմքով խտրականության արգելքը, ինչպես նաև կրծքով կերակրող կանանց աշխատանքային օրվա ընթացքում լրացուցիչ ընդմիջումների տրամադրման պահանջը:

ԱՄԿ No 156 կոնվենցիան (Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների մասին կոնվենցիա, 1981 թ.) [7] ևս Հայաստանը մինչ օրս չի վավերացրել: Այն պարտավորեցնում է պետություններին ստեղծել մեխանիզմներ, որոնք կանանց և տղամարդկանց հնարավորություն կտան համատեղելու աշխատանքային և ընտանեկան պարտականությունները՝ առանց աշխատանքային հարաբերություններում խտրականության ենթարկվելու: Կոնվենցիայի նպատակն է ճանաչել ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների առանձնահատուկ կարիքները, աշխատաշուկայում նրանց համար ապահովել հավասար հնարավորություններ:

ԱՄԿ No 189 կոնվենցիան (Տնային աշխատողների մասին կոնվենցիա, 2011 թ.)[8] ևս Հայաստանը չի վավերացրել: Կոնվենցիայի նպատակն է ճանաչել տնային կամ խնամքի վճարովի աշխատանքը որպես աշխատանքի տեսակ և ապահովել տնային աշխատողների իրավական և սոցիալական պաշտպանությունը, հավասար վարձատրությունն ու անվտանգ աշխատանքի պայմանները՝ մյուս աշխատողների հետ հավասար հիմունքներով:

ԱՄԿ No 190 կոնվենցիան (Բռնության և ոտնձգության մասին կոնվենցիա, 2019 թ.)[9] Հայաստանի կողմից վավերացնելու մասին որոշումը[10] ՀՀ ԱԺ-ն ընդունել է 2025 թվականին: Կոնվենցիան պետություններից ակնկալում է ընդունել համապարփակ քաղաքականություն, որը կկանխի և կվերացնի բռնությունն ու սեռական ոտնձգությունը աշխատանքի ոլորտում՝ ներառյալ չգրանցված աշխատանքային հարաբերություններում, աշխատանքի ընդունման գործընթացում, կամավորների, փորձնակների և նախկին աշխատողների նկատմամբ հարաբերություններում:

Տարածաշրջանային մակարդակում առանձնահատուկ կարևորություն ունի *«Եվրոպայի խորհրդի վերանայված սոցիալական խարտիան»* (1996 թ.), որը նախատեսում է հավասար հնարավորություններ և հավասար վերաբերմունք աշխատանքի ոլորտում: Եվրոպական միության օրենսդրությամբ ևս սահմանվում են պարտադիր կանոններ (օրինակ՝ Հավասար վերաբերմունքի մասին հրահանգը[11], Հավասար վարձատրության/Վարձատրության թափանցիկության մասին հրահանգը[12], Հղի աշխատողների պաշտպանության մասին հրահանգը[13]), որոնք միջազգային լավագույն փորձի կարևոր աղբյուր են:

Այս փաստաթղթերից բխող՝ աշխատանքային հարաբերություններում կանանց տնտեսական արդարության հիմնական չափանիշներն են.

6 https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C183
7 https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C156
8 https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C189
9 https://normlex.ilo.org/dyn/nrmlx_en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C190
10 https://www.arlis.am/hy/acts/213821/latest
11 https://eur-lex.europa.eu/eli/dir/2006/54/oj/eng
12 https://eur-lex.europa.eu/eli/dir/2023/970/oj/eng
13 https://eur-lex.europa.eu/eli/dir/1992/85/2019-07-26/eng

- խտրականության արգելքը,
- համարժեք աշխատանքի համար հավասար վարձատրությունը,
- մայրության պաշտպանությունը,
- առողջության համար ոչ վնասակար և անվտանգ աշխատանքային պայմանները,
- աշխատանքի ոլորտում բռնության և ոտնձգության կանխարգելումը,
- աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հնարավորությունը,
- խնամքի աշխատանքի ճանաչումն ու պաշտպանությունը:


Խնամքի տնտեսությունը (Care economy)

Կանանց համար տնտեսական արդարության մեխանիզմների շարքում առանձնակի տեղ է գրավում **խնամքի տնտեսությունը**:

Խնամքի տնտեսությունը ներառում է ինչպես վարձատրվող, այնպես էլ չվարձատրվող աշխատանքը՝ երեխաների, տարեցների, առողջության խնդիրներ և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը, ինչպես նաև ընտանիքի և համայնքի բնականոն գործունեության համար անհրաժեշտ տնային գործերը:

Խնամքի աշխատանքները հիմնականում կատարում են կանայք, ինչն էականորեն ազդում է նրանց տնտեսական անկախության վրա: Չվարձատրվող խնամքի աշխատանքը սահմանափակում է աշխատաշուկայում և հանրային կյանքում նրանց մասնակցությունը, իսկ վարձատրվող խնամքի աշխատանքը հաճախ բնութագրվում է ցածր վարձատրությամբ և սոցիալական երաշխիքների բացակայությամբ:

Միջազգային չափորոշիչները հիմնված են, այսպես կոչված, 5 R շրջանակի վրա.



Աշխատանքի միջազգային կազմակերպությունը 2024 թվականին ընդունել է

արժանապատիվ աշխատանքի և խնամքի տնտեսության վերաբերյալ բանաձևը[14], որը սահմանում է խնամքի տնտեսության մեջ արժանապատիվ աշխատանքի հիմնարար սկզբունքները և ամրագրում ԱՄԿ-ի հանձնառությունը՝ խթանելու այս ոլորտում միջազգային չափորոշիչների վավերացումն ու կիրառումը:

ՀՀ ներպետական իրավունքը և քաղաքականությունը

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է խտրականության արգելքը, կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդվածներ 28–30), ինչպես նաև **աշխատանքի ազատ ընտրության իրավունքը** (հոդված 57): Սահմանադրությամբ արգելվում է մայրության հիմքով աշխատանքից ազատումը, իսկ հղիության և ծննդաբերության դեպքում նախատեսվում է վճարովի արձակուրդի իրավունք (հոդված 57):

ՀՀ աշխատանքային օրենսգրքով[15] լրացուցիչ ամրագրվում են կանանց տնտեսական արդարությանն առնչվող մի շարք դրույթներ.

- **Խտրականության արգելք** (հոդված 3.1). արգելվում է սեռի հիմքով և այլ սոցիալական հատկանիշներով պայմանավորված խտրականությունը:
- **Աշխատավայրում բռնության և սեռական ոտնձգության արգելք** (հոդված 3.3). արգելվում են բռնության և սեռական ոտնձգության բոլոր ձևերը:
- **Հավասար աշխատավարձի սկզբունք** (հոդված 178). կանայք և տղամարդիկ նույն կամ համարժեք աշխատանքի դիմաց իրավունք ունեն ստանալու նույն չափով վարձատրություն:
- **Հղիության և ծննդաբերության արձակուրդ** (հոդված 172). սահմանվում է 140–180 օր տևողությամբ վճարովի արձակուրդ՝ կախված ծննդաբերության հանգամանքներից:
- **Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ** (հոդված 173). մինչև երեք տարեկան երեխայի խնամքի նպատակով արձակուրդի իրավունք ունեն մայրը, հայրը կամ խնամակալը:
- **Հայրության արձակուրդ** (հոդված 176.1). նորածնի հայրը երեխայի ծնվելուց հետո 30 օրվա ընթացքում կարող է օգտվել հինգ աշխատանքային օր տևողությամբ վճարովի արձակուրդից:

Հարկ է նշել, որ օրենսգրքի կարգավորումները տարածվում են միայն գրանցված աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց վրա: Ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող՝ չգրանցված աշխատողները, ինչպես նաև խնամքի աշխատանքներում ներգրավված, սակայն աշխատանքային պայմանագիր չունեցող անձինք չեն օգտվում օրենսգրքով նախատեսված երաշխիքներից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը[16] խնամքի աշխատանքի արժևորման տեսանկյունից նախատեսում է որոշակի մեխանիզմներ: Այսպես, եթե անձն արդեն իսկ ունի կենսաթոշակ նշանակելու համար բավարար աշխատանքային ստաժ, ապա աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան երեխայի խնամքի ժամանակահատվածը և

14 https://www.ilo.org/sites/default/files/2024-07/ILC112-Resolution%20V-%7BRELMEETINGS-240620-001%7D-Web-EN_0.pdf

15 https://www.arlis.am/hy/acts/214702/latest

16 https://www.arlis.am/hy/acts/230043

մինչև երկու տարեկան երեխայի խնամքի ժամանակահատվածը՝ ոչ ավելի, քան 6 տարի: Միևնույն ժամանակ, աշխատանքային ստաժ չունեցող և ամբողջ կյանքում խնամքի և տնային աշխատանքներով զբաղված կանանց պարագայում խնամքի աշխատանքի ժամանակահատվածը չի հաշվառվում աշխատանքային ստաժում, և նրանք կարող են ստանալ միայն տարիքային կենսաթոշակ:

ՀՀ Կառավարության ռազմավարական փաստաթղթերում խնամքի աշխատանքի հարցը մասամբ է ներառված.

- **Գենդերային ռազմավարության գործողությունների ծրագիրը**[17] նախատեսում է չվարձատրվող աշխատանքի փոխհատուցման վերաբերյալ հետազոտությունների իրականացում, տղամարդկանց ներգրավվածության խթանում՝ ծննդաբերության և երեխայի խնամքի հարցերում համատեղ պատասխանատվության ամրապնդմանն ուղղված իրազեկման ծրագրերի միջոցով, նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավման աշխատանքներ, աշխատավայրերում ընտանիքահեն միջավայրի ապահովմանն ուղղված միջոցառումներ, ՀՀ աշխատանքային օրենսգրքում հնարավոր փոփոխություններ՝ սեռական ոտնձգությունից պաշտպանության մեխանիզմների ներդրմամբ, կանանց մուտքն աշխատաշուկա խթանող վերապատրաստման և խրախուսական ծրագրեր:
- **Զբաղվածության 2025-2031 թթ. ռազմավարական ծրագիրը**[18] որպես թիրախային խումբ առանձնացնում է 30-39 տարեկան չաշխատող կանանց և նախատեսում է մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, գործատուների համար հարկային խթաններ, գործատուների կողմից հիմնվող երեխայի խնամքի կենտրոնների պետական համաֆինանսավորում, ճկուն աշխատանքային ժամանակացույցերի կիրառման խթանում և կին ձեռներեցների համար աքսելերացիոն ծրագրեր:
- **ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների**[19] ռազմավարությունը որպես ռազմավարական նպատակ է սահմանում ընտանիքի բարեկեցությանը նպաստող միջավայրի ստեղծումը, այդ թվում՝ հղիության և երեխայի ծննդի կապակցությամբ աջակցությունը, երեխայի խնամքի արդյունավետ և համապարփակ համակարգի ձևավորումը՝ ուղղված մարդկային կապիտալի զարգացմանը և այլն:

Խնամքի հաստատությունների ապաինստիտուցիոնալացման համատեքստում վերջին տարիներին առանձնակի կարևորվում է նաև վարձատրվող խնամքի աշխատանք կատարողների վերաբերյալ պետական քաղաքականության մշակումը: Այդ ոլորտում աշխատողների մեծամասնությունը կանայք են, սակայն ոլորտին առնչվող միասնական քաղաքականություն չկա[20]:

Եզրակացություններ

ՀՀ օրենսդրությունն ու պետական քաղաքականությունը վերջին տարիներին լրացվել են մարդու իրավունքների չափորոշիչներից բխող մի շարք դրույթներով: Այսպես՝ խտրականության և սեռական ոտնձգության արգելքները սահմանվել են աշխատանքային օրենսգրքում, ներդրվել է հայրության արձակուրդի իրավունքը, մայրության արձակուրդի տևողությունը ՀՀ օրենսդրությամբ գերազանցում է միջազգային չափորոշիչներով սահմանված նվազագույնը: Այնուամենայնիվ, դեռևս առկա են լուրջ համակարգային բացեր, որոնց հաղթահարումն էական

17 https://www.arlis.am/hy/acts/206364/latest


18 https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVAB-CCC9-B9BB-9A7C/2083.1.pdf

19 https://www.arlis.am/hy/acts/198666/latest

20 https://www.ilo.org/sites/default/files/2024-11/Decent%20Work%20for%20Paid%20Care%20Workers%20in%20Armenia%20%282%29.pdf

նշանակություն ունի այս ոլորտում կանանց տնտեսական արդարության ապահովման տեսանկյունից: Այսպես.

- ՀՀ-ն չունի խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենսդրություն, իսկ այնպիսի հարցեր, ինչպիսիք են հավասարության մարմնի ստեղծումը, խտրականության դեպքերում ապացուցման բեռի բաշխման կանոնները[21], ոչ նյութական վնասի փոխհատուցման հնարավորությունը, կարգավորված չեն ՀՀ օրենսդրությամբ:
- Համարժեք աշխատանքի համար հավասար վարձատրության սկզբունքի ապահովման տեսանկյունից ՀՀ-ում բացակայում են աշխատանքի արժեքի գնահատման մեխանիզմները, վարձատրության թափանցիկության պահանջները, և քայլեր չեն ձեռնարկվում կարծրատիպերով պայմանավորված անհավասար վարձատրությունը մեղմելու ուղղությամբ[22]:
- Սեռական ոտնձգության կանխարգելմանն ուղղված դրույթները սահմանափակ են և հիմնականում հռչակագրային: Գործատուները չունեն պարտավորություն՝ ընդունելու ներքին քաղաքականություններ, նշանակելու ոտնձգության հարցերով պատասխանատու աշխատակիցների և ապահովելու սեռական ոտնձգության դեպքերի անաչառ և գաղտնի քննություն: Աշխատանքի տեսչական մարմինը չունի բավարար գործիքակազմ և ռեսուրսներ ոտնձգության դեպքերին արձագանքելու համար:
- Հղի և կրծքով կերակրող կանանց առողջության համար անվնաս և անվտանգ պայմանների ապահովման տեսանկյունից առկա են բացեր՝ պայմանավորված գործող համակարգի թերի ու հնացած լինելու հանգամանքով[23]:
- Հայրության արձակուրդի տևողությունն ընդամենը հինգ օր է, ինչը բավարար չէ կնոջ հետ նորածնի խնամքի պարտականությունների հավասար բաշխումն ապահովելու համար:
- Խնամքի աշխատանքն իրավական ճանաչում չունի, իսկ քաղաքականության փաստաթղթերում միայն հպանցիկ անդրադարձ է կատարվում խնամքի աշխատանքի բեռի կրճատման, ֆինանսավորման և վերաբաշխման հարցերին:
- Խնամքի ոլորտում աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական միասնական քաղաքականություն չկա:



21 Միջազգային չափորոշիչներով պահանջվում է, որ աշխատողի՝ առերևույթ (prima facie), խտրականության առկայությունը հիմնավորելուց հետո խտրականության բացակայության ապացուցման բեռը փոխանցվի գործատուին: Ներկայում ՀՀ-ում աշխատողն է կրում խտրականության փաստն ապացուցելու ամբողջ բեռը, ինչն անհամաչափ է և մեծ մասամբ՝ անիրագործելի:

22 Առավել մանրամասն տես https://tinyurl.com/2rjhv2w2

23 Առավել մանրամասն տես https://georgia.unwomen.org/sites/default/files/2023-04/AM-Healthy_and_Safe_Working_Conditions_for_Pregnant_and_Breastfeeding_Women.pdf

3 ԳՈՒՅՔԱՅԻՆ ԵՎ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ



Միջազգային մեխանիզմները և չափորոշիչները

Կանանց գույքային և ժառանգական իրավունքները միջազգային և եվրոպական իրավական համակարգերում դիտարկվում են որպես կանանց տնտեսական արդարության ապահովման առանցքային բաղադրիչ: Գույքային և ժառանգական հավասարությունը ոչ միայն իրավական, այլև սոցիալ-տնտեսական հավասարության նախապայման է՝ ուղղված կանանց տնտեսական հզորացմանն ու աղքատության վերացմանը:

Մարդու իրավունքների միջազգային չափորոշիչները հիմնականում ամրագրված են «կոշտ իրավունքի» (hard law) փաստաթղթերում, որոնց համաձայն՝ պետությունները պարտավոր են ապահովել կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը գույքային հարաբերություններում:

Այս իրավունքն ամրագրված է մի շարք հիմնական փաստաթղթերում.

- **«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի**[24] 23-րդ հոդվածը պահանջում է ամուսնալուծության դեպքում ապահովել ամուսինների հավասար իրավունքներն ու պարտականությունները:
- **«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան** ամրագրում է պետությունների պարտավորությունը՝ օրենքով երաշխավորելու կանանց և տղամարդկանց հավասարությունը քաղաքացիական և գույքային իրավունքների ոլորտում (հոդված 15) և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքները սեփականություն ձեռք բերելու, տնօրինելու, ժառանգելու և պահպանելու հարցերում (հոդված 16 (1)(գ), (հ)):

Միաժամանակ, որոշ կարևոր կարգավորումներ, որոնք անդրադառնում են բովանդակային հավասարությանը, մշակվել են «փափուկ իրավունքի» (soft law) փաստաթղթերում: Հատկապես նշանակալի են CEDAW կոմիտեի ընդհանուր հանձնարարականները (General Recommendations), որոնք մանրամասնորեն բացատրում են պետության գույքային և ժառանգական հավասարության ապահովմանն առնչվող պարտավորությունները.

- Ընդհանուր հանձնարարական **No 21 (1994)**[25] անդրադառնում է ամուսնական և ընտանեկան հարաբերություններում հավասար իրավունքներին՝ ընդգծելով ժառանգության և գույքի բաժանման հարցերում հավասարության ապահովման անհրաժեշտությունը:
- Ընդհանուր հանձնարարական **No 29 (2013)**[26] վերաբերում է ընտանեկան հարաբերությունների դադարեցմանն ու դրանց տնտեսական հետևանքներին:

Այստեղ կանդրադառնանք մի շարք իրավական չափորոշիչների, որոնք անհրաժեշտ են այս ոլորտում կանանց համար տնտեսական արդարության ապահովման տեսանկյունից:



Ամուսնության ընթացքում կանանց՝ ամուսնական սեփականությանը հավասար հասանելիության ապահովումը

Կանայք պետք է հնարավորություն ունենան հավասարապես օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրենց ամուսնական սեփականությունը: CEDAW Կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) նշում է, որ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության ռեժիմի կիրառումը կարևոր քայլ է կանանց տնտեսական իրավունքների պաշտպանության համար: Այն

24 https://www.arlis.am/hy/acts/18500

25 https://www.refworld.org/legal/general/cedaw/1994/en/61456

26 https://docs.un.org/en/CEDAW/C/GC/29

ընդգծում է պետության պարտավորությունը՝ ապահովելու, որ պետական գրանցման փաստաթղթերում կինը ևս նշվի որպես գույքի համատեղ սեփականատեր, և/կամ համատեղ սեփականության օտարման դեպքում պարտադիր պահանջվի նրա համաձայնությունը:



Ամուսնալուծության հետևանքները և ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի հավասար և արդար բաժանումը

Կոմիտեի No 29 ընդհանուր հանձնարարականում ընդգծվում է, որ պետությունը պետք է երաշխավորի, որ ամուսնալուծության տնտեսական հետևանքները երկու կողմերը կրեն հավասարապես, և հարաբերությունների ընթացքում դերերի բաշխումը բացասաբար չանդրադառնա որևէ կողմի տնտեսական վիճակի վրա:

Ամուսնական գույքը բաժանելիս անհրաժեշտ է գնահատել ոչ միայն ուղղակի և գույքային ներդրումները (օրինակ՝ գույքի ձեռքբերման, պահպանման կամ բարելավման համար ներդրված եկամուտները), այլև անուղղակի և ոչ գույքային ներդրումները: Վերջիններիս շարքին են դասվում տնային տնտեսության վարման և ընտանիքի խնամքի աշխատանքները (երեխաների, տարեցների խնամք, տնային գործեր), կորցրած տնտեսական հնարավորությունները (աշխատանքի կամ եկամտի հնարավորություններ, որոնցից կինը հրաժարվել է խնամքի կամ ընտանեկան պարտականությունների պատճառով), ինչպես նաև նյութական և ոչ նյութական ներդրումները՝ ուղղված ամուսիններից յուրաքանչյուրի մասնագիտական առաջխաղացմանը կամ մարդկային կապիտալի զարգացմանը (օրինակ՝ կրթություն ստանալու կամ մասնագիտական առաջխաղացման համար ցուցաբերվող աջակցություն, սոցիալական կապերի ստեղծում, հոգեբանական և բարոյական աջակցություն): Ամուսնալուծությունից հետո նախկին ամուսնուն կամ կնոջը վճարվող ապրուստավճարը (alimony) Կոմիտեն դիտարկում է որպես ֆինանսական հետևանքների հավասար բաշխումն ապահովող միջոց:



Չգրանցված փաստացի միություններում խտրականության բացառումը և տնտեսական իրավունքների պաշտպանությունը

Կոմիտեն իր No 29 ընդհանուր հանձնարարականում անդրադարձել է նաև փաստացի միություններին (de facto unions)՝ նշելով, որ դրանց ճանաչման իրավական կարգավորումների բացակայության դեպքում համատեղ կյանքի դադարեցումից հետո կանայք բախվում են տնտեսական ռիսկերի: Դա հատկապես վերաբերում է այն կանանց, որոնք ներդրում են կատարել տնային տնտեսության վարման կամ ունեցվածքի ձևավորման գործում: Սրա առնչությամբ Կոմիտեն շեշտել է, որ փաստացի միություններում խտրականության բացառման պահանջը բխում է պետության՝ Կոնվենցիայի 16-րդ հոդվածով ամրագրված պարտավորություններից:

CEDAW կոմիտեն Հայաստանի վերաբերյալ **2022** թվականի իր եզրափակիչ դիտարկումներում[27] նշել է, որ Հայաստանը պարտավոր է ապահովել բոլոր ամուսնությունների քաղաքացիական գրանցումը և ձեռնարկել օրենսդրական բարեփոխումներ՝ չգրանցված ամուսնության և փաստացի միության մեջ գտնվող կանանց, ինչպես նաև այդ միություններից ծնված երեխաների իրավունքները պաշտպանելու նպատակով Կոմիտեի No 29 (2013 թ.) ընդհանուր մեկնաբանության համապատասխան:



Ժառանգության իրավունքը և այրիների նպաստները

Կոմիտեն ընդգծել է կանանց՝ հավասար ժառանգական իրավունքի ապահովման, ինչպես նաև սոցիալական ապահովության վճարների (կենսաթոշակների և անաշխատունակության նպաստների) և պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգերի շրջանակում ողջ մնացած ամուսնու/կնոջ (survivor-

27 https://docs.un.org/en/CEDAW/C/ARM/CO/7

ship) իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, հատկապես այն երկրներում, որտեղ զույգերը հարաբերությունների ընթացքում զգալի վճարումներ են կատարում այդ համակարգերում:

Պետությունները պարտավոր են ապահովել այրիներին նպաստների տրամադրման հարցում կանանց և տղամարդկանց հավասարությունը, ինչը բխում է նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի[28] (հոդված 16) և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության 1-ին հոդվածի[29] դրույթներից:

Այս ուղղությամբ առանցքային է նաև ՄԻԵԴ-ի «**Marckx v. Belgium**» **(1979)**[30] գործը, որով Դատարանը հաստատեց, որ ժառանգության և սեփականության ոլորտում ծնողների ամուսնական կարգավիճակով պայմանավորված տարբերակված վերաբերմունքը խախտում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի և Առաջին արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված՝ սեփականության պաշտպանության իրավունքները:

ՀՀ ներպետական իրավունքը և քաղաքականությունը

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրվում է սեփականության իրավունքը: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է կանանց և տղամարդկանց՝ հավասար հիմունքներով ժառանգման իրավունքը:

Ամուսինների սեփականության իրավական կարգավորումները

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[31] 201-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է: Բացառություն են.

- ✓ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի՝ նվեր կամ ժառանգություն ստացած գույքը,
- ✓ մինչև ամուսնությունը նրանցից յուրաքանչյուրին պատկանած գույքը:

Ընդհանուր համատեղ սեփականության ռեժիմը կարող է փոփոխվել նաև ամուսնական պայմանագրով, որը կարող է կնքվել ինչպես մինչև ամուսնությունը, այնպես էլ ամուսնության ընթացքում:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի[32] 18-րդ հոդվածի համաձայն՝ գույքի նկատմամբ ամուսինների իրավունքներն իրավական ուժ ունեն, նույնիսկ եթե այդ իրավունքներն առանձին չեն գրանցվել: ՀՀ քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ համատեղ սեփականություն հանդիսացող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝ անկախ նրանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը: Սա նշանակում է, որ եթե նույնիսկ որպես տան կամ հողի կամ որևէ այլ գույքի սեփականատեր է գրանցված միայն ամուսինը, ապա այն վաճառելիս, նվիրելիս կամ որևէ այլ գործարք կատարելիս կնոջ համաձայնությունը պարտադիր է:

Գործնականում, սակայն, եղել են դեպքեր, երբ համատեղ գույքը գրանցված է եղել միայն ամուսնու անունով և օտարվել է առանց կնոջ գիտության և

28 https://www.arlis.am/hy/acts/24230
29 https://www.arlis.am/hy/acts/20870
30 https://hudoc.echr.coe.int/fre?i=001-57534
31 https://www.arlis.am/hy/acts/210215
32 https://www.arlis.am/hy/acts/204832

համաձայնության[33]: Նման դեպքերում կանայք ստիպված են եղել դատական կարգով վիճարկել գործարքի օրինականությունը, սակայն միշտ չէ, որ հնարավոր է եղել վերադարձնել գույքը և վերականգնել իրենց իրավունքը:

Ներկայում, միասնական էլեկտրոնային շտեմարանների հասանելիության պայմաններում անշարժ գույքի վերաբերյալ նոտարական գործարք կնքելիս նոտարները հիմնականում ստուգում են ամուսնության գրանցման փաստը և պահանջում կնոջ համաձայնությունը նախքան օտարման գործարք կնքելը: Այնուամենայնիվ, գույքի այլ տեսակները, ինչպես, օրինակ՝ ավտոմեքենան, դրամական միջոցները[34] կամ առևտրային կազմակերպությունում բաժնեմասը[35], ավելի հեշտ է օտարել առանց կնոջ համաձայնության:

Ամուսնալուծության հետևանքները

ՀՀ օրենսդրությունը ամուսնական գույքի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության ռեժիմի և հավասար բաժանման կանխավարկածի ամրագրմամբ արդեն իսկ անուղղակիորեն ճանաչում է ամուսինների հավասար ներդրումը ամուսնական սեփականության ձևավորման հարցում: Այնուամենայնիվ, օրենսդրության մեջ հստակ չի արտացոլվում ոչ դրամական, անուղղակի ներդրումների դերը:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականություն, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալիորեն ավելացրել են այդ գույքի արժեքը (հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն): Այսպիսով՝ ՀՀ օրենսդրությունը որպես ներդրում է դիտարկում դրամական ներդրումները, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանը՝ նաև գույքի վերանորոգմանն ու վերակառուցմանն ուղղված ֆիզիկական աշխատանքը[36]: Միևնույն ժամանակ գույքի ամենօրյա խնամքը, որի բացակայության պարագայում այն տարիների ընթացքում կարող էր զգալիորեն կորցնել իր արժեքը, չի համարվում ներդրում: Օրինակ՝ եթե ամուսինները երկու տասնամյակ բնակվել են ամուսնու ժառանգած բնակարանում, ապա ամուսնալուծության դեպքում կինը չի կարող պահանջ ներկայացնել այդ գույքի նկատմամբ, թեև նրա՝ տարիներ շարունակ խնամքի շնորհիվ պահպանվել կամ նույնիսկ ավելացել է գույքի արժեքը:

Համեմատության համար կարելի է վկայակոչել նույն իրավական ավանդույթն ունեցող Ուկրաինայի լավագույն փորձը, որի ընտանեկան օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն, եթե ամուսիններից մեկն իր աշխատանքով կամ դրամական միջոցներով ներդրում է ունեցել մյուս ամուսնու գույքի պահպանման ու կառավարման մեջ, ապա այդ գույքից ստացվող եկամուտները կարող են ճանաչվել ամուսինների համատեղ սեփականություն[37]:

33 Սույն գործով ամուսինը վաճառել է ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող բնակարանը երրորդ անձի առանց կնոջ գիտության և համաձայնության: Սակայն կնոջը չի հաջողվել գործարքն անվավեր ճանաչել, քանի որ չի կարողացել ապացուցել, որ գնորդը տեղյակ էր վաճառողի՝ ամուսնացած լինելու մասին, https://www.arlis.am/hy/acts/97911

34 Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թեև ամուսինը առանց կնոջ համաձայնության վաճառել է իրենց համատեղ սեփականություն հանդիսացող հինգ ավտոմեքենաները, սակայն քանի որ կինը չի կարողացել ապացուցել, որ վաճառքից ստացված գումարը դեռևս առկա է և չի ծախսվել ընտանիքի ընդհանուր կարիքների համար, ուստի այդ գումարի նկատմամբ որևէ պահանջ չի կարող ներկայացնել, https://www.arlis.am/hy/acts/103224

35 Սույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համատեղ սեփականության իրավունքը տարածվում է միայն ՍՊԸ-ի բաժնեմասից ստացվող եկամուտների վրա, սակայն ամուսինը կարող է միանձնյա օտարել բաժնեմասը առանց կնոջ համաձայնության և գիտության, https://www.arlis.am/hy/acts/161673

36 Տե՛ս, օրինակ, «Ռուզաննա Խաչիկյանն ընդդեմ Անդրե Ջելոյանի»՝ համատեղ սեփականատեր ճանաչելու պահանջի վերաբերյալ գործը, https://www.arlis.am/hy/acts/57953

37 https://zakon.rada.gov.ua/laws/show/2947-14?lang=en&utm_source#Text

Ժառանգության իրավունքը և այրիների նպաստները

ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանվում է, որ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի, իսկ դրա բացակայության դեպքում՝ ըստ օրենքի: Ըստ օրենքի ժառանգության դեպքում առաջին հերթին ժառանգներն են երեխաները, ամուսինը/կինը և ծնողները, որոնց միջև հավասարապես բաժանվում է մահացածի գույքը՝ նախապես առանձնացնելով ընդհանուր սեփականության՝ կնոջը պատկանող մեկ երկրորդ մասը: Կտակի առկայության դեպքում գործում է ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը, որի համաձայն՝ 60 տարին լրացած կամ անաշխատունակ կամ հաշմանդամություն ունեցող կինը կամ երեխաները, անկախ կտակի բովանդակությունից, իրավունք ունեն ստանալու ըստ օրենքի իրենց հասանելիք բաժնի առնվազն կեսը:

ՀՀ օրենսդրությամբ լիարժեքորեն արտացոլված չէ ողջ մնացած ամուսնու նպաստի (**survivorship benefit)** հարցը: Կերակրողին կորցնելու նպաստը նշանակվում է միայն այն ամուսնուն/կնոջը, որը խնամում է մահացածի մինչև 14 տարեկան երեխային, իսկ կենսաթոշակ՝ միայն կենսաթոշակային տարիքի չաշխատող կամ հաշմանդամություն ունեցող ամուսնուն: Կուտակային կենսաթոշակները ամսական վճարների (ամուսնական անուիտետի) տեսքով վճարվում են ողջ մնացած ամուսնուն մինչև նրա կյանքի վերջը: Սա սահմանափակ մոտեցում է՝ միջազգային չափորոշիչների համեմատ, որոնք պահանջում են ապահովել այրիների սոցիալական պաշտպանությունը անկախ նրանց զբաղվածությունից:

Չգրանցված փաստացի միությունները

ՀՀ քաղաքացիական և ընտանեկան օրենսդրությունը չի կարգավորում փաստացի միությունների հետ կապված հարաբերությունները: Դրանց համար գրանցման ընթացակարգեր կամ հատուկ իրավական ռեժիմ նախատեսված չէ: Փաստացի միությունների արդյունքում համատեղ սեփականություն չի ձևավորվում, նրանք չունեն ունեցվածքի բաժանման կամ ժառանգման իրավունք: Բացառություններից է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով[38] նախատեսված կարգավորումը, որի համաձայն՝ պատերազմական իրավիճակում զոհված զինծառայողի կյանքի համար նախատեսված հատուցումը ստանալու իրավունք ունի նաև նրա կինը, այդ թվում՝ փաստացի զուգընկերը, եթե նրանք ունեն ընդհանուր երեխա:

Փաստացի միությունների դադարեցումից հետո կանայք հաճախ մնում են առանց ֆինանսական միջոցների, նրանց կատարած խնամքի աշխատանքը որևէ կերպ չի փոխհատուցվում, նրանք իրավունք չունեն որևէ բաժին ստանալու բնակարանից կամ զուգընկերոջ մահից հետո ժառանգելու նրա գույքը: Այս իրավիճակում են նաև նույնասեռ զույգերը, քանի որ ՀՀ օրենսդրությունը չի ճանաչում նույնասեռ ամուսնությունները:

38 https://www.arlis.am/hy/acts/201280/latest

Եզրակացություններ

Միջազգային և եվրոպական իրավական չափորոշիչների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև Հայաստանում օրենսդրորեն ամրագրված է կանանց և տղամարդկանց հավասարությունը գույքային և ժառանգական իրավունքներում, մի շարք գործնական բացեր խոչընդոտում են այդ հավասարության լիարժեք իրագործումը:

- Միջազգային չափորոշիչների տեսանկյունից CEDAW-ի No 29 ընդհանուր հանձնարարականը պահանջում է ամուսնալուծության դեպքում գնահատել կանանց ոչ դրամական ներդրումները՝ տնային և խնամքի աշխատանքը, կրթություն ստանալու կամ մասնագիտական առաջխաղացման համար ցուցաբերվող աջակցությունը: Հայաստանը դեռևս չունի այս ներդրումների իրավական ճանաչման մեխանիզմներ:
- Փաստացի միությունների իրավական կարգավորումը ՀՀ-ում բացակայում է: Եվրոպական շատ երկրներ, մասնավորապես՝ Ֆրանսիան, Նորվեգիան և Նիդերլանդները, ապահովում են գույքային և սոցիալական նվազագույն պաշտպանություն փաստացի միությունում գտնվող անձանց համար: Հայաստանում դրանց բացակայությունը հակասում է Կոնվենցիայի 16-րդ հոդվածի և CEDAW կոմիտեի հանձնարարականների պահանջներին:
- Ժառանգական հավասարության ոլորտում, թեև ՀՀ օրենսդրությունը հիմնականում ապահովում է ըստ օրենքի ժառանգման հավասարություն, սոցիալական ապահովության համակարգում ողջ մնացած ամուսնու իրավունքները սահմանափակ են, քանի որ կախված են ամուսնության իրավական կարգավիճակից և անձի զբաղվածությունից: Սա հակասում է CEDAW-ի մոտեցմանը, ըստ որի՝ պետությունը պետք է ապահովի հավասար իրավունքներ նաև չաշխատող կամ խնամքի աշխատանք կատարող կանանց համար:



4 ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ



Միջազգային մեխանիզմները և չափորոշիչները

Հարկային համակարգը մարդու իրավունքների իրացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հիմնական աղբյուրն ու տնտեսական արդարության ապահովման առանցքային գործիքն է: Սակայն մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում հարկային քաղաքականությանը հատուկ նվիրված հստակ նորմատիվ դրույթներ գրեթե չկան:

Հարկաբյուջետային (ֆիսկալ) համակարգը մարդու իրավունքների տեսանկյունից դիտարկելիս առանձնացվում են հարկային քաղաքականության չորս հիմնական գործառույթները՝ եկամուտի ձևավորում, վերաբաշխում, գնային կարգավորում և ներկայացվածություն (revenue, redistribution, repricing and representation)[39]: Կանանց տնտեսական արդարության տեսանկյունից կարևոր է գնահատել նաև դրանցից յուրաքանչյուրի՝ կանանց տնտեսական վիճակի վրա ունեցած առանձնահատուկ ազդեցությունը: Այսպես.

- Հարկային եկամուտները ձևավորվում են հարկահավաքման արդյունքում, և պետությունը դրանցով պետք է ֆինանսավորի մարդու իրավունքների իրացմանն ուղղված միջոցառումները, օրինակ՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության համակարգի ստեղծումը:
- Վերաբաշխումը հարկային համակարգի հնարավորություններից մեկն է՝ արդարացիորեն վերաբաշխելու հանրային բարիքները: Եկամուտների կամ հարստության նկատմամբ պրոգրեսիվ հարկերի կիրառումը հնարավորություն է տալիս ավելի շատ հարկելու խոշոր ընկերություններին և բարձր եկամուտ ունեցող անձանց, քան ցածր եկամուտ ունեցող անձանց և փոքր ձեռնարկություններին: Միևնույն ժամանակ ռեգրեսիվ հարկերը, ինչպիսիք են սպառման հարկերը, նույնն են բոլոր սպառողների համար՝ անկախ նրանց ֆինանսական կարողություններից: Այս դեպքում մարդու իրավունքների տեսանկյունից պետությունները հարկային քաղաքականությունը ձևավորելիս պարտավոր են հաշվի առնել հարուստների և աղքատների, կանանց և տղամարդկանց, խոցելի խմբերի կարիքները, և որ դրա կիրառումը չհանգեցնի խտրականության և չխոչընդոտի վերջիններիս իրավունքների իրացումը: Օրինակ՝ երեխաների խնամքի ծառայությունները, կանանց հիգիենայի պարագաները ԱԱՀ-ից ազատելը զգալիորեն նվազեցնում է կանանց տնտեսական բեռը:
- Գնային կարգավորումը հարկային արտոնությունների կամ բարձր հարկերի միջոցով որոշակի վարքագծի խրախուսումն է: Օրինակ՝ ծխախոտային արտադրանքի նկատմամբ ակցիզային հարկի կիրառումը նպաստում է դրա ավելի քիչ սպառմանը, իսկ կանանց ձեռներեցության խթանման նպատակով հարկային արտոնություններ սահմանելը կարող է նպաստել նրանց տնտեսական արդարության ապահովմանը:
- Ներկայացվածությունը հարկ վճարողների հնարավորությունն է՝ ազդելու իրենց հարկերի արդարացի օգտագործման վրա: Այս առումով մարդու իրավունքների չափանիշների կիրառումը երաշխավորում է ավելի թափանցիկ և մասնակցային հարկաբյուջետային քաղաքականության ձևավորումը, որտեղ պետք է ապահովվի կանանց տեսանելի մասնակցությունը:

Հարկերի արդարացի բաշխման հարցին անուղղակի հիշատակում կա «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածում, որը սահմանում է պետությունների պարտավորությունը՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր՝ իրենց հասանելի առավելագույն ռեսուրսների օգտագործմամբ՝ մարդու տնտեսական իրավունքների աստիճանական իրականացումն առանց խտրականության ապահովելու համար: Կոմիտեն

39 https://www.cesr.org/sites/default/files/2022/Taxes_Budgets_and_Human_Rights.pdf

պետության հիմնարար պարտավորությունների մասին իր No 24 ընդհանուր մեկնաբանությամբ[40] նշում է, որ մարդու իրավունքների իրացման վերաբերյալ պետության պարտավորությունները ներառում են նաև պրոգրեսիվ հարկային համակարգի ներդրումը:

Մարդու իրավունքների իրացման համար ֆինանսավորման աղբյուր լինելուց բացի՝ հարկային համակարգը նաև հաճախ անտեսանելի բացասական ազդեցություն է ունենում խոցելի խմբերի, այդ թվում՝ կանանց վրա անուղղակի հարկերի միջոցով, ինչպիսին ավելացված արժեքի հարկն (ԱԱՀ) է[41]: ԱԱՀ-ն ներառվում է ապրանքների կամ ծառայությունների արժեքի մեջ՝ ավելացնելով դրանց գինը, և այն վճարում է ապրանքի վերջնական սպառողը: Արդյունքում ԱԱՀ-ն հաճախ աննկատ է մնում, սակայն շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, այն ունի ամենամեծ բաժինը հավաքված հարկերի ընդհանուր ծավալում[42]:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինների եզրափակիչ դիտարկումների[43] հիման վրա առանձնացվել են հետևյալ քայլերը, որոնք պետությունները պետք է իրականացնեն հարկային քաղաքականության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությունն ու գենդերային հավասարությունն ապահովելու նպատակով.

- ապահովել պրոգրեսիվ և վերաբաշխիչ հարկային համակարգ, որպեսզի բարձր եկամուտ ունեցող անձինք և կազմակերպությունները վճարեն համաչափ ավելի մեծ բաժին/կրեն հարկային բեռ, իսկ ցածր եկամուտ ունեցող խմբերը՝ ներառյալ կանայք, չկրեն անհամաչափ հարկային բեռ,
- իրականացնել հարկային բարեփոխումների գենդերային ազդեցության գնահատում (gender impact assessment) հարկային փոփոխություններից առաջ և հետո,
- վերանայել անուղղակի հարկերի (օրինակ՝ ԱԱՀ, ակցիզներ) կառուցվածքը՝ նվազեցնելով դրանց ռեգրեսիվ բնույթը և ազդեցությունը «խնամքի զամբյուղի» (հիգիենայի, մանկական և խնամքի ապրանքների) գների վրա,
- ապահովել մայրության և խնամքի նպաստների՝ հարկումից ամբողջական ազատումը և դրանց լիարժեք հասանելիությունը,
- խրախուսել կանանց ձեռներեցությունը՝ հարկային արտոնությունների տրամադրման, շուկա մուտք գործելու արգելքների նվազեցման և պարզեցված հաշվառման միջոցով,
- ապահովել հարկային եկամուտների նպատակային օգտագործումը սոցիալական, խնամքի և առողջապահական ենթակառուցվածքների զարգացման նպատակով:

Վերջին տարիների հարկային համակարգերի արդարության շուրջ քննարկումներն ակտիվացել են: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD), որը միջազգային մակարդակում հարկային քաղաքականության շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերման հիմնական հարթակն է, 2022 թվականին հրապարակել է լայնածավալ հետազոտություն հարկային քաղաքականության և գենդերային հավասարության վերաբերյալ[44]: Միջազգային հարկային համագործակցության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են, և նախատեսվում է

40 https://www.refworld.org/legal/general/cescr/2017/en/122356

41 https://www.humanrightsresearch.org/post/the-price-of-inequality-why-tax-is-a-human-rights-issue

42 Մամիկոնյան Տիգրան, Հարկատեսակների կշիռը բյուջեի եկամուտների ձևավորման գործընթացում, «Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոն, https://tinyurl.com/3pax5avc

43 https://www.hrw.org/news/2025/06/26/human-rights-treaty-bodies-and-tax

44 https://www.oecd.org/en/publications/tax-policy-and-gender-equality_b8177aea-en/full-report/component-5.html#top

դրանք ավարտել 2027 թվականին[45]:

ԵՄ խորհրդարանի՝ գենդերային հավասարության և ԵՄ հարկային քաղաքականության մասին[46] 2019 թվականին ընդունած բանաձևը բավականին առաջադեմ է: ԵՄ խորհրդարանը նշում է, որ կանայք ավելի շատ ապրանքներ և ծառայություններ են գնում, քան տղամարդիկ, և արձանագրում է, որ ԵՄ հարկային քաղաքականության մեջ գենդերային ասպեկտը բավարար չափով հաշվի չի առնվել, ինչն անմիջականորեն ազդում է առկա անհավասարությունների վրա: Բանաձևն անդրադառնում է հարկային քաղաքականության խնդիրներին գենդերային հավասարության համատեքստում՝ ընդգծելով հատկապես.

- պրոգրեսիվ եկամտային հարկման համակարգի կարևորությունը և այն փոփոխելու անթույլատրելիությունը,
- եկամտային հարկման անհատական համակարգերի ձևավորման անհրաժեշտությունը՝ կիրառելով հարկային նվազեցումներ, հարկից ազատումներ կամ այլ միջոցներ, որոնք կնպաստեն կանանց և տղամարդկանց միջև վարձատրվող և չվարձատրվող աշխատանքի հավասար բաշխմանը,
- փոքր ձեռնարկություններին գենդերային հավասարությանը նպաստող հարկային արտոնությունների տրամադրումը,
- հարկային քաղաքականության վերանայումը և հավաքված հարկային եկամուտների ուղղումը կամ հարկային արտոնությունների կիրառումը երեխաների խնամքի ծառայությունների բարելավման նպատակով,
- ԱԱՀ-ի արտոնությունների և զրոյական դրույքաչափերի կիրառումը սոցիալական և առողջապահական նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների նկատմամբ, որոնցից կանայք ավելի շատ են օգտվում, ներառյալ խնամքի ծառայություններն ու ապրանքները,
- հարկային քաղաքականությունների փոփոխությունների գենդերային ազդեցության գնահատումը:

Այս մոտեցումներն արտացոլված են նաև ԵՄ կոշտ իրավունքի աղբյուրներում, մասնավորապես՝ ԵՄ ԱԱՀ համակարգի մասին հրահանգում[47]:

Այսպիսով՝ հարկային քաղաքականությունը պետք է դիտվի ոչ միայն որպես բյուջետային գործիք, այլև որպես սոցիալական և գենդերային արդարության քաղաքականություն, որը կարող է ուղղակիորեն ազդել կանանց տնտեսական անկախության և հավասար հնարավորությունների ապահովման վրա:

ՀՀ ներպետական իրավունքը և քաղաքականությունը

Եկամտային հարկի համակարգը

2019 թվականին Հայաստանը եկամտային հարկի պրոգրեսիվ հարկման համակարգից անցում կատարեց համահարթ հարկման համակարգի: Ներկայում եկամտային հարկի դրույքաչափը սահմանված է 20% բոլոր հարկատուների համար՝ անկախ նրանց եկամտի չափից կամ սոցիալական խոցելիությունից: Սա նշանակում է, որ հարկային բեռը հարաբերականորեն ավելի մեծ ազդեցություն ունի ցածր եկամուտ ունեցող

45 https://www.iisd.org/inside-un-tax-convention-negotiations?gad_source=1&gad_campaignid=22208053183&gbraid=0AAAADQ3eTDVl46EwSI-N37YKbQx73-wG&gclid=Cj0KCQjw9czHBhCyARIsAFZlN8RQgZ3mo6500kCATWeLcT4UW3kTGjCmcIjtaciB003g7p5uzRXNpZcaAr8iEALw_wcB

46 https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2019-0014_EN.html

47 https://eur-lex.europa.eu/eli/dir/2006/112/oj/eng

անձանց վրա, որոնց եկամտի զգալի մասը պարտադիր հարկ-ման ենթակա է:

Եկամտային հարկը գանձվում է նաև որոշ սոցիալական վճարներից, այդ թվում՝ մայրության նպաստից: ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է եկամտահարկի վերադարձ որոշ սոցիալական և առողջապահական ծախսերի դիմաց, սակայն վերադարձվող գումարները սահմանափակեն՝ տարեկան համապատասխանաբար մինչև 100 000 ՀՀ դրամ և 50 000 ՀՀ դրամ: Հարկային ամենամեծ արտոնությունը գործում է հիփոթեքային վարկերի տոկոսների դեպքում՝ նորակառույց բնակա-րանների ձեռքբերման համար, ինչի շնորհիվ որոշ վարձու աշխատողներ հնարավորություն ունեն հետ ստանալու իրենց վճարած եկամտահարկն ամբողջությամբ: Այս համակարգը, սակայն, ավելի շահավետ է միջին և բարձր եկամուտ ունեցող անձանց համար, քանի որ ցածր եկամուտ ունեցող կանայք և ընտանիքները հաճախ չեն կարողանում օգտվել հիփոթեքային վարկերից:

Անշարժ գույքի հարկ

2020 թվականին վերանայվեց նաև անշարժ գույքի հարկման համակարգը՝ պրոգրեսիվ մոտեցման տրամաբանությամբ: Այս հարկատեսակը վճարվում է համայնքային բյուջե, իսկ հարկի չափը հաշվարկվում է գույքի կադաստրային արժեքի հիման վրա: Նախկինում մինչև 3 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ գույքը ազատված էր հարկումից, սակայն 2022 թվականին այդ արտոնությունը վերաց-վեց, և ներկայում գրեթե բոլոր գույքերը հարկման ենթակա են՝ 0.05 %-ից մինչև 1.5 % դրույքաչափերով:

Թեև բարեփոխման նպատակն էր գույքի հարկը դարձնել ավելի արդարացի և բյուջետային կայուն եկամտի աղբյուր, այս փոփոխությունը հասարակության կողմից միանշանակ չընդունվեց[48]: Հատկապես Երևանի կենտրոնական վար-չական շրջաններում, որտեղ կադաստրային արժեքները չափազանց բարձր են, հարկային բեռը զգալիորեն աճել է: Այս պարագայում հարկման չափը որոշվում է ոչ թե ըստ սեփականատիրոջ եկամտի, այլ գույքի արժեքի, ինչը կարող է խնդիր-ներ առաջացնել տարեց կամ ցածր եկամուտ ունեցող բնակիչների համար, որոնց գույքը հին է, սակայն բարձր կադաստրային արժեք ունի:

Այս զարգացումները փաստում են, որ անշարժ գույքի հարկման համակարգը կա-րող է ունենալ սոցիալական և գենդերային ազդեցություններ՝ անուղղակիորեն ազդելով ցածր եկամուտ ունեցող ընտանիքների, այդ թվում՝ կանանց բնակարա-նային կայունության/ապահովության վրա:

Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)

ՀՀ օրենսդրությամբ ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանված է 20%: Մի շարք ծառայություններ, մասնավորապես՝ պետական և ոչ առևտրային խնամքի հաստատությունների մատուցած, ազատված են ԱԱՀ-ից: Դրանց թվում են մինչև 6 տարեկան երեխաների խնամքի կենտրոնները, հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի կենտրոնները, մանկատները և մեծահասակների խնամքի տուն-ինտերնատները: Տնային աշխատողների կողմից մատուցվող խնամքի ծառայությունները ԱԱՀ-ից ազատված ծառայությունների ցանկում ներառված չեն, սակայն նրանք կարող են աշխատել հատուկ հարկային ռեժիմով և չվճարել ԱԱՀ: Հարկային այդ ռեժիմի առանձնահատկությունները նկարագրված են ստորև:

Բժշկական ծառայությունները և բժշկական ու վերարտադրողական առողջության պահպանման մի շարք պարագաներ ազատված են ԱԱՀ-ից (օրինակ՝ երեխայի ծծակ, ներարգանդային պարույր, արգանդի օղակ): Միևնույն ժամանակ կրծքի կաթի փոխարինիչները, կանանց հիգիենայի միջոցները, ներդիրներն ու առաջնային խնամքի այլ պարագաներ չեն ազատվում ԱԱՀ-ից, ինչը անհամաչափ ֆինանսական բեռ է ստեղծում կանանց համար:

48 https://168.am/2020/09/09/1363911.html , https://www.opendemocracy.net/en/odr/armenia-new-proper-ty-tax-prompts-debate-about-social-justice/



Հատուկ հարկային ռեժիմներ

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են նաև հարկման պարզեցված ռեժիմներ՝ շրջանառության հարկ և միկրոձեռնարկատիրություն, որոնց դեպքում հարկ վճարողները ազատված են ԱԱՀ-ից և շահութահարկից:

Միկրոձեռնարկատիրության դեպքում տարեկան շրջանառության շեմը կազմում է 24 մլն դրամ (մոտ 2 մլն դրամ ամսական): Այս կարգավիճակը կարող են ունենալ նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող տնային աշխատողները:

Շրջանառության հարկման համակարգում դրույքաչափը տատանվում է 1%-ից մինչև 20%. ամենացածր տոկոսը/դրույքաչափը սահմանված է բարձր տեխնոլոգիաների, իսկ ամենաբարձրը՝ հանրային սննդի ոլորտի համար: Համակարգից օգտվելու համար տարեկան շրջանառությունը չպետք է գերազանցի 115 մլն դրամը: 2025 թվականից այս համակարգից դուրս են մնացել հաշվապահական, իրավաբանական և փաստաբանական ծառայությունները, ինչը հանգեցրել է ծառայությունների գների աճի: Սա հատկապես ազդում է փոքր ձեռնարկություն վարող կանանց վրա, որոնք չեն կարող օգտվել փաստաբանական և հաշվապահական թանկ ծառայություններից:



Գենդերային ազդեցության գնահատման բացակայությունը

Հայաստանի հարկային օրենսդրությամբ հարկային փոփոխությունների ընդունումից առաջ և հետո գենդերային ազդեցության գնահատում չի նախատեսվում: Եկամտահարկի համահարթ համակարգի ներդրումը, միկրոձեռնարկատիրության և շրջանառության հարկման արտոնությունների կրճատումը, ինչպես նաև գույքի հարկի բարձրացումը բացասական ազդեցություն ունեն կանանց տնտեսական վիճակի վրա: Այնուամենայնիվ, պետական մակարդակով այս ազդեցությունները չեն ուսումնասիրվել:

Բացի այդ՝ ՀՀ օրենսդրությամբ կին ձեռնարկատերերի համար հատուկ հարկային արտոնություններ նախատեսված չեն: Փոքր ձեռնարկությունների համար սահմանված արտոնությունները սահմանափակվում են միայն պարզեցված հարկային ռեժիմներով, որոնք ինքնին չեն ներառում գենդերային հավասարությունը խթանող տարրեր:

Եզրակացություններ

Հայաստանի հարկային համակարգը ձևակերպված է որպես չեզոք ֆինանսական գործիք, սակայն դրա կառուցվածքը և կիրառվող մոտեցումներն ունեն ակնհայտ գենդերային ազդեցություն: Համահարթ եկամտահարկը, գույքի հարկի փոփոխությունները և անուղղակի հարկերի մեծ բաժինը անհամաչափ հարկային բեռ են ստեղծում ցածր եկամուտ ունեցող կանանց համար:

Տնտեսական և գենդերային արդարության հասնելու համար հարկային քաղաքականությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես բյուջետային գործիք, այլև սոցիալական և հավասարության ապահովման քաղաքականություն: Պետությունը պետք է ներդնի գենդերային ազդեցության գնահատման մեխանիզմներ, վերականգնի պրոգրեսիվ հարկման սկզբունքը, ԱԱՀ-ի արտոնություններ ապահովի խնամքի և առողջապահական ծառայությունների համար և ստեղծի խթաններ կանանց ձեռներեցության համար:

Այդպիսի մոտեցումը հարկային համակարգը կդարձնի հավասարության ապահովման գործիք՝ նպաստելով կանանց տնտեսական անկախությանը, սոցիալական պաշտպանությանը և մարդու իրավունքների իրացմանը:

5 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանայք բախվել են բազմաշերտ սոցիալ-տնտեսական խնդիրների, որոնք պայմանավորված են ինչպես տեղահանությամբ, այնպես էլ գենդերային խոցելիությամբ: Այդ իսկ պատճառով նրանք պետք է դիտարկվեն որպես առանձնահատուկ կարիքներ ունեցող խումբ կանանց տնտեսական արդարության ապահովման համատեքստում:

ՀՀ օրենսդրությունը ներկայում չի պարունակում հատուկ կարգավորումներ, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց տնտեսական իրավունքների պաշտպանությանը: Տեղահանված անձանց տնտեսական իրավունքների ապահովման համատեքստում առանձնակի կարևոր է այն հանգամանքը, որ վերջիններս կորցրել են Լեռնային Ղարաբաղի տարածքում ունեցած իրենց ամբողջ գույքը, և ներկայում ՀՀ-ում նրանց տնտեսական իրավունքների իրացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ապահովության համակարգի շրջանակում: Այս համատեքստում 2023 թվականից ի վեր ՀՀ իշխանությունները պարբերաբար իրականացնում են օրենսդրական փոփոխություններ՝ արձագանքելով տեղահանվածների կարիքներին և ստեղծելով զբաղվածության, բնակարանային ապահովման, կենսաթոշակային և այլ սոցիալ-տնտեսական իրավունքների իրացման իրավական հիմքեր: Այս փոփոխությունները միտված են լուծելու այնպիսի գործնական խնդիրներ, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղի տվյալների շտեմարանների բացակայության պայմաններում աշխատանքային ստաժի ճանաչումը, ֆունկցիոնալության գնահատումը, կենսաթոշակների հաշվարկը և այլ սոցիալական հարցեր: Սակայն այս միջոցների արդարությունն ու գենդերազգայունությունը կարող են գնահատվել միայն կարիքների խորքային ուսումնասիրության հիման վրա:

Մարդու իրավունքների միջազգային իրավունքի տեսանկյունից հատկապես կարևորվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» No 1325 բանաձևի դրույթների իրականացման 2025-2027 թվականների գործողությունների երրորդ ազգային ծրագրի ընդունումը: Իրավական ակտերի հրապարակման պաշտոնական կայքում ծրագրի նախագծով[49] նախատեսվում են գործողություններ, որոնք ուղղված են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց և աղջիկների սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությանը և նրանց հզորացմանը՝ կարիքների գնահատման, մասնագիտական վերապատրաստումների, զբաղվածության ծրագրերի և իրավաբանական խորհրդատվության միջոցով: Չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2022 թվականին CEDAW կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում[50] ընդգծել էր այս ծրագրի ընդունման և պետական ֆինանսավորման առաջնահերթությունը, այն մինչ օրս չի ընդունվել, իսկ հրապարակված նախագծում պետական ֆինանսավորման բաղադրիչը բացակայում է:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ թեև առկա են առանձին քաղաքական և օրենսդրական նախաձեռնություններ, բռնի տեղահանված կանանց տնտեսական իրավունքների պաշտպանության ուղղությամբ ՀՀ-ում ձեռնարկվող միջոցները դեռևս մասնակի բնույթ ունեն, և չկա համակարգային մոտեցում: Չկա միասնական քաղաքական փաստաթուղթ, որը կանդրադառնա տեղահանմամբ պայմանավորված համակարգային խնդիրներին, իսկ տեղահանված կանայք ներառված չեն զբաղվածության և ժողովրդագրական ռազմավարություններում որպես առանձնահատուկ կարիքներ ունեցող խումբ: Սա հակասում է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի No 1325 բանաձևի դրույթներին, որոնք ընդգծում են պետության պարտավորությունը՝ ապահովելու կանանց հավասար մասնակցությունը և տնտեսական իրավունքների պաշտպանությունը խաղաղության, անվտանգության և վերականգնման բոլոր փուլերում:

49 https://www.e-draft.am/projects/8892/about

50 https://docs.un.org/en/CEDAW/C/ARM/CO/7

6 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



Վերոգրյալի հիման վրա ներկայացնում ենք կանանց տնտեսական արդարության ապահովմանն ուղղված իրավական և քաղաքականությանն առնչվող հետևյալ առաջարկները.

1. Վավերացնել ԱՄԿ-ի No 156 (Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների մասին), No 183 (Մայրության պաշտպանության մասին) և No 189 (Տնային աշխատողների մասին) կոնվենցիաները որպես կանանց համար տնտեսական արդարության ապահովման առանցքային նախապայմաններ:
2. Ապահովել ԱՄԿ-ի No 190 (Բռնության և ոտնձգության մասին) կոնվենցիայի լիարժեք կիրարկման օրենսդրական հիմքերը՝ ներառյալ գործատուների պարտավորությունները, վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմները:
3. Ընդունել խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենսդրություն:
4. Ստեղծել համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության ապահովման մեխանիզմներ՝ ներառյալ աշխատանքի արժեքի չեզոք գնահատումն ու աշխատավարձերի թափանցիկության կարգավորումները:
5. Ընդունել աշխատավայրում ոտնձգության և բռնության կանխարգելմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ և բարելավել դրանց կիրարկման մեխանիզմները:
6. Խթանել աշխատանքի և ընտանեկան պարտականությունների համատեղումը՝ հայրության արձակուրդի տևողության երկարացման և ճկուն աշխատանքային ժամանակացույցերի ներդրման միջոցով:
7. Օրենսդրորեն ճանաչել չվարձատրվող խնամքի աշխատանքի ժամանակահատվածը որպես աշխատանքային ստաժ՝ առանց տարիների սահմանափակման և աշխատանքային այլ փորձի պահանջի:
8. Մշակել խնամքի աշխատանքի արժանապատիվ փոխհատուցման և սոցիալական ապահովության երաշխիքների ապահովմանն ուղղված քաղաքականություն:
9. Պետական մակարդակով ներդնել երեխայի խնամքի ծառայությունների ընդլայնման ծրագիր:
10. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածում ամրագրել, որ չվարձատրվող խնամքի աշխատանքը, տնային տնտեսության կառավարումը, կորցրած տնտեսական հնարավորությունները, ինչպես նաև մարդկային կապիտալի զարգացմանը նպաստող աջակցությունը համարվում են «ներդրում» ամուսնական սեփականության ձևավորման և/կամ դրա արժեքի աճի գործում:
11. Մշակել փաստացի միությունների ճանաչման ընթացակարգ՝ նախատեսելով ավելի քան 5 տարի փաստացի միությունում գտնվող զույգերի համար նվազագույն գույքային և սոցիալական երաշխիքներ ամուսնալուծության/փաստացի միության դադարեցման և ժառանգման դեպքում:
12. Ներդնել Գենդերային ազդեցության գնահատման (Gender Impact Assessment) պարտադիր պահանջ՝ հարկային քաղաքականության բոլոր փոփոխությունների և նոր նախաձեռնությունների համար: Գնահատման մեթոդաբանությունը պետք է ներառի եկամտային տարբերությունների, խնամքի պարտականությունների և սպառման տարբեր ձևերի վերլուծություն՝ ըստ սեռի:
13. Վերադառնալ պրոգրեսիվ եկամտահարկի սկզբունքին՝ ցածր եկամուտ ունեցող անձանց, հատկապես կանանց հարկային բեռը նվազեցնելու համար:
14. Ապահովել, որ բարձր եկամուտ ունեցող խոշոր ընկերությունները կրեն համաչափ հարկային բեռ, իսկ հարկային եկամուտներն ուղղվեն սոցիալական և խնամքի ծառայությունների զարգացմանը:
15. Նվազեցնել ԱԱՀ-ի ռեգրեսիվ ազդեցությունը՝ ԱԱՀ-ից ազատելով խնամքի, մանկական, առողջապահական և կանանց հիգիենայի ապրանքները:
16. Կանանց ձեռներեցության խթանման նպատակով սահմանել հարկային արտոնություններ փոքր ձեռնարկատիրության, տնային աշխատանքի և սոցիալական ձեռնարկատիրության ոլորտներում:

ԿԱՆԱՆՑ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գոհարիկ Տիգրանյան
Սոցիալական և գենդերային հիմնահարցերով հետազոտող, ԵՊՀ դասախոս



1 ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հետազոտությունն ուսումնասիրում է Հայաստանում կանանց տնտեսական արդարության ապահովումը խոչընդոտող ինստիտուցիոնալ, սոցիալ-մշակութային և գործնական գործոնները: Հետազոտության նպատակն է վերհանել այն պայմանները, սահմանափակումները և անհավասարությունները, որոնք ազդում են կանանց տնտեսական մասնակցության, ֆինանսական ինքնավարության, աշխատանքի հասանելիության, գույքային անվտանգության, խնամքի բեռի և որոշումների կայացման հնարավորությունների վրա:

Հետազոտությունը հիմնված է խառը մեթոդաբանության վրա՝ համադրելով փաստաթղթային վերլուծությունը, խորքային և փորձագիտական հարցազրույցները, ֆոկուսխմբային քննարկումները և 206 կանանց շրջանում հավաքված քանակական տվյալները: Որակական բաղադրիչը ներառել է 31 խորքային հարցազրույց, 9 փորձագիտական հարցազրույց և 3 ֆոկուսխմբային քննարկում, իսկ քանակական տվյալները ծառայել են որպես լրացուցիչ վերլուծական շերտ՝ որակական արդյունքները ավելի լայն սոցիալական համատեքստում դիտարկելու համար:

Վերլուծությունը կառուցվել է չորս հիմնական չափումների հիման վրա՝ հասանելիություն, նորմեր, ճանաչում և վերահսկողություն: Այս շրջանակը թույլ է տվել կանանց տնտեսական արդարությունը դիտարկել ոչ միայն որպես աշխատանքի կամ եկամտի հասանելիության հնարավորություն, այլև ռեսուրսների նկատմամբ վերահսկողության, չվարձատրվող աշխատանքի ճանաչման, սոցիալական նորմերի ազդեցության և որոշումների կայացման հնարավորությունների համադրություն:

Հետազոտությունը փաստում է, որ Հայաստանում կանանց տնտեսական արդարության խնդիրը բազմաշերտ է և ձևավորվում է ֆորմալ իրավահավասարության և կանանց առօրյա փորձառությունների միջև առկա խզման հետևանքով: Չնայած օրենսդրական երաշխիքներին՝ կանանց տնտեսական մասնակցությունը գործնականում սահմանափակվում է չվարձատրվող խնամքի բեռով, տարածքային անհավասարություններով, գույքային և ֆինանսական անապահովությամբ և միջավայրում առկա գենդերային կանխակալություններով, ինչն առավել սուր է դրսևորվում մարզերում: Այս անարդարությունը շղթայաբար խորանում է խաչվող խոցելիություններ ունեցող խմբերի (տեղահանված կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, միայնակ մայրերի, այրիների, ԼԲՏՔ+ անձանց և այլն) շրջանում, երբ խնդրին ավելանում են նաև բնակարանային անկայունությունն ու ընտանեկան/համայնքային վերահսկողությունը: Ուստի միայն իրազեկման կամ բիզնես աջակցության ծրագրերը բավարար չեն. անհրաժեշտ է համակարգային և կառուցվածքային մոտեցում՝ ուղղված խնամքի բեռի նվազեցմանը, գույքային իրավունքների պաշտպանությանը, ֆինանսական ներառականությանը և շահակիրների՝ ծառայություններին արդյունավետ ուղղորդմանը:

2 ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ



Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանում կանանց տնտեսական արդարության ապահովումը խոչընդոտող ինստիտուցիոնալ, սոցիալ-մշակութային և գործնական գործոնները՝ վերհանելով այն պատճառահետևանքային կապերը, որոնք հանգեցնում են ֆորմալ իրավունքների ու քաղաքականությունների և կանանց իրական տնտեսական հնարավորությունների միջև առկա խզմանը (gap):

Հետազոտության խնդիրներն են՝

1. Վերլուծել կանանց տնտեսական իրավունքներին, զբաղվածությանը, սոցիալական պաշտպանությանը, ինչպես նաև գույքային և ժառանգության իրավունքներին վերաբերող օրենսդրական ու քաղաքական դաշտը՝ նպատակ ունենալով նույնականացնելու ֆորմալ երաշխիքների և գործնական կիրառության միջև առկա ինստիտուցիոնալ խզումները (policy-practice gaps):
2. Ուսումնասիրել կանանց տնտեսական մասնակցությունը սահմանափակող հիմնական խնդիրները՝ կենտրոնանալով աշխատաշուկայի, սեփական եկամուտների ձևավորման, ֆինանսների ու վարկերի հասանելիության, սեփականության իրավունքի և խնամքի չվարձատրվող աշխատանքի և դրանով պայմանավորված՝ ժամանակի աղքատության վրա:
3. Գնահատել գենդերային կարծրատիպերի, ընտանեկան ու համայնքային ավանդական վերահսկողության, ինչպես նաև արմատացած սոցիալական նորմերի ազդեցությունը կանանց տնտեսական անկախության և ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողության վրա:
4. Ուսումնասիրել կանանց տնտեսական աջակցությանն ուղղված պետական, հասարակական և միջազգային նախաձեռնություններն ու ծառայությունները և դրանց հիման վրա մշակել առաջարկներ՝ առկա մեխանիզմներն ու քաղաքականությունները բարելավելու համար:

3 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը հիմնված է խառը մեթոդաբանության վրա՝ համադրելով փաստաթղթային վերլուծությունը, փորձագիտական և խորքային հարցազրույցները և 206 կանանց շրջանում հավաքված քանակական տվյալները:

Հետազոտության առաջին փուլում իրականացվել է Հայաստանի օրենսդրական և քաղաքական միջավայրի ուսումնասիրություն կանանց զբաղվածության, սոցիալական պաշտպանության և ձեռներեցության համատեքստում: Ուսումնասիրվել են պետական առանցքային ռազմավարությունները, մասնավորապես՝ «Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագիրը» (ՀՀ Կառավարություն, 2024), «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը» (ՀՀ Կառավարություն, 2025), ինչպես նաև «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը» (ՀՀ Կառավարություն, 2020): Վերլուծությունը կենտրոնացել է աջակցության մեխանիզմների, խնամքի նպաստների և բարեփոխումների վրա՝ վերհանելու այն բացերը, որոնց հետևանքով պաշտոնական քաղաքականությունը լիարժեքորեն չի վերածվում գործնական հնարավորությունների:

Հետազոտության երկրորդ՝ գործնական փուլում կիրառվել են որակական տվյալների հավաքման երեք հիմնական մեթոդներ:



Խորքային հարցազրույցներ շահառուների հետ (n=31): Սոցիալ-տնտեսական տարբեր պայմաններ և տարածաշրջանային առանձնահատկություններ ունեցող կանանց հետ անցկացվել են կիսակառուցվածքային հարցազրույցներ՝ ապահովելով աշխարհագրական և ժողովրդագրական համակողմանի ընդգրկվածություն: Քննարկումները կենտրոնացել են տնտեսական հնարավորությունների, ռեսուրսների և ֆինանսների

հասանելիության, աշխատանքային փորձառությունների, ինչպես նաև սոցիալական կարծրատիպերի ազդեցության վրա:



Փորձագիտական հարցազրույցներ (n=9): Ինստիտուցիոնալ միջավայրը ուսումնասիրելու նպատակով անցկացվել են կիսակառուցվածքային հարցազրույցներ առանցքային շահագրգիռ կողմերի հետ: Փորձագիտական համակազմում ներգրավվել են պետական կառույցների, բանկային ոլորտի, միջազգային կազմակերպությունների և մարզային ՀԿ-ների (այդ թվում՝ կանանց աջակցության և մարդու իրավունքների ոլորտի) ներկայացուցիչներ: Այս հարցազրույցներն ուղղված են եղել համակարգային խոչընդոտների, ծառայությունների մատուցման բացերի և գենդերային քաղաքականության իրականացման խնդիրների վերլուծությանը:



Ֆոկուսխմբային քննարկումներ (n=3): Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում անցկացվել են երեք քննարկումներ, որոնց մասնակցել է 16 կին: Այս ձևաչափը ծառայել է անհատական հարցազրույցների արդյունքները համայնքային մակարդակում համադրելու և խորացնելու նպատակին: Խմբային դինամիկան հնարավորություն է տվել դիտարկելու այն սոցիալական նորմերը, համայնքային ընկալումներն ու հավաքական փորձառությունները, որոնք դժվարությամբ են ի հայտ գալիս առանձնազրույցների ընթացքում:



Քանակական տվյալների համադրում: Որակական արդյունքները լրացնելու նպատակով հետազոտությանը հավելվել են 206 կանանց շրջանում հավաքված քանակական տվյալներ: Այս բաղադրիչը չի փոխարինել որակական վերլուծությանը, այլ ծառայել է որպես լրացուցիչ փաստարկային շերտ՝ հիմնական թեմաները լայն սոցիալական համատեքստում դիտարկելու և առանձին խնդիրների տարածվածությունը հիմնավորելու համար:

3.1 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԻԱՆԳՈՒԼՅԱՑԻԱ

Դաշտային աշխատանքների ընթացքում հավաքված որակական տվյալները ենթարկվել են թեմատիկ վերլուծության (thematic analysis)՝ վերհանելու այն կրկնվող օրինաչափությունները, մշակութային կառուցվածքներն ու համակարգային խոչընդոտները, որոնք ձևավորում են կանանց տնտեսական փորձառությունները: Զուգահեռաբար, 206 կանանց շրջանում իրականացված հարցման քանակական տվյալները մշակվել են նկարագրական վիճակագրության և խաչաձև վերլուծության մեթոդներով: Քանակական այս պատկերն օգտագործվել է ոչ թե որպես առանձին ներկայացուցչական չափում, այլ որպես որակական արդյունքները լրացնող բաղադրիչ:


Վերջնական եզրահանգումների վավերականությունն (validity) ապահովելու նպատակով կիրառվել է տվյալների տրիանգուլյացիա (data triangulation): Վերլուծության ընթացքում շահառուների անհատական պատումները համադրվել են ֆոկուս խմբերում համայնքային ընկալումների, փորձագիտական ինստիտուցիոնալ գնահատականների և հարցման արդյունքներով քանակական միտումների հետ:

3.2 ԸՆՏՐԱՆՔ

Որակական բաղադրիչի շրջանակում իրականացված 43 հարցազրույցներն ու քննարկումները կազմակերպվել են տարածաշրջանային համաչափության սկզբունքով: Դաշտային աշխատանքներում ընդգրկվել են ինչպես մայրաքաղաք Երևանը (7 հարցազրույց), այնպես էլ տարբեր սոցիալ-տնտեսական առանձնահատկություններ ունեցող չորս մարզեր՝ Սյունիքը (12 հարցազրույց), Շիրակը (12 հարցազրույց և 1 ֆոկուսխմբային քննարկում), Կոտայքը (6 հարցազրույց և 1 ֆոկուս խումբ) և Գեղարքունիքը (6 հարցազրույց և 1 ֆոկուսխմբային քննարկում): Ընտրանքի այսպիսի բաշխվածությունը հնարավորություն է տվել ապահովելու քաղաքային, գյուղական, սահմանամերձ և հետկոնֆլիկտային բնակավայրերի ներկայացվածությունը՝ կանանց տնտեսական խնդիրները տարբեր տեղական համատեքստերում դիտարկելու համար:

Այսպիսով՝ որակական հետազոտական հենքն ընդգրկում է խորքային և փորձագիտական հարցազրույցներ և ֆոկուսխմբային քննարկումներ, որոնք համադրվել են 206 կանանց շրջանում իրականացված հարցման քանակական ցուցանիշների հետ: Հարցման ընտրանքը ներկայացուցչական չէ, ձևավորվել է նպատակային/հասանելիության սկզբունքով և ներառում է տարբեր մարզերից ու տարբեր տեսակի բնակավայրերից հարցվողների: Մարզային բաշխման տեսանկյունից ընտրանքում առավել մեծ կշիռ ունի Գեղարքունիքը՝ 105 մասնակից (51.0%), որին հաջորդում են Երևանը, Շիրակը, Լոռին և Տավուշը: Բնակավայրի տեսակի առումով ընտրանքում ընդգրկված են Երևանի, այլ քաղաքային բնակավայրերի և գյուղական համայնքների կանայք, ընդ որում՝ հարցվողների առավել մեծ մասն ապրում է այլ քաղաքային բնակավայրերում և գյուղական համայնքներում (տե՛ս **Աղյուսակ 1**):

Աղյուսակ 1. Քանակական հարցման ընտրանքի բաշխումն ըստ մարզի, բնակավայրի տեսակի և տարիքի (N=206)



ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԵՍԱԿ



ԵՐԵՎԱՆ
37 | 18.0%



ԱՅԼ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ
94 | 45.6%



ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ
75 | 36.4%

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

18-24	25-34	35-44	45-54	55-64
16 | 7.8%	55 | 26.7%	70 | 34%	49 | 23.8%	16 | 7.8%

Ընտրանքի այս կառուցվածքը կարևոր է վերլուծության համար, քանի որ տվյալները հնարավորություն են տալիս համեմատելու կանանց տնտեսական արդարության փորձառությունները տարբեր տարածքային միջավայրերում: Մասնավորապես, հարցման արդյունքներում տեսանելի են տարբերություններ Երևանի, այլ քաղաքային բնակավայրերի և գյուղական բնակավայրերի միջև՝ աշխատանքի հասանելիության, եկամտի կայունության, խնամքի բեռի, գույքային իրավունքների և ինստիտուցիոնալ աջակցության հասանելիության առումով: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ընտրանքի ոչ ներկայացուցչական բնույթը և Գեղարքունիքի մասնակիցների բարձր կշիռը, վերլուծության արդյունքները չեն կարող ընդհանրացվել Հայաստանի բոլոր կանանց համար և պետք է դիտարկվեն որպես հետազոտության շրջանակում օրինաչափություններ:

3.3 ՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Հավաքված տվյալների վերլուծության համար առանձնացվել է չորս առանցքային ուղղություն՝ հասանելիություն, նորմեր, ճանաչում և վերահսկողություն՝ հիմք ընդունելով ՄԱԿ-Կանայք կազմակերպության, Նենսի Ֆրեյզերի (Fraser and Honneth, 2003) և Լոնգվիի (March et al., 2005), Համաշխարհային բանկի (World Bank, 2026) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (SIGI 2023 Global Report, 2023) տեսական շրջանակները:

Հասանելիություն (Access) – Մուտք տնտեսական տիրույթ: Այս չափումն ուսումնասիրում է, թե որքանով են կանանց հասանելի տնտեսական ռեսուրսներն ու շուկաները:

Հիմնական ցուցանիշներ. ինքնուրույն եկամուտ վաստակելու կարողություն, ֆորմալ/ոչ ֆորմալ զբաղվածություն, սեփականության (հող, գույք) և ժառանգության իրավունքներ, վարկերի և ֆինանսական մեխանիզմների հասանելիություն, տեղաշարժի ազատություն:

Նորմեր (Norms) – Գենդերային սպասումներ և սոցիալական կառուցվածքներ: Ուսումնասիրում է այն ոչ ֆորմալ կանոնները, որոնք սահմանում են կանանց «թույլատրելի» դերերը տնտեսության մեջ և ընտանիքում:

Հիմնական ցուցանիշներ. խնամքի բեռը և դրանով պայմանավորված՝ ժամանակի սղությունը (չվճարվող աշխատանք), ամուսնու/զուգընկերոջ դերը որոշումների կայացման մեջ, տղամարդկանց աջակցությունը (male allyship), սոցիալական խարանը կամ «ամոթի» զգացումը՝ կապված կնոջ աշխատանքի հետ:



Ճանաչում (Recognition) – Կանանց դերերի արժևորում և տեսանելիություն: Ըստ Նենսի Ֆրեյզերի՝ ճանաչումը նշանակում է լինել տեսանելի և հարգված որոշումների կայացման հարթակներում:

Հիմնական ցուցանիշներ. դերը համայնքային որոշումների կայացման մեջ, մասնակցությունը հանրային լսումներին (օրինակ՝ համայնքային բյուջետավորում), առաջնորդության ստանձնումը, կատարած աշխատանքի ընկալումը որպես «իրական» և «արժեքավոր» (հատկապես տնային տնտեսությունում):



Վերահսկողություն (Control) – Որոշումներ կայացնելու և իրավունքներն իրացնելու ուժ: Այս չափումն արտացոլում է կնոջ ինքնավարությունը սեփական տնտեսական ընտրություններ կատարելու և բռնությունից զերծ ապրելու հարցում:

Հիմնական ցուցանիշներ. վաստակած եկամուտը տնօրինելու, վարկերի և խնայողությունների օգտագործման վերաբերյալ որոշումներ կայացնելու կարողություն, աշխատավայրում հարստահարումից կամ տնտեսական բռնությունից պաշտպանվածություն:

3.4 ԷԹԻԿԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Հետազոտության բոլոր մասնակիցները նախապես ծանոթացել են հետազոտության նպատակներին և տվել տեղեկացված համաձայնություն: Անանունությունն ու տվյալների պաշտպանությունն ապահովելու համար անձնական տվյալները ծածկագրվել են, ինչը հատկապես կարևոր էր խոցելի խմբերի պարագայում: Ֆոկուս խմբերում կիրառվել է նաև ընդհանուր գաղտնիության կանոնը. մասնակիցները պարտավորվել են քննարկված անհատական պատմությունները չհանրայնացնել խմբից դուրս, ինչը հնարավորություն է տվել ձևավորելու անվտանգ և վստահելի միջավայր:

3.5 ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Սույն հետազոտության արդյունքները չեն կարող վիճակագրական ճշգրտությամբ ընդհանրացվել (generalize) Հայաստանի ամբողջ բնակչության համար, քանի որ քանակական հարցման ընտրանքը ձևավորվել է ոչ հավանականային՝ նպատակային և հասանելիության սկզբունքով և չի հանդիսանում Հայաստանի կանանց ներկայացուցչական ընտրանք: Բացի այդ՝ հարցվածների 51.0%-ը Գեղարքունիքի մարզից է, ինչի հետևանքով ընդհանուր ցուցանիշները կարող են առավելապես արտացոլել այդ մարզի մասնակիցների փորձառությունները: Հետևաբար, քանակական արդյունքները պետք է մեկնաբանել որպես հետախուզական բնույթի միտումներ և որակական տվյալները լրացնող վերլուծական շերտ, այլ ոչ թե համապետական տարածվածության գնահատականներ:

Աշխարհագրական առումով ընտրանքը սահմանափակվել է հիմնականում չորս մարզերով (Սյունիք, Շիրակ, Կոտայք, Գեղարքունիք) և Երևանով: Թեև սա թույլ տվեց մանրամասն դիտարկել սահմանամերձ, արդյունաբերական և գյուղական միջավայրերի յուրահատկությունները, այլ տարածաշրջաններում (օրինակ՝ Լո-

ռիում կամ Տավուշում) կանանց տնտեսական իրողությունները կարող են որոշակիորեն տարբերվել:

Հաշվի առնելով թեմայի զգայունությունը (տնտեսական վերահսկողություն, ընտանեկան բռնություն, սոցիալական խարան)՝ վերլուծության ընթացքում հնարավոր է ընդհարում սոցիալական ցանկալիության կողմնակալության (social desirability bias) հետ: «Ընտանեկան պատվի» պահպանման կամ արտաքին դատապարտման մտավախության պատճառով որոշ մասնակիցներ կարող էին հակված լինել ինքնազսպման կամ սոցիալապես ընդունելի պատասխաններ տալու:

Վերջապես, ուսումնասիրությունը կրում է ժամանակային համատեքստի ազդեցությունը, քանի որ իրականացվել է 2020 և 2023 թվականների բռնի տեղահանությունների հետևանքների հաղթահարման փուլում: Ճգնաժամային այս իրավիճակն ուղղակիորեն ձևավորել է մասնակիցների ընթացիկ տնտեսական վարքագիծն ու որոշումները, ինչը կարող է տարբերվել հարաբերականորեն կայուն և խաղաղ պայմաններում արձանագրվող միտումներից:

Պետական աջակցություն և տնտեսական արդարություն

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պետական կառույցները կանանց տնտեսական անվտանգությանն աջակցում են նախևառաջ սոցիալական պաշտպանության և ընտանիքահեն դրամական աջակցության գործիքներով, մինչդեռ կանանց ուղղակիորեն թիրախավորող զբաղվածության և ձեռնարկատիրության միջոցառումներն առավել հստակ ձևակերպված են վերջին ռազմավարական փաստաթղթերում: Այս տրամաբանությունը հատկապես տեսանելի է, մի կողմից, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2025 թվականի գործունեության հաշվետվության, մյուս կողմից՝ Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագրի («Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագիրը», ՀՀ Կառավարություն, 2024) և Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարության («Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 482-Լ որոշումը, 25 ապրիլի, 2025) համադրությամբ:

Վերջին տարիների պետական աջակցության առավել խոշոր ծրագրերը, որոնք անմիջականորեն կամ անուղղակիորեն նպաստում են կանանց տնտեսական անվտանգությանը, շարունակում են կենտրոնացած լինել երեխայի ծննդի և խնամքի հետ կապված նպաստների վրա: 2025 թվականին երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար նախատեսված ամսական 50,000 դրամ նպաստից օգտվել է 45,103 երեխա, որի համար պետական բյուջեից հատկացվել է 27.1 մլրդ դրամ: Նույն տարում մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը տրամադրվել է 67,943 երեխայի, որի համար հատկացվել է 30.2 մլրդ դրամ: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը 2025 թվականին ստացել է 37,420 երեխա, որի համար հատկացվել է 20.9 մլրդ դրամ (RA Government, 2026):

Իրավական և գործառնական տեսանկյունից կարևոր է տարբերակել ներկայում գործող կարգավորումները ապագայի համար հայտարարված դրույթներից:

Այսպես՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստը ներկայում շարունակում է տրամադրվել աստիճանակարգված չափերով, որոնք կազմում են 300,000 ՀՀ դրամ՝ առաջին և երկրորդ, 1,000,000 ՀՀ դրամ՝ երրորդ և չորրորդ, և 1,500,000 ՀՀ դրամ՝ հինգերորդ և հաջորդ երեխաների դեպքում: Մինչդեռ բոլոր ծնունդների համար նախատեսվող 500,000 ՀՀ դրամ միասնական չափը կառավարության կողմից արդեն հավանության արժանացած բարեփոխում է, որն ուժի մեջ է մտնելու 2026 թվականի սեպտեմբերի 1-ից, ուստի այն չպետք է դիտարկել որպես գործող կարգավորում (RA Government, 2026):

Կանանց տնտեսական անվտանգությանն առնչվող երկրորդ խոշոր ուղղությունը կապված է սոցիալական պաշտպանության համակարգի ֆինանսական և վարչական վերափոխումների հետ: Պաշտոնական տվյալներով՝ կենսաթոշակների և նպաստների անկանխիկ գործարքներից հետվճարի ծրագրից 2026 թվականի հունվարի դրությամբ օգտվում էր 400,572 մարդ: Անկանխիկ շրջանառության ծավալը շուրջ 359.7 միլիարդ դրամ էր, իսկ շահառուներին վերադարձված գումարը՝ 33.3 միլիարդ դրամ: Թեև հանրային դիսկուրսում այս միջոցառումը հաճախ անվանում են «cashback», իրավական ձևակերպմամբ այն սահմանվում է որպես կենսաթոշակների և նպաստների անկանխիկ գործարքներից վերադարձ, ինչը սպառման խթանման և վճարային վարքագծի փոփոխությանն ուղղված գործիք է (ՀՀ Կառավարություն):


Դրան զուգահեռ, սոցիալական աջակցության համակարգում ներդրվում է ընտանիքի անապահովության գնահատման նոր մոդել, որը նախատեսում է անցում կարգավիճակահեն մոտեցումից կարիքահեն գնահատման: Նոր համակարգը 2025 թվականի մարտի 17-ից փորձնական գործարկվել է Սյունիքի և Կոտայքի մարզերում, իսկ ամբողջ հանրապետության տարածքում դրա ամբողջական ներդրումը նախատեսված է 2026 թվականի հուլիսի 1-ից: Ըստ ոլորտային նախարարի պարզաբանման՝ այս մոդելով ծայրահեղ անապահով ճանաչված ընտանիքներին կտրամադրվի նվազագույն երաշխավորված եկամուտ՝ նվազագույն սպառողական զամբյուղին համարժեք չափով: Հատկանշական է, որ փորձնական ծրագրում ընդգրկված մարզերում միջին նպաստը կազմել է 78,000 դրամ, իսկ առավելագույնը հասել է 200,000 դրամի (ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմանն ուղղված նախագծերի փաթեթները երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ԱԺ-ի կողմից, 2024):

Վերջին շրջանում քաղաքականության ուղղվածությունը նկատելիորեն փոխվել է դեպի կանանց զբաղվածության խթանումը, սակայն այստեղ հարկ է տարբերակել արդեն ընթացող վարչական ծրագրերը զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարությամբ նախատեսված փուլային միջոցառումներից: Այս ռազմավարությունը 30-40 տարեկան չաշխատող կանանց համար նախատեսում է երեք փոխկապակցված ուղղություն:

Առաջինն ուղղված է մասնագիտական ուսուցմանը՝ ճկուն և կարճաժամկետ դասընթացների, մինչև 300 հազար դրամ արժեքով զբաղվածության վաուչերների, ինչպես նաև ֆինանսական և թվային գրագիտության առցանց ուսուցման միջոցով («Գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ՀՀ Կառավարություն): Երկրորդ ուղղությունը ներառում է աշխատանքի և խնամքի պարտականությունների համատեղելիությանը նպաստող կարգավորումներ («Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), մանկապարտեզների բացման համաֆինանսավորում, ինչպես նաև միջին տարիքի կանանց աշխատանքի ընդունելու դեպքում գործատուներին եկամտահարկի (մինչև 10 տոկոսային կետ) և արդյունաբերության ոլորտում աշխատավարձի (մինչև 20%) մասնակի փոխհատուցում («Գենդերային

քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ՀՀ Կառավարություն, 2024): Երրորդ բաղադրիչը նպատակաուղղված է կանանց ձեռնարկատիրության զարգացմանը՝ «WOMen Economic Network» (Wom.E.N.) թվային հարթակի ստեղծման, աքսելերացիոն ծրագրերի, շահութահարկի հետվճարի, վարկերի սուբսիդավորման և մինչև 5 միլիոն դրամ դրամաշնորհների տրամադրման միջոցով («Գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», ՀՀ Կառավարություն, 2024):





ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՂՅՈՒՍԱԿ

ԾՐԱԳԻՐ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	ՏԵՍԱԿ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ
Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, 2026)	Ամսական դրամական նպաստ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/ Միասնական սոցիալական ծառայություն	Անուղղակի
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երեխայի ծննդյան միանվագ նպաստ, 2026)	Միանգամյա դրամական նպաստ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/ Միասնական սոցիալական ծառայություն	Անուղղակի
Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ, 2026)	Պարբերական դրամական նպաստ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/ Միասնական սոցիալական ծառայություն	Անուղղակի
Կենսաթոշակների և նպաստների անկանխիկ գործարքներից հետվճար (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Ովքե՞ր կարող են օգտվել անկանխիկ գործարքների դեպքում 20% հետվճարի ծրագրից, 2026)	Սպառման սուբսիդիա/ անկանխիկ վճարումների խթան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/ մասնակցող բանկեր	Անուղղակի
30-40 տարեկան չաշխատող կանանց համար զբաղվածության ռազմավարության միջոցառումներ (ՀՀ Կառավարություն, Զբաղվածության 2025-2031 թվականների ռազմավարական ծրագիրը, 2024)	Աշխատաշուկայի ակտիվ միջոցառումներ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ուղղակի
Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց կայուն կենսապահովման աջակցություն (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության ապահովման ծրագիր, 2026)	Դրամական աջակցություն + ուսուցում + բնակարանային աջակցություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն/ Միասնական սոցիալական ծառայություն	Անուղղակի
Եվրոպական ներդրումային բանկ (EIB Global)- ՀՀ կենտրոնական բանկ, վերավարկավորման գիծ՝ գենդերային հավասարության նպատակային բաղադրիչով	Ֆինանսական հասանելիության գործիք	ՀՀ կենտրոնական բանկ + Գերմանա-հայկական հիմնադրամ, EFSD+-ի աջակցությամբ	Մասամբ ուղղակի

Չնայած արձանագրված առաջընթացին՝ փաստաթղթային վերլուծությունն ի հայտ է բերում մի շարք կառուցվածքային սահմանափակումներ, որոնք նվազեցնում են կանանց տնտեսական անվտանգությանն ուղղված քաղաքականության արդյունավետությունը:

Առաջին համակարգային խոչընդոտը չվճարվող խնամքի և տնային աշխատանքի անհամաչափ բաշխվածությունն է (unpaid care work burden): Համաշխարհային բանկի և ՄԱԿ-Կանայք-ի հետազոտությունները փաստում են, որ խնամքի պարտականությունները խիստ բացասական ազդեցություն են ունենում կանանց աշխատուժի առաջարկի և տնտեսական ակտիվության վրա: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ կանայք իրենց օրական ժամանակի 19.5%-ը տրամադրում են չվճարվող տնային աշխատանքին, մինչդեռ տղամարդկանց պարագայում այս ցուցանիշը սահմանափակվում է ընդամենը 4.4%-ով (ՄԱԿ-Կանայք): Այս անհամաչափությունը տնտեսական պասիվության հիմնական պատճառներից մեկն է. 15-74 տարեկան կանանց 23.1%-ը տնտեսապես ոչ ակտիվ է ընտանեկան պարտավորությունների պատճառով (տղամարդկանց պարագայում՝ 0.5%) (ՄԱԿ-Կանայք, 2026): Խնդիրը խորանում է ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների անբավարարության պատճառով. մինչև 3 տարեկան երեխաների վաղ մանկական կրթության և խնամքի (ECCE) ծառայություններում ընդգրկվածությունը կազմում է ընդամենը 4.9%:

Այս գործոնների ուղղակի հետևանքով աշխատուժի գենդերային խզվածքը (gender employment gap) առավելագույնի է հասնում ամուսնացած կանանց շրջանում (43.4%՝ տղամարդկանց 70.9%-ի համեմատ): Ուստի Համաշխարհային բանկի գենդերային գնահատականը (World Bank, 2026) առաջնահերթություն է համարում նախադպրոցական խնամքի հասանելիության մեծացումն ու համատեղ ծնողավարման խթանումը: Այս կառուցվածքային բացը վերահաստատվում է «Կանայք, բիզնես և իրավունք, 2026» ինդեքսով (World Bank, 2026). Հայաստանի աջակցող իրավական շրջանակների («supportive frameworks») ցուցիչը զիջում է տարածաշրջանային միջինին, ընդ որում՝ երեխայի խնամքի (childcare) քաղաքականության գնահատականը 0.00 է, իսկ կանանց ձեռնարկատիրության աջակցությունը՝ 52.50:

Երկրորդ սահմանափակումը տարածքային անհավասարությունն է (spatial disparity): Ռազմավարական թիրախավորումը մարզային քաղաքներին և արդյունաբերական գոտիներին մատնանշում է մայրաքաղաքից դուրս որակյալ աշխատատեղերի պակաս: Չնայած գործազրկության ընդհանուր նվազմանը՝ ուրբանիզացված/քաղաքային միջավայրում կանանց զբաղվածությունը կազմում է ընդամենը 40.5% (տղամարդկանց 58.0%-ի համեմատ): Սրան զուգահեռ, մարտահրավեր է աշխատավարձի գենդերային խզվածքի (gender pay gap) խորացումը՝ 2015 թվականի 33.5%-ից հասնելով 39.0%-ի 2024 թվականի դրությամբ (կանանց վարձատրությունը տղամարդկանց եկամտի 61%-ն է) (ՄԱԿ-Կանայք), ինչը վկայում է աշխատաշուկայի ուժեղ հորիզոնական և ուղղահայաց սեգրեգացիայի մասին:

Երրորդ խոչընդոտը տվյալների անհամաչափությունն ու մշտադիտարկման բացերն են: «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. բարեփոխումներին աջակցության ծառայություն» (ԵՄ, 2024) զեկույցի համաձայն՝ ըստ սեռի/գենդերի տարանջատված (sex-disaggregated) տվյալների պակասը՝ հատկապես ոչ ֆորմալ հատվածի, բազմաչափ աղքատության և ճգնաժամերի ազդեցության մասով, սահմանափակում է քաղաքականության ազդեցության գնահատումը (impact evaluation): Տվյալների բացը հատկապես խնդրահարույց է ոչ ֆորմալ զբաղվածության տիրույթում. թեև տղամարդկանց շրջանում այն էականորեն բարձր է (22.0%), կանանց շրջանում կայուն պահպանվում է 9.0%-ի սահմաններում, սակայն ստվերային տնտեսության մեջ կանանց ներգրավվածության կառուցվածքային առանձնահատկությունները դեռևս

բավարար չափով հետազոտված չեն:

Այսպիսով՝ Հայաստանի սոցիալական աջակցության համակարգը կանանց տնտեսական անվտանգությանն առավելապես նպաստում է պասիվ քաղաքականության և անուղղակի գործիքակազմի միջոցով, որոնք միտված են երեխայի ծննդյան, խնամքի և ընտանեկան կայունության ապահովմանը: Այդուհանդերձ, նորագույն ռազմավարական փաստաթղթերում արձանագրվում է հայեցակարգային կարևոր անցում, որով կանանց տնտեսական անվտանգությունը վերասահմանվում է՝ աջակցության (welfare) մոդելից անցնելով դեպի զբաղվածության խթանում, խնամքի ենթակառուցվածքների զարգացման և ֆինանսական ներառականության համալիր օրակարգ: Այնուամենայնիվ, քաղաքականությունների համադրումը ցույց է տալիս, որ այս ակտիվ ուղղությունները դեռևս գտնվում են ինստիտուցիոնալացման ու պլանավորման փուլում, մինչդեռ գործնականում ամենալայն ընդգրկվածությունն ու ֆինանսական մեծ ծավալներն ունեցող միջամտությունները շարունակում են սահմանափակվել ընտանիքահեն տրանսֆերտներով և սոցիալական աջակցության համակարգի կառուցվածքային վերափոխումներով:

Այս պատկերը համահունչ է իրավական վերլուծության հիմնական եզրահանգմանը, ըստ որի՝ Հայաստանում կանանց տնտեսական արդարության ապահովման համար ֆորմալ իրավահավասարությունը բավարար չէ[51]: Թեև օրենսդրական և ռազմավարական փաստաթղթերում առկա են կանանց աշխատանքին, վարձատրությանը, սոցիալական պաշտպանությանը և ձեռնարկատիրությանն առնչվող դրույթներ, դրանց գործնական ազդեցությունը սահմանափակվում է խնամքի աշխատանքի թերի ճանաչմամբ, ոչ ֆորմալ աշխատանքի պաշտպանվածության բացերով, գույքային և ժառանգական հարաբերությունների գենդերային բնույթով, ինչպես նաև հարկային քաղաքականության գենդերային ազդեցության գնահատման բացակայությամբ[52]: Հետևաբար, պետական աջակցության օրակարգը պետք է դիտարկել ոչ միայն սոցիալական պաշտպանության կամ զբաղվածության խթանման, այլև տնտեսական արդարության կառուցվածքային պայմանները փոխելու տեսանկյունից[53]:



51 Եզրահանգումն արված է հետազոտության առաջին փուլում կատարված «Կանանց տնտեսական արդարության ապահովման մեխանիզմների իրավական վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունից:

52 Նույն տեղում:

53 Նույն տեղում:

7

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



7.1 Տնտեսական արդարության ընկալումներ. անհատական ջանքից դեպի կառուցվածքային պայմաններ

Մասնակիցների զգալի մասը տնտեսական արդարությունը կապում է հավասար հնարավորությունների և արդար մրցակցության հետ: Այս ընկալումը հատկապես արտահայտված է կրթված, զբաղված և քաղաքային միջավայրի կանանց շրջանում, որոնք իրենց փորձառությունը դիտարկում են աշխատանքի, կարիերայի կամ բիզնեսի պայմանների տեսանկյունից: Մասնակիցների մեկ այլ խմբի ընկալմամբ՝ տնտեսական արդարությունը ավելի շատ կապվում է կախվածությունից ազատվելու՝ սեփական կարիքները բավարարելու, եկամուտը տնօրինելու և ամուսնուց կամ ընտանիքից ֆինանսական թույլտվություն չխնդրելու հնարավորության հետ: Տեղահանված կանանց դեպքում արդարության ընկալումը կապվում է կայունության, բնակարանային անվտանգության և մասնագիտական ինքնության վերականգնման հետ:

> *«Տնտեսական արդարությունը հասկանում եմ, որ բիզնեսում մրցակցությունը հավասար լինի. փոքր, միջին, մեծ բիզնեսի համար նույն պայմանները գործեն»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Կոտայք**

> *«Ինձ համար տնտեսական արդարությունը հավասար հնարավորությունների և արդար մրցակցության մասին է. նույնքան հնարավորություն ունենալ, որքան տղամարդը կամ հաշմանդամություն ունեցող մարդը»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

> *«Տնտեսական արդարությունը ինձ համար այն է, երբ կանայք տնտեսապես ապատ են և կախված չեն տղամարդկանցից»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Սյունիք**


> *- «Տեղահանությունից հետո տնտեսական արդարությունը այլ կերպ հասկացա. դա կայուն եկամուտ ունենալն է և ընտանիքդ ինքնուրույն պահելու կարողությունը»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Սյունիք**

Այստեղ ի հայտ է գալիս որոշակի հակասություն: Որոշ մասնակիցներ հաջողությունն ու արդարությունը պայմանավորում են բացառապես անհատական աշխատասիրությամբ, նպատակասլացությամբ և դիմակայունությամբ («չկոտրվելու» կարողությամբ): Այս հռետորաբանությունը, մի կողմից, ընդգծում է կանանց սուբյեկտայնության (կարողունակության) ուժը, մյուս կողմից՝ կարող է քողարկել կառուցվածքային խնդիրները:

Մասնակիցների կողմից հաջողությունը բացառապես անհատական կամքով պայմանավորելու միտումը ուղղակիորեն կապված է նրանց «արտոնյալ» սոցիալ-տնտեսական դիրքի հետ: Այս դիրքորոշումն արտահայտում են այն կանայք,

որոնք հասանելիություն ունեն որակյալ կրթությանը, կայուն զբաղվածությանը, տրանսպորտայինմիջոցներինևերեխաներիխնամքիաջակցմանհամակարգերին:

Մինչդեռ խոցելի խմբերի, մասնավորապես՝ գյուղաբնակ, տեղահանված կամ խնամքի մեծ բեռ ունեցող կանանց փորձառությունը փաստում է հակառակը: Նրանց արձագանքները վկայում են, որ անհատական ձգտումը չի կարող կայուն արդյունք ապահովել, եթե բացակայում են հիմնարար ենթակառուցվածքներն ու սոցիալական հենարանը:



7.2 Աշխատանքի հասանելիություն և մարզային ու տարածքային անհավասարություն

Աշխատանքի թեման ուսումնասիրության առանցքային և ամենաբազմաշերտ թեմաներից է: Սակայն «աշխատանք գտնելը» Հայաստանի տարբեր տարածքներում նույն իմաստը չունի: Երևանում և որոշ քաղաքային բնակավայրերում աշխատանք գտնելու դժվարությունը հաճախ կապվում է մրցակցության, ինքնավստահության, մասնագիտական համապատասխանության կամ հղիության և երեխա ունենալու շուրջ գործատուների կանխակալ վերաբերմունքի հետ: Մարզերում և գյուղական համայնքներում դրան ավելանում են աշխատատեղերի սակավությունը, ցածր վարձատրությունը, տրանսպորտի հետ կապված խնդիրները, մասնագիտական առաջխաղացման սահմանափակ հնարավորությունները և համայնքային վերահսկողությունը:

Հարցման քանակական տվյալները ևս վկայում են այս տարածքային տարբերությունների մասին: Գյուղական բնակավայրերում հարցվողների 48.0%-ը նշել է, որ կանայք տղամարդկանց համեմատ ավելի քիչ հասանելիություն ունեն աշխատանքի հնարավորություններին, մինչդեռ Երևանում այդ ցուցանիշը 24.3% է, իսկ այլ քաղաքային բնակավայրերում՝ 29.8%: Նույն օրինաչափությունը նկատվում է նաև անձնական փորձառությունների մակարդակում. Երևանում հարցվողների 46.9%-ը, այլ քաղաքային բնակավայրերում՝ 53.6%-ը, իսկ գյուղական բնակավայրերում՝ 61.1%-ը նշել են, որ անձամբ բախվել են աշխատանք գտնելու դժվարությունների: Այս տվյալները ցույց են տալիս, որ աշխատանքի հասանելիության խնդիրը միայն անհատական հմտությունների, կրթության կամ մոտիվացիայի հարց չէ. այն ունի հստակ տարածքային և կառուցվածքային բնույթ:

Աղյուսակ 2. Տղամարդկանց համեմատ կանանց՝ աշխատանքի հասանելիությունն ըստ բնակավայրի տեսակի



ԵՐԵՎԱՆ

Տղամարդկանց համեմատ ցածր հասանելիություն

24.3%



ԱՅԼ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Տղամարդկանց համեմատ ցածր հասանելիություն


29.8%



ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Տղամարդկանց համեմատ ցածր հասանելիություն

48.0%



Այս եզրահանգումը համահունչ է ազգային մակարդակի վիճակագրական պատկերին: Ըստ «Հայաստանի գենդերային պրոֆիլը (2024)» (Armenia Country Gender Profile) զեկույցի՝ կանանց տնտեսական պասիվության հիմնական պատճառներից մեկը չվճարվող տնային աշխատանքն է (EU4Gender Equality Reform Helpdesk (2024)): Զբաղվածության գենդերային խզվածքն առավել ակնառու է 25-34 տարիքային խմբում, որտեղ կանանց զբաղվածությունը կազմում է ընդամենը 44%՝ տղամարդկանց 78%-ի համեմատ (EU4Gender Equality Reform Helpdesk (2024)):

Բացի այդ՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՄԱԿ-Կանայք-ի համատեղ վերլուծությունները փաստում են, որ ցածր զբաղվածությունից զատ՝ աշխատաշուկայում պահպանվում է նաև վարձատրության էական գենդերային խզվածքը (ՄԱԿ-Կանայք, 2026): Հետևաբար, որակական տվյալներում վերհանված անհատական դժվարություններն արտացոլում են Հայաստանում առկա համակարգային խնդիրները:

Շիրակի և Գեղարքունիքի տվյալները փաստում են գյուղական և կիսաքաղաքային համայնքների աշխատաշուկայի երկփեղկվածությունը: Մի կողմից՝ առկա է ցածր վարձատրվող և բարձր որակավորում չպահանջող աշխատուժի (վաճառող, գանձապահ, օրավարձով բանվոր) բարձր հասանելիություն, մյուս կողմից՝ մասնագիտական աճի և կարիերայի զարգացման հնարավորությունները խիստ սահմանափակ են: Հետևաբար, շրջանառվող «աշխատանք կա» պնդումը քողարկում է զբաղվածության որակի, արժանապատիվ վարձատրության և մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների բացակայությունը:

«Եթե կինը մասնագիտություն ունի, հենց դա կարող է դժվարացնել, որովհետև ուզում է իր մասնագիտությամբ աշխատել, ոչ թե ցանկացած աշխատանք անել»:


Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**

«Գյումրիում դժվար է աշխատանք գտնելը, որովհետև աշխատավայրերի պակաս կա, իսկ 40-ն անց կամ 50-ին մոտ կանայք հատկապես դժվարանում են նոր աշխատանք գտնել»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**

Քանակական տվյալները փաստում են, որ զբաղվածության առկայությունը դեռևս չի երաշխավորում եկամտի կայունություն: Թեև հարցվածների 68.4%-ն ունի սեփական եկամուտ, դրա կանոնավոր լինելը նշել է միայն 38.8%-ը: Հետևաբար, կանանց տնտեսական մասնակցությունը չի կարող չափվել սոսկ եկամտի առկայությամբ. առանցքային են դրա կանխատեսելիությունն ու բավարարությունը՝ տնտեսական ինքնավարության տեսանկյունից:

Եկամտի կանոնավորության և տնտեսական ինքնավարության միջև առկա է ուղիղ կապ. կանոնավոր եկամուտ ունեցողների 36.8%-ն իր տնտեսական անկախությունը գնահատել է բարձր կամ շատ բարձր, մինչդեռ ոչ կանոնավոր եկամուտ ունեցողների և եկամուտ չունեցողների շրջանում այս ցուցանիշը զգալիորեն ցածր է՝ կազմելով համապատասխանաբար 16.9% և 13.5%: Այսպիսով՝ եկամտի կանոնավորությունն ու սոցիալական պաշտպանվածությունը նույնքան որոշիչ են, որքան զբաղվածության փաստը:




Աղյուսակ 3. Եկամտի կարգավիճակ

Փորձագետները նույնպես հաստատում են, որ աշխատանքի հարցում ֆորմալ հավասարությունը բավարար չէ: Գործատուները կարող են բացահայտ չասել, թե նախընտրում են աշխատանքի չընդունել փոքր երեխա ունեցող կամ նոր ամուսնացած կնոջ, սակայն այդ ենթադրությունները շարունակում են ազդել աշխատանքի ընտրության վրա:

> *«Եթե կինը փոքր երեխա ունի, ենթադրվում է, որ չի կարող լիովին նվիրվել աշխատանքին. այդ կանխակալությունը Հայաստանում գործում է»:*
>
> Բանկային ոլորտում աշխատող կին, **Երևան**


Իրավական վերլուծությունը ևս հաստատում է, որ աշխատանքի ոլորտում ֆորմալ իրավահավասարությունը դեռ չի ապահովում կանանց լիարժեք պաշտպանվածություն: ՀՀ աշխատանքային օրենսդրությունն ամրագրում է խտրականության արգելքը, հավասար վարձատրության սկզբունքը, մայրության և հայրության արձակուրդների իրավունքը, ինչպես նաև աշխատավայրում բռնության և սեռական ոտնձգության արգելքը: Սակայն այս երաշխիքները հիմնականում կիրառելի են գրանցված աշխատանքային հարաբերությունների պարագայում[54]: Ոչ ֆորմալ, չգրանցված տնային կամ խնամքի աշխատանք կատարող կանայք հաճախ դուրս են մնում այդ պաշտպանությունից: Բացի այդ՝ խտրականության ապացուցման բեռը, համարժեք աշխատանքի գնահատման մեխանիզմների բացակայությունը և սեռական ոտնձգությունների կանխարգելման թույլ գործիքակազմը սահմանափակում են կանանց իրական պաշտպանվածությունը աշխատաշուկայում:

Աշխատաշուկայի անհավասարությունն առավել սուր է դրսևորվում հաշմանդամություն կամ երկարաժամկետ առողջության խնդիրներ ունեցող կանանց շրջանում: Քանակական տվյալներով՝ այս խմբի հարցվածների միայն 19.4%-ն ունի կանոնավոր եկամուտ, իսկ 70.6%-ը բախվել է զբաղվածության խնդիրներին:



Աղյուսակ 4. Հաշմանդամություն կամ երկարաժամկետ առողջության խնդիր ունենալը՝ ըստ եկամտի կարգավիճակի

54 Եզրահանգումն արված է հետազոտության առաջին փուլում կատարված «Կանանց տնտեսական արդարության ապահովման մեխանիզմների իրավական վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունից:



Աղյուսակ 5. Աշխատանք գտնելու դժվարությունը՝ ըստ հաշմանդամության կամ երկարաժամկետ առողջության խնդրի առկայության

Սա ցույց է տալիս, որ տնտեսական հզորացման ընդհանուր ծրագրերն անարդյունավետ են առանց թիրախային բաղադրիչների՝ ֆիզիկական միջավայրի մատչելիության, հարմարեցված աշխատանքային պայմանների, տրանսպորտային աջակցության, գործատուների խրախուսման և ներառական մասնագիտական վերապատրաստումների:

Ընդհանուր առմամբ, որակական, քանակական և երկրորդային տվյալների համադրումը ցույց է տալիս, որ կանանց աշխատանքի հասանելիությունը Հայաստանում պայմանավորված է առնվազն հինգ փոխկապակցված գործոններով՝ բնակավայրի տեսակ, խնամքի բեռ, եկամտի կայունություն, գործատուների գենդերային կանխակալություններ և անհատական կամ սոցիալական խոցելիություններ:

7.3 Եկամուտ, անձնական կարիքներ և ֆինանսական ինքնավարություն

Տվյալները ցույց են տալիս, որ եկամուտ ունենալը և ֆինանսական անկախություն ունենալը նույնական չեն: Կինը կարող է ունենալ եկամուտ, բայց եթե նա պարտավոր է այն փոխանցել ընտանիքի այլ անդամի, յուրաքանչյուր ծախսի համար հաշվետու լինել կամ անձնական կարիքների համար գումար խնդրել, ապա եկամտի առկայությունը դեռ չի ենթադրում ինքնավարություն: Հիգիենայի և անձնական խնամքի վերաբերյալ տվյալները տնտեսական ինքնավարության նուրբ, բայց կարևոր ցուցիչ են, քանի որ ցույց են տալիս՝ արդյոք կինը կարողանում է ինքնուրույն տնօրինել իր ֆինանսական միջոցները՝ ոչ միայն «մեծ» ծախսերի, այլև իր առօրյա անձնական կարիքների համար:

> *«Եթե կինը ֆինանսական անկախություն ունի, կարող է ձեռք բերել իր կարիքները, բայց եթե սպասում է, որ ամուսինը կամ տղան գումար տա, բնականաբար դժվար է»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**

«Եթե կա ֆինանսական սահմանափակում, կինը նախ մտածում է երեխաներին կերակրելու, երեխաների հագուստի ու պարապմունքների մասին, իսկ իր խնամքի միջոցները անցնում են երկրորդ պլան»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**

«Մեր համայնքում կանայք հաճախ իրենց կարիքների համար գումարը վերցնում են ընտանիքի անդամներից՝ հիմնականում ամուսնուց կամ սկեսուրից»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան / եզդի համայնք**

«Փող ուզելը բավական բարդ գործընթաց է և կարող է լինել վերահսկողության ձև»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

Այստեղ տնտեսական արդարությունը պետք է հասկանալ ոչ թե որպես ընդհանուր ընտանեկան բյուջեի առկայություն, այլ որպես անձնական կարիքների պատշաճ բավարարման և սեփական գումարն ինքնուրույն տնօրինելու իրավունք և հնարավորություն: Եթե կնոջ անձնական կարիքները դիտարկվում են որպես «երկրորդական», «քմահաճ» կամ «ամուսնուց խնդրվող» ծախսեր, ապա ընտանիքի ընդհանուր եկամտի առկայությունը չի ենթադրում կնոջ տնտեսական ազատություն:

«Անկախությունը միայն մեծ բաների մասին չէ. նույնիսկ հիգիենայի կամ կոսմետիկ միջոցների դեպքում կինը չպետք է կախված լինի ուրիշի բարեհաճությունից»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Կոտայք**




7.4 Խնամքի տնտեսություն, ժամանակի աղքատություն և ձեռնարկատիրության սահմանափակումներ

Խնամքի բեռը կանանց տնտեսական մասնակցության կենտրոնական կառուցվածքային սահմանափակումներից է: Այն ներառում է ոչ միայն երեխաների խնամքը, այլև տնային աշխատանքը, տարեցների կամ ընտանիքի հիվանդ անդամների խնամքը, երեխաների կրթական ու կազմակերպչական հարցերը, հաճախ նաև՝ տնային տնտեսության կամ գյուղատնտեսական չվճարվող աշխատանքը: Այս առումով խնամքը պետք է դիտարկել ոչ թե որպես մասնավոր ընտանեկան խնդիր, այլ որպես տնտեսական ենթակառուցվածքի հարց/մասնակցությունը սահմանափակող կառուցվածքային գործոն, որը սահմանափակում է կանանց ժամանակը, շարժունակությունը, վերապատրաստման հնարավորությունը, աշխատանքի ընտրությունը և բիզնես սկսելու կարողությունը:


Քանակական տվյալները ցույց են տալիս, որ խնամքի և տնային աշխատանքի բեռը սահմանափակում է կանանց տնտեսական ակտիվությունը: Հարցվածների 71.4%-ը նշել է, որ ունի երեխաներ կամ խնամքի ենթակա անձինք, իսկ նրանցից 68.1%-ի դեպքում ընտանեկան պարտականություններն առնվազն երբեմն խանգարում են աշխատելուն, ուսմանը, վերապատրաստմանը կամ բիզնես սկսելուն:

Այս խնդիրը հատկապես տեսանելի է ժամանակի բաշխման տվյալներում: Խնամքի պարտականություններ ունեցող կանանց 57.1%-ը օրական առնվազն 7 ժամ է տրամադրում չվարձատրվող խնամքի կամ տնային աշխատանքին, մինչդեռ նման պարտականություններ չունեցող կանանց շրջանում այդ ցուցանիշը կազմում է 19.6%: Սա նշանակում է, որ խնամքի բեռ ունեցող կանայք ավելի հաճախ են ունենում ժամանակի աղքատություն, ինչն ուղղակիորեն սահմանափակում է նրանց տնտեսական հնարավորությունները:



Աղյուսակ 6. Խնամքի բեռը և կանանց ժամանակի աղքատությունը

Այս տվյալները կարևոր են նաև իրավական և քաղաքականության տեսանկյունից, քանի որ ցույց են տալիս, որ խնամքի աշխատանքը կանանց համար ոչ միայն ժամանակային բեռ է, այլև տնտեսական մասնակցությունը սահմանափակող կառուցվածքային գործոն: Իրավական վերլուծության տեսանկյունից խնամքի տնտեսությունը պետք է դիտարկել որպես կանանց տնտեսական արդարության առանցքային բաղադրիչ՝ ճանաչման, կրճատման, վերաբաշխման և արժանապատիվ փոխհատուցման տրամաբանությամբ[55]: Եթե ընտանիքում երեխաների, տարեցների, հիվանդ կամ հաշմանդամություն ունեցող անդամների խնամքը շարունակում է ընկալվել միայն որպես «ընտանեկան պարտականություն», այն դուրս է մնում աշխատանքային պաշտպանության, սոցիալական ապահովության, աշխատանքային ստաժի և գույքային ներդրման ճանաչման դաշտից: Հետևաբար, խնամքի բեռի նվազեցումը պետք է դիտարկվի ոչ միայն որպես սոցիալական ծառայությունների հարց, այլ որպես կանանց տնտեսական արդարության նախապայման:



Աղյուսակ 7. Չվճարվող տնային և խնամքի աշխատանքի հիմնական բաղադրիչները

55 Եզրահանգումն արված է հետազոտության առաջին փուլում կատարված «Կանանց տնտեսական արդարության ապահովման մեխանիզմների իրավական վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունից:

Չվճարվող տնային և խնամքի աշխատանքը բազմաշերտ բեռ է, որն անմիջականորեն սահմանափակում է կանանց տնտեսական ակտիվությունը: **Տնտեսական ակտիվությունը սահմանափակող հիմնական գործոնների շարքում** հարցվածները նշել են երեխաների խնամքը՝ 62.1%, կենցաղային գործերը՝ 30.6%, տարեցների խնամքը՝ 22.8%, ընտանիքում հիվանդ կամ հաշմանդամություն ունեցող անդամի խնամքը՝ 21.4%, ինչպես նաև գյուղատնտեսական կամ ընտանեկան բիզնեսում չվճարվող աշխատանքը՝ 6.8%:

Այս տվյալները փաստում են, որ կանանց չվճարվող զբաղվածությունը չի սահմանափակվում միայն կենցաղային գործերով. այն համատեղում է ժամանակային, ֆիզիկական, հուզական, կազմակերպչական և տնտեսական ռեսուրսները, որոնք հաճախ չեն ճանաչվում որպես արտադրողական աշխատանք, չեն վարձատրվում կամ չեն փոխհատուցվում:




Երկրորդային հետազոտությունները ևս հաստատում են այս օրինաչափությունը: Ըստ «Հայաստանի գենդերային պրոֆիլը (2024)» զեկույցի՝ աշխատաշուկայից դուրս գտնվող 25-29 տարեկանների 82%-ը և 25-49 տարեկանների 80%-ը կանայք են, ինչի հիմնական պատճառը չվճարվող տնային աշխատանքն է (EU4Gender Equality Reform Helpdesk (2024)): Ընդ որում՝ երեխաների առկայությունը սահմանափակում է բացառապես կանանց զբաղվածությունը. երկու երեխա ունեցող մայրերի՝ աշխատաշուկային չմասնակցելու մակարդակը վեց անգամ բարձր է համանման կարգավիճակով հայրերի ցուցանիշից:

Խնամքի այս կառուցվածքային բեռը սերտորեն կապված է նաև սոցիալական նորմերի հետ. կանանց 66%-ը և տղամարդկանց 75%-ը կարծում են, որ նախադպրոցական տարիքի երեխայի համար ավելի լավ է, եթե մայրը չի աշխատում (EU4Gender Equality Reform Helpdesk (2024)): Այս կարծրատիպերը գործնականում կանխորոշում են կանանց մասնագիտական ընտրությունները և սահմանափակում մասնագիտական աճը, վերապատրաստումն ու շարժունակությունը:

7.5 Ձեռնարկատիրություն, շուկա և տեսանելիություն

Ձեռնարկատիրությունը հաճախ ներկայացվում է որպես կանանց տնտեսական ազատության ապահովման միջոց, հատկապես այն համայնքներում, որտեղ ֆորմալ աշխատատեղերը քիչ են: Սակայն տվյալները ցույց են տալիս, որ բիզնես սկսելը կանանց համար ոչ միայն ֆինանսական, այլև սոցիալական, տարածքային և խորհրդանշական ռիսկ է: Կանանց նկատմամբ կանխակալ վերաբերմունք կարող է դրսևորվել հատկապես տարածք վարձելիս, գործարք կնքելիս, հաճախորդների հետ աշխատելիս կամ շուկայում արտադրանքը ներկայացնելիս:



Աղյուսակ 8. Բիզնես չսկսելու պատճառներ

Քանակական տվյալները ցույց են տալիս, որ հարցվածների 24.8%-ը ինքնազբաղված է կամ ունի բիզնես: Միևնույն ժամանակ, բիզնես չսկսելու կամ չընդլայնելու հիմնական պատճառների թվում առավել հաճախ նշվել են մեկնարկային կապիտալի բացակայությունը՝ 20.4%, ռիսկի դիմելու վախը՝ 17.5%, բիզնես վարելու համար անհրաժեշտ գիտելիքի պակասը՝ 11.7%, հետաքրքրված չլինելը՝ 8.3%, ժամանակի աղքատությունը՝ 6.3%, ինչպես նաև ինքնավստահության պակասը և ընտանեկան պարտականությունները՝ 5.8%-ական: Այս տվյալները ցույց են տալիս, որ բիզնես սկսելու կամ ընդլայնելու խոչընդոտները չեն սահմանափակվում ֆինանսական ռեսուրսների բացակայությամբ. դրան զուգահեռ գործում են գիտելիքի, վստահության, ժամանակի և ընտանիքի ներսում պարտականությունների հետ կապված սահմանափակումներ:

«Բիզնես սկսելու համար կնոջ ամենադժվար քայլը որոշում կայացնելն է. հետո պետք են ֆինանսական միջոցներ և ընտանիքի հենարան»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**

«Եթե ընտանիքս հենարան չլիներ, ես իմ կենտրոնը չէի կարող հիմնել. միայն կրթությունն ու ձգտումը բավարար չէին»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**

«Կինը եթե տարածք է փնտրում կամ գործ է սկսում, կարող են իրեն լուրջ չվերաբերվել կամ խաբել. բիզնես սկսելու ռիսկը կնոջ համար ավելի մեծ է»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**

«Բիզնեսում երբեք մենակ հաջողության չեն հասնում. պետք է մարդկանց հետ աշխատել և չվախենալ, որ եթե իմանան քո գործի մասին, կվերցնեն ձեռքիցդ»:-

Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**

Աղյուսակ 8-ը ներկայացնում է այն գործոնները, որոնց պատճառով կանայք չեն սկսում կամ չեն ընդլայնում բիզնեսը: Այս փուլում խոսքը հիմնականում նախնական արգելքների մասին է՝ մեկնարկային կապիտալի բացակայություն, ռիսկի դիմելու վախ, բիզնես վարելու համար անհրաժեշտ գիտելիքի պակաս, ժամանակի սահմանափակում, ինքնավստահության պակաս կամ ընտանեկան պարտականություններ: Այսինքն՝ այս տվյալները ցույց են տալիս, թե ինչն է խանգարում կնոջը առաջին քայլն անելու կամ բիզնես սկսելու որոշում կայացնելու:

Հարցազրույցները ցույց են տալիս, որ որոշում կայացնելու փուլում ընտանիքի աջակցությունը կարող է վճռական նշանակություն ունենալ: Որոշ կանանց համար ամուսնու, ծնողների կամ ընտանիքի այլ անդամների աջակցությունը հնարավորություն է տալիս սկսելու բիզնես, մասնակցելու դասընթացի կամ օգտագործելու սեփական հմտությունները եկամուտ ստանալու համար: Միևնույն ժամանակ, ընտանիքի աջակցությունը որոշ դեպքերում կարող է ուղեկցվել վերահսկողությամբ՝ սահմանափակելով, թե ինչ տեսակի բիզնես է «հարմար» կնոջ համար, արդյոք նա կարող է աշխատել հաճախորդների հետ, գնալ քաղաք, վարձել տարածք, մասնակցել վերապատրաստման կամ իր բիզնեսը հանրայնորեն ներկայացնել:

Ի տարբերություն Աղյուսակ 8-ի՝ Աղյուսակ 9-ը վերաբերում է արդեն բիզնես սկսելու կամ ընդլայնելու ընթացքում առաջացող դժվարություններին: Տվյալները ցույց են տալիս, որ այս փուլում ամենահաճախ նշված խոչընդոտը մեկնարկային կապիտալի պակասն է. այն նշել է հարցվածների 23.3%-ը: Դրան հաջորդում են աջակցության պակասը՝ 16.0%, շուկայի հասանելիության սահմանափակումները՝ 15.5%, գրանցման և հարկերի հետ կապված խնդիրները՝ 8.3%, մրցակցությունը՝ 6.8%, ինչպես նաև վարկի հասանելիությունը և ընտանեկան պարտականությունները՝ 4.4%-ական: Ավելի փոքր խմբեր նշել են նաև տրանսպորտի հետ կապված խնդիրները՝ 2.4%, և սոցիալական քննադատությունը՝ 1.5%:



Աղյուսակ 9. Բիզնես սկսելու/ընդլայնելու դժվարություններ

Այս խնդիրներին կարող են բախվել նաև տղամարդիկ, սակայն կանանց պարագայում դրանք հաճախ ավելի են սրվում գենդերային գործոնների պատճառով: Կանայք ավելի հաճախ ունեն խնամքի և տնային աշխատանքի մեծ բեռ, ժամանակի և շարժունակության սահմանափակումներ, ավելի քիչ փաստաթղթավորված գույք կամ գրավի առարկա, ինչպես նաև ավելի մեծ կախվածություն ընտանիքի աջակցությունից: Բացի այդ՝ որոշ համայնքներում կնոջ՝ բիզնես սկսելը կամ իր աշխատանքը հանրայնորեն ներկայացնելը կարող է ուղեկցվել կասկածով, քննադատությամբ կամ վերահսկողությամբ: Հետևաբար, կանանց ձեռնարկատիրության սահմանափակումները պետք է պայմանավորել ոչ միայն որպես կապիտալի կամ բիզնես վարելու գիտելիքի պակասով, այլև ֆինանսական, ընտանեկան, սոցիալական և տարածքային գործոնների համակցությամբ:

Տեսանելիության հարցը հատկապես կարևոր է: Մի քանի մասնակիցներ ընդգծում են, որ մեր օրերում «լավ լինելը» բավարար չէ. պետք է կարողանալ ներկայացնել, գովազդել, վաճառել և շուկա մտնել: Սա նշանակում է, որ կանանց ձեռնարկատիրության աջակցության ծրագրերը պետք է ներառեն ոչ միայն հմտությունների զարգացում կամ անհրաժեշտ սարքավորումներ, այլև մարքեթինգ, թվային վաճառք, լոգիստիկա, հաճախորդների ցանց և երկարաժամկետ մենթորություն:

«Մարդիկ կան, ովքեր չունեն մարքեթինգի և իրենց աշխատանքը գովազդելու հմտություն, և այդ պատճառով դուրս են մնում մեծ լսարանի աչքից»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան/ազգային փոքրամասնության ներկայացուցիչ**

«Հիմա ճանաչվելու համար պետք է ակտիվ լինես, քեզ ցույց տաս. միայն լավ լինելը բավարար չէ»:


Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**

«Կանանց փոքր բիզնես ծրագրերը հաճախ տալիս են կապիտալ, բայց չեն լուծում շուկայի հասանելիությունը, հմտությունների բացը կամ ընտանեկան սահմանափակումները»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**



Քանակական տվյալները նաև ցույց են տալիս, թե աջակցության որ տեսակներն են կանայք համարում առավել օգտակար բիզնես սկսելու կամ զարգացնելու համար: Ամենահաճախ նշվել են դրամաշնորհները՝ 79.1%, ցածր տոկոսադրույքով վարկերը՝ 40.8%, բիզնես մենթորությունը՝ 31.1%, շուկայի հասանելիությունը՝ 17.5%, թվային հմտությունները՝ 8.3%, տրանսպորտային աջակցությունը՝ 6.3%, իրավաբանական կամ հաշվապահական աջակցությունը՝ 5.8%, երեխայի խնամքի աջակցությունը՝ 3.4%: Այս բաշխումը ցույց է տալիս, որ կանայք բիզնես սկսելու կամ ընդլայնելու համար կարիք ունեն ոչ միայն ֆինանսական միջոցների, այլև ուղեկցող ծառայությունների՝ մենթորություն, շուկայի հետ կապ, թվային հմտություններ, իրավական և հաշվապահական խորհրդատվություն, ինչպես նաև խնամքի և տեղաշարժի գործնական լուծումներ:



Աղյուսակ 10. Բիզնես սկսելու կամ զարգացնելու համար օգտակար աջակցություն

Ձեռնարկատիրության խոչընդոտները պետք է դիտարկել նաև հարկային քաղաքականության և վարչարարության տեսանկյունից: Իրավական վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկային համակարգը հաճախ ներկայացվում է որպես չեզոք գործիք, սակայն դրա ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա կարող է տարբեր լինել՝ պայմանավորված եկամտի մակարդակով, խնամքի պարտականություններով, փոքր բիզնես վարելու հնարավորություններով և սպառման կառուցվածքով[56]: Փոքր բիզնեսների համար հարկային և հաշվապահական բեռը, իրավաբանական ծառայությունների բարձր արժեքը, ինչպես նաև կանանց ձեռնարկատիրությանն ուղղված հատուկ հարկային խթանների բացակայությունը կարող են սահմանափակել կանանց կողմից ղեկավարվող բիզնեսի կայունությունը[57]: Այս պատճառով բիզնեսի աջակցությունը չպետք է սահմանափակվի միայն դրամաշնորհով կամ վարկով. այն պետք է ներառի նաև հարկային, հաշվապահական, իրավաբանական և շուկայի հասանելիությանն ուղղված աջակցություն:

56 Եզրահանգումն արված է հետազոտության առաջին փուլում կատարված «Կանանց տնտեսական արդարության ապահովման մեխանիզմների իրավական վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունից:

57 Նույն տեղում:

7.6 Ֆինանսական ծառայությունների հասանելիություն

Վարկերի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս ֆորմալ չեզոքության և գործնական անհավասարության հակադրությունը: Բանկային համակարգի ներկայացուցիչների կամ որոշ մասնակիցների տեսանկյունից սեռը կարող է չլինել վարկավորման բացահայտ չափանիշ. եթե կա եկամուտ, վարկային պատմություն և վարկունակությունը հաստատող փաստաթղթեր, վարկը հասանելի է: Սակայն խնդիրն այն է, որ հենց այդ նախապայմանները գենդերացված են. կանայք ավելի հաճախ ունեն անկանոն եկամուտ, գույքի կամ գրավի առարկայի բացակայություն, չգրանցված աշխատանք կամ ընտանիքի միջոցով տնօրինվող ֆինանսներ:

«Վարկ կամ ֆինանսական աջակցություն ստանալը կարող է բարդ լինել, եթե կինը չունի կայուն եկամուտ, գույք կամ երաշխավոր»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

«Բանկը կարող է սեռային չափորոշիչ չդնել, բայց եթե եկամուտ չունես, խնդիրը հենց այնտեղից է սկսվում»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**


«Այս դեպքում սեռով պայմանավորված սահմանափակում չկա. եթե կինը բավարար եկամուտ ունի, սեռը էական չէ»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան, բանկային ոլորտ/նախորդ հարցազրույցներ**

«Ամուսնուս մահից հետո ստիպված էի փոքր բիզնես սկսել, բայց բանկերը առանց տղամարդ երաշխավորի վարկ չէին տալիս»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Սյունիք**

Քանակական տվյալները ևս արտացոլում են այս պատկերը: Ֆինանսական աջակցություն կամ վարկ ստանալու հիմնական խոչընդոտների շարքում ամենահաճախ նշվել է ցածր կամ անկանոն եկամուտը՝ 62.1%: Դրան հաջորդում են գույքի կամ գրավի առարկայի բացակայությունը՝ 33.5%, վարկային պատմության պակասը՝ 20.9%, բարձր տոկոսադրույքները՝ 19.9% և ֆորմալ աշխատանքի բացակայությունը՝ 18.0%: Այս տվյալները ցույց են տալիս, որ ֆինանսական միջոցների հասանելիության խնդիրը չի սահմանափակվում միայն բանկերի քաղաքականությամբ. այն սկսվում է ավելի վաղ՝ աշխատանքի, եկամտի կայունության, գույքի փաստաթղթավորման և ընտանիքի ներսում ֆինանսական ռեսուրսների բաշխման մակարդակում:



Աղյուսակ 11. Ֆինանսական աջակցություն կամ վարկ ստանալու հիմնական խոչընդոտները


Այս տվյալները ցույց են տալիս, որ ֆինանսական համակարգի ֆորմալ չեզոքությունը դեռ չի ենթադրում հավասար հասանելիություն: Բանկային կամ վարկային համակարգը կարող է սեռի/գենդերի հիմքով բացահայտ տարբերակում չդնել, սակայն վարկ ստանալու համար անհրաժեշտ նախապայմանները՝ կայուն եկամուտ, գրավ, փաստաթղթավորված գույք, ֆորմալ աշխատանք և վարկային պատմություն, կանանց համար ավելի դժվարհասանելի են: Իրավական վերլուծության տեսանկյունից սա տնտեսական արդարության խնդիր է, քանի որ գույքային և աշխատանքային անհավասարությունները վերարտադրվում են ֆինանսական ծառայությունների մակարդակում[58]: Այսինքն՝ կանայք կարող են օրենքով ունենալ վարկի կամ ֆինանսական աջակցության դիմելու իրավունք, բայց գործնականում չունենալ այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են այդ իրավունքը իրացնելու համար:

Գույքի կամ գրավի բացակայությունը հատկապես կարևոր է, քանի որ այն անմիջականորեն սահմանափակում է կանանց վարկունակությունը: Ընդհանուր ընտրանքի մակարդակում հարցվածների 49.0%-ը չունի փաստաթղթավորված գույք իր անունով կամ համատեղ, իսկ 44.7%-ը նշել է, որ հողը կամ գույքը ավելի հաճախ ժառանգում են որդիները: Խմբային խաչաձև ցուցանիշները ցույց են տալիս, որ գույքային անապահովությունը հատկապես բարձր է եկամուտ չունեցող կանանց շրջանում՝ 71.7% (եկամուտ չունեցող 46 կանանցից 33-ը չունի փաստաթղթավորված գույք իր անունով կամ համատեղ), ինչպես նաև գյուղական բնակավայրերում՝ 58.7%: Սա նշանակում է, որ նույնիսկ եթե ֆինանսական հաստատությունը ֆորմալ առումով սեռային տարբերակում չի ցուցաբերում, վարկի համար պահանջվող նախապայմանները՝ գրավի առարկա, սեփականություն, կայուն եկամուտ և վարկային պատմություն, կանանց համար ավելի դժվարհասանելի են դառնում գույքային և ժառանգական անհավասարությունների պայմաններում:

Իրավական վերլուծությունը այս խնդիրը դիտարկում է որպես ֆորմալ իրավահավասարության և գործնական գույքային անվտանգության միջև

58 Եզրահանգումն արված է հետազոտության առաջին փուլում կատարված «Կանանց տնտեսական արդարության ապահովման մեխանիզմների իրավական վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունից:

խզում: Թեև ՀՀ օրենսդրությամբ կանայք և տղամարդիկ ունեն հավասար ժառանգական և սեփականության իրավունքներ, ընտանիքի ներսում գործող ոչ ֆորմալ նորմերը, գույքի գրանցման պրակտիկաները և կանանց չվարձատրվող աշխատանքը չճանաչելը սահմանափակում են այդ իրավունքների լիարժեք իրացումը[59]: Տնային աշխատանքը, երեխաների և տարեցների խնամքը, ընտանիքի գույքի պահպանումը կամ ամուսնու մասնագիտական առաջընթացին աջակցելը հազվադեպ են դիտարկվում որպես ներդրում գույքի ձևավորման կամ պահպանման մեջ: Արդյունքում, հատկապես ամուսնալուծության, այրիանալու, ընտանեկան բռնության կամ փաստացի միության դադարեցման դեպքում կանայք կարող են մնալ առանց բավարար գույքային և բնակարանային պաշտպանության:



Աղյուսակ 12. Եկամտի կարգավիճակի և փաստաթղթավորված գույքի բացակայության կապը

Այս հակադրությունը ցույց է տալիս, որ ֆինանսական ներառումը չպետք է սահմանափակվի «կանայք կարող են դիմել վարկի» ձևակերպմամբ: Կարևոր է նաև, թե արդյոք նրանք ունեն բավարար և կայուն եկամուտ, գույք կամ գրավի առարկա, երաշխավոր, վարկային պատմություն, ֆինանսական գրագիտություն և ռիսկերը հասկանալու հնարավորություն: Եթե այս նախապայմանները բացակայում են, վարկը կարող է դառնալ ոչ թե հնարավորություն, այլ պարտքային խոցելիության աղբյուր:

«Հայաստանում վարկ տալիս են գրեթե բոլորին, և դա շատ վատ է, որովհետև շատերը չեն գիտակցում պատասխանատվությունը և ընկնում են վարկերի տակ»

Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**




59 Եզրահանգումն արված է հետազոտության առաջին փուլում կատարված «Կանանց տնտեսական արդարության ապահովման մեխանիզմների իրավական վերլուծությունը Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունից:

Քանակական տվյալները նաև ցույց են տալիս, որ ֆինանսական ծառայություններից ինքնուրույն օգտվելու հնարավորությունը հավասարաչափ բաշխված չէ: Եկամուտ չունեցող կանանց 13.0%-ը նշել է, որ չունի բանկային ծառայություններից ինքնուրույն օգտվելու հնարավորություն կամ ունի քարտ/հաշիվ, բայց ինքնուրույն չի օգտագործում, իսկ ոչ կանոնավոր եկամուտ ունեցողների շրջանում այդ ցուցանիշը 11.5% է: Սա կարևոր է, քանի որ ֆինանսական անկախությունը չի սահմանափակվում միայն վարկ ստանալու հնարավորությամբ. այն նաև ներառում է բանկային գործիքներից ինքնուրույն օգտվելու, ֆինանսական որոշումներ կայացնելու և ընտանիքի ներսում ֆինանսական հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելու կարողությունը:

7.7 Գույք, ժառանգություն և բնակարանային անվտանգություն

Գույքի և ժառանգության թեման առավել հստակ ցույց է տալիս իրավական հավասարության և սոցիալական պրակտիկայի միջև առկա խզումը: Մասնակիցների մեծ մասը գիտի, որ դուստրերն ու որդիները ըստ օրենքի ունեն հավասար իրավունքներ, սակայն ընտանիքի ներսում հաճախ գործում է այլ տրամաբանություն. «հայրական տունը» մնում է տղային, աղջիկը «ուրիշ տուն է գնում», և բաժին պահանջելը կարող է ընկալվել որպես ընտանիքի դեմ քայլ:

Քանակական տվյալները ևս հաստատում են, որ գույքային անվտանգությունը կանանց տնտեսական արդարության առանցքային խնդիրներից է: Հարցվածների 49.0%-ը չունի փաստաթղթավորված գույք իր անունով կամ համատեղ, իսկ 44.7%-ը նշել է, որ հողը կամ գույքը ավելի հաճախ ժառանգում են որդիները: Սա ցույց է տալիս, որ ֆորմալ իրավահավասարության պայմաններում էլ գույքի իրական հասանելիությունը և ժառանգության գործնական պրակտիկաները շարունակում են լինել գենդերացված:



Աղյուսակ 13. Ժառանգության գենդերային օրինաչափությունները՝ ըստ կանանց սեփականության կարգավիճակի

Խմբային վերլուծությունը ցույց է տալիս, որ փաստաթղթավորված գույքի բացակայությունը հատկապես բարձր է եկամուտ չունեցող կանանց շրջանում: Կանոնավոր եկամուտ ունեցողների 43.8%-ը չունի փաստաթղթավորված գույք՝ իր անունով կամ համատեղ, ոչ կանոնավոր եկամուտ ունեցողների շրջանում այդ ցուցանիշը 41.0% է, իսկ եկամուտ չունեցողների շրջանում՝ 71.7% (տես Աղյուսակ 12): Սա կարևոր է, քանի որ գույքային անապահովությունը և եկամտի բացակայությունը փոխադարձաբար ուժեղացնում են միմյանց. առանց սեփական կամ համատեղ գույքի կինը ավելի դժվար է ստանում վարկ, ավելի քիչ ազդեցութ-

յուն և ուժ ունի ընտանիքում որոշումների կայացման մեջ և ավելի սահմանափակ հնարավորություններ ունի բնակարանային անվտանգության տեսանկյունից:

«Օրենքով դուստրերն ու որդիները հավասար իրավունքներով կարող են ժառանգել, բայց ավանդույթների պատճառով կանայք հաճախ հրաժարվում են իրենց բաժնից կամ չեն պահանջում»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

«Հայրական տունը հիմնականում անցնում է փոքր տղային կամ նրան, ում հետ ծնողները ապրում են, իսկ աղջիկը հաճախ հրաժարվում է իր բաժնից»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**

«Տունը կտակում են տղային, որովհետև տղան է տան սերունդը շարունակողը, իսկ կնոջ մասով ասում են՝ ամուսնացել ես, քո ամուսինը թող քեզ պահի»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**

«Քույրերին պարզապես ասում են՝ հրաժարվեք ժառանգությունից: Եթե կինը պահանջում է իր բաժինը, ասում են՝ կռվում է մի տան համար, որը իրեն չի պատկանում»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Սյունիք**

Գույքի հարցը պետք է դիտարկել ոչ միայն որպես իրավական, այլև որպես տնտեսական անվտանգության և ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորության տեսանկյունից: Եթե կնոջ անունով գույք չկա, նրա համար կարող է ավելի դժվար լինել վարկ ստանալ, բիզնես սկսել, նա ավելի կախված է ամուսնու կամ ընտանիքի բնակարանից, և բռնության դեպքում ավելի քիչ հնարավորություն ունի հեռանալու: Այսպիսով՝ գույքային անհավասարությունը վերածվում է տնտեսական կախվածության, իսկ տնտեսական կախվածությունը՝ որոշումների և անվտանգության սահմանափակման:

«Բռնության ենթարկված կանանց մոտ 90%-ի դեպքում կա գույքային խնդիր, և հենց դա է խանգարում նրանց բաժանվել կամ հեռանալ»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

Երկրորդային հետազոտությունները նույնպես հաստատում են այս կապը: «Հայաստանի գենդերային պրոֆիլը (2024)» զեկույցը (Armenia Country Gender Profile 2024) նշում է, որ կանանց՝ գույքի, հողի և այլ ակտիվների նկատմամբ իրավունքների լիարժեք իրացումը Հայաստանում շարունակում է սահմանափակված լինել ոչ միայն իրավական իրազեկվածության բացերով, այլև սոցիալական նորմերով, ժառանգության ոչ ֆորմալ պրակտիկաներով և գույքի գրանցման եղանակներով: Գյուղատնտեսության ոլորտում հատկապես ընդգծվում է, որ գյուղական համայնքում ապրող կանանց՝ հողի սեփականության հասանելիությունը հաճախ սահմանափակվում է հայրիշխանական ամուսնության, ժառանգության և գույքի գրանցման պրակտիկաներով, որոնք նախապատվություն են տալիս ընտանիքի

տղամարդ ղեկավարներին (EU4Gender Equality Reform Helpdesk (2024)):

Այս դիտարկումը կարևոր է, քանի որ ցույց է տալիս՝ գույքային իրավունքի խնդիրը միայն իրավական կարգավորման հարց չէ: Նույնիսկ այն դեպքում, երբ կանայք օրենքով ունեն հավասար ժառանգություն ստանալու իրավունքներ, ընտանիքի ներսում կարող են գործել այլ կանոններ. հողը կամ տունը դիտարկվում են որպես որդուն փոխանցվող ռեսուրս, իսկ աղջկա՝ բաժին պահանջելը կարող է ընկալվել որպես ընտանիքի ներսում անհամաձայնություն կամ «ոչ բարոյական» քայլ:

Հավաքված տվյալներում հետաքրքիր է նաև «բարոյական իրավունքի» ընկալումը: Որոշ մասնակիցներ ընդունում են օրենքով ամրագրված հավասար իրավունքը, բայց նշում են, որ ծնողից գույք պահանջելը բարոյապես դժվար է, քանի որ գույքը ծնողն է ստեղծել: Այս մոտեցումը հատկապես կարևոր է, որովհետև այն ցույց է տալիս, որ իրավական իրազեկվածությունը բավարար չէ. պետք է աշխատել նաև ժառանգության շուրջ ամոթի, ընտանեկան պարտքի և «լավ աղջկա» սպասումների հետ:

> *«Ես ինչպե՞ս կարող եմ ծնողիցս ինչ-որ բան պահանջել, երբ ծնողն է ինձ պահել ու մեծացրել. եթե ծնողը տա, այլ հարց է, բայց պահանջելու բարոյական իրավունք չեմ տեսնում»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Կոտայք**

7.8 Ճանաչում, անտեսանելի աշխատանք և հաջողության սոցիալական չափանիշներ

Կանանց աշխատանքի անտեսանելիությունը հետազոտության հիմնական ընդհանուր թեմաներից է: Տնային աշխատանքը, երեխաների խնամքը, գյուղատնտեսական աշխատանքը, ընտանիքի կազմակերպչական ծանրաբեռնվածությունը և նույնիսկ մասնագիտական ոչ տեսանելի աշխատանքը հաճախ չեն ունենում սոցիալական ճանաչում: Հաջողակ լինելու չափանիշները հաճախ սահմանում է հասարակությունը, սակայն նույն հասարակությունը միշտ չէ, որ տեսնում է այն աշխատանքը, որը չունի բարձր եկամուտ, պաշտոն, մեդիայում տեսանելիություն կամ հանրային շփում:

Քանակական տվյալները ևս հաստատում են, որ կանանց չվճարվող աշխատանքը զգալի ծավալ ունի, սակայն հաճախ մնում է անտեսանելի: Հարցվածների 62.1%-ը որպես տնտեսական ակտիվությունը սահմանափակող գործոն նշել է երեխաների խնամքը, 30.6%-ը՝ տնային գործերը, իսկ շուրջ մեկ հինգերորդը՝ տարեցների կամ հիվանդ/հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամի խնամքը: Այս տվյալները կարևոր են ճանաչման տեսանկյունից, քանի որ ցույց են տալիս՝ կանայք մեծ ներդրում են ունենում ընտանիքի սոցիալական և տնտեսական վերարտադրության մեջ, սակայն այդ աշխատանքը հազվադեպ է ընկալվում որպես «իրական» կամ արտադրողական:

> *«Շատ բան անող կանայք ընտանիքում են. նրանք ամեն հոգս իրենց վրա են վերցնում, բայց նրանց վաստակը միշտ չէ, որ ըստ արժանվույն գնահատվում է»:*
> Խորքային հարցազրույցի մասնակից, Գեղարքունիք

> *«Գյուղում կանայք հողագործություն ու անասնապահություն են անում, երբեմն 18-ժամյա ռեժիմով, բայց չեն ստանում այն արդյունքն ու ճանաչումը, ինչ գրանցված աշխատողը»:*
> Խորքային հարցազրույցի մասնակից, Շիրակ

> *«Հաջողակի և անհաջողակի պիտակը հասարակության գնահատականն է, բայց մարդը կարող է իր ճանապարհի ամենաբարդ փուլում լինել և իրեն չհամարել հաջողակ»:*
> Շիրակի ՖԽՔ

Հարցազրույցները ցույց են տալիս, որ ճանաչման պակասը հաճախ կապված է աշխատանքի վայրի և տեսանելիության հետ: Եթե աշխատանքը կատարվում է տան ներսում, ընտանիքի համար, գյուղատնտեսական տնտեսության մեջ կամ որպես «օգնություն» ընտանեկան բիզնեսին, այն հաճախ չի ընկալվում որպես լիարժեք տնտեսական ներդրում: Նույն աշխատանքը, եթե լիներ վարձատրվող, գրանցված կամ հանրայնորեն տեսանելի, կարող էր համարվել արժեքավոր և արտադրողական, սակայն ընտանիքի ներսում այն հաճախ մնում է «կանացի պարտականություն»:

Այս խնդիրը հատկապես ընդգծված է գյուղական համայնքներում, որտեղ կանայք կարող են միաժամանակ զբաղվել տնային գործերով, երեխաների խնամքով, անասնապահությամբ, հողագործությամբ, սննդի պատրաստմամբ, տարեցների խնամքով և ընտանիքի առօրյայի կազմակերպմամբ: Սակայն այդ ամբողջ աշխատանքը հաճախ չի ապահովում եկամուտ, սոցիալական հեղինակություն կամ որոշումների կայացման վրա ազդեցություն: Այսինքն՝ կանայք իրականում մասնակցում են ընտանիքի և համայնքի տնտեսական վերարտադրությանը, բայց այդ մասնակցությունը մնում է անտեսանելի և պակաս արժևորված:

Հաջողության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս երկու մրցակցող չափանիշներ: Առաջինը արտաքին չափանիշն է՝ հասարակության, համայնքի, հաճախորդների, գործընկերների կամ ընտանիքի կողմից տրվող գնահատականը: Երկրորդը ներքին չափանիշն է՝ արդյոք կինը գոհ է իր ընտրություններից, արժեքներից և ձեռքբերումներից: Կանանց համար այս երկու չափանիշների միջև լարվածությունն հատկապես ընդգծված է, որովհետև հասարակական հաջողությունը հաճախ պահանջում է միաժամանակ լինել աշխատող, մայր, կին, խնամող, համեստ, ֆինանսապես օգտակար և հանրային դաշտում չափավոր տեսանելի:

> *«Հասարակությունը կարող է կնոջը հաջողակ համարել, եթե ունի աշխատանք, ընտանիք, երեխաներ և ամեն տեղ կա, բայց եթե կինն ունի ֆինանսական անկախություն և չունի ընտանիք, նրան լիարժեք հաջողակ չեն համարում»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**

> *«Կանայք կարող են մեծ ջանք գործադրել, բայց հանրային ճանաչում չունենալ, որովհետև ակնկալիքները նրանցից շատ ավելի մեծ են, քան տղամարդկանցից»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

Այս տվյալները ցույց են տալիս, որ կանանց հաջողությունը հաճախ գնահատվում է ոչ միայն տնտեսական արդյունքներով, այլև սոցիալական սպասումներին համապատասխանությամբ: Կինը կարող է ունենալ աշխատանք, եկամուտ կամ բիզնես, բայց եթե չի համապատասխանում «լավ կնոջ», «լավ մոր» կամ «համեստ կնոջ» սպասումներին, նրա հաջողությունը կարող է կասկածի տակ դրվել: Մյուս կողմից՝ եթե կինը ամբողջությամբ նվիրվում է ընտանիքին, նրա աշխատանքը կարող է բարոյապես գնահատվել, բայց տնտեսապես չճանաչվել:

Ճանաչման պակասը նաև ազդում է կանանց ինքնագնահատականի և հետագա տնտեսական ակտիվության վրա: Երբ կնոջ աշխատանքը չի գնահատվում, նա կարող է սկսել իր ներդրումն ընկալել որպես «սովորական» կամ «ոչ կարևոր», նույնիսկ եթե այդ աշխատանքը ընտանիքի գոյատևման և բարեկեցության հենասյուներից է: Այս իմաստով ճանաչումը միայն խորհրդանշական հարց չէ. այն ազդում է կնոջ ինքնավստահության, հանրային մասնակցության, մասնագիտական առաջխաղացման և տնտեսական ինքնավարության վրա:

7.9 Տեղահանություն և հետկոնֆլիկտային տնտեսական վերակառուցում

Պատերազմը և տեղահանությունը կանանց տնտեսական արդարության հարցը կապում են գոյատևման, ինքնության և վերակառուցման հետ: Տեղահանված կանանց համար տնտեսական ինտեգրումը չի սկսվում միայն աշխատանք գտնելուց: Այն ենթադրում է բնակարանային կայունություն, փաստաթղթերի առկայություն, մասնագիտական որակավորումների ճանաչում, երեխաների կրթության շարունակականություն, հոգեբանական կայունություն, համայնքային կապերի ձևավորում և նոր միջավայրում վստահության կառուցում:

Քանակական տվյալները ցույց են տալիս, որ տեղահանված կանանց շրջանում տնտեսական դժվարությունները բազմաշերտ են: Հարցվածների 11.2%-ը՝ 23 կին, Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներ են: Այս խմբում հատկապես հաճախ են նշվել բնակարանի կամ կացության խնդիրները՝ 69.6%, նոր համայնքում աշխատանք գտնելու դժվարությունը՝ 52.2%, եկամտի նվազումը կամ անկայունությունը՝ 43.5%, ինչպես նաև աշխատանքի կորուստը՝ 30.4%: Թեև այս ենթախմբի թվաքանակը փոքր է, տվյալները հստակ ցույց են տալիս, որ տեղահանությունը միաժամանակ ազդում է բնակարանի, եկամտի, աշխատանքի, մասնագիտական ինքնության և սոցիալական կապերի վրա:



Բնակարանի կամ կացության խնդիրներ	Նոր համայնքում աշխատանք գտնելու դժվարություն	Եկամտի նվազում կամ անկայունություն	Աշխատանքի կորուստ
16 | 69.6%	**12 | 52.2%**	**10 | 43.5%**	**7 | 30.4%**

Աղյուսակ 14. ԼՂ-ից տեղահանված կանանց հիմնական տնտեսական դժվարությունները

Իրավական վերլուծության տեսանկյունից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց տնտեսական արդարության հարցը պետք է դիտարկել որպես առանձին և խաչվող խոցելիության խնդիր[60]: Տեղահանված կանայք միաժամանակ բախվում են գույքի կորստի, բնակարանային անկայունության, աշխատանքային ստաժի և մասնագիտական որակավորման ճանաչման դժվարությունների, սոցիալական պաշտպանության սահմանափակումների և նոր համայնքներում ինտեգրման խնդիրների[61]: Հետևաբար, նրանց տնտեսական վերականգնումը չի կարող սահմանափակվել միայն ընդհանուր զբաղվածության կամ սոցիալական աջակցության ծրագրերով: Անհրաժեշտ է հատուկ գենդերազգայուն մոտեցում, որը կներառի բնակարանային անվտանգություն, իրավական խորհրդատվություն, նախկին մասնագիտական փորձի ճանաչում, եկամուտ ստանալու հնարավորություններ և համայնքային ինտեգրում:


«2023 թվականի տեղահանումից հետո Հրապդանում սովորել եմ դիպչայն, մինչ այդ Ստեփանակերտում ստեղծագործական կենտրոնում էի սովորել: Երեխաներս փոքր էին, սկսեցի օնլայն բիզնեսով զբաղվել»:

Կոտայքի ՖԽՔ



Այս մեջբերումները ցույց են տալիս, որ տեղահանությունը միայն նյութական կորուստ չէ: Այն նաև մասնագիտական, սոցիալական և ինքնության կորուստ է: Կնոջ՝ նախկինում ունեցած աշխատանքը, փորձը, կապերը, հանրային ճանաչումը կամ մասնագիտական ինքնությունը նոր միջավայրում կարող են չճանաչվել կամ չվերածվել նոր հնարավորության: Անհրաժեշտ է նաև աջակցել նրանց նախկին փորձի ճանաչմանը, նոր համայնքում կապերի ստեղծմանը, շուկայի հասանելիությանը և հոգեբանական կայունության վերականգնմանը:


Հետկոնֆլիկտային փորձը նաև փոխում է ընտանիքի ներսում ուժային հարաբերությունները: Երբ տղամարդը կորցնում է աշխատանքը, տունը կամ իր նախկին սոցիալական դերը, ընտանիքի տնտեսական ծանրությունը կարող է ընկնել կնոջ վրա: Սակայն այդ փոփոխությունը միշտ չէ, որ բացահայտ ճանաչվում է, որովհետև տղամարդու՝ «ապահովողի» դերի կորուստը կարող է ընկալվել որպես ամոթ կամ ընտանիքի ներսում լարվածության պատճառ: Այս պայմաններում կինը կարող է իրականում ապահովել ընտանիքի կարիքները, բայց ձևականորեն շարունակել ներկայացվել որպես կախյալ կամ երկրորդային տնտեսական դերակատար: Ավելին՝ հաճախ այս նոր տնտեսական դերը կնոջ ուսերին անցնում է այն դեպքում, երբ նա չունի բավարար աշխատանքային փորձ, մասնագիտական հմտություններ կամ եկամուտ ստեղծելու ռեսուրսներ:



7.10 Ինստիտուցիոնալ աջակցություն, ՀԿ-ներ, պետություն և ֆինանսական համակարգ

Ինստիտուցիոնալ աջակցության վերաբերյալ տվյալներում ՀԿ-ները հաճախ ներկայացվում են որպես ավելի վստահելի, ավելի ճկուն և հասանելի կառույցներ, հատկապես բռնության, տեղահանման, փոքր բիզնեսի, հոգեբանական աջակցության կամ դասընթացների հարցում: Պետական ծառայությունների վերաբերյալ պատկերը ավելի երկակի է. որոշ մասնակիցներ և փորձագետներ նշում են բարելավումներ, սակայն միաժամանակ խոսում են հասանելիության, իրազեկման, դեպքի կառավարման, վստահության և տեղական մակարդակում ծառայությունների մատուցման բացերի մասին:

Քանակական տվյալները նույնպես ցույց են տալիս, որ աջակցության ծրագրերի առկայությունը դեռևս չի նշանակում դրանց իրական հասանելիություն: Հարցվածների 68.4%-ը նշել է, որ լսել է կանանց տնտեսական աջակցության ծրագրերի մասին, սակայն ծրագրերից օգտվելու հիմնական խոչընդոտների շարքում տեղեկատվության պակասը նշել է 68.0%-ը: Սա ցույց է տալիս, որ խնդիրը միայն ծրագրերի բացակայությունը չէ. կարևոր է նաև, թե ինչպես են այդ ծրագրերը հաղորդակցվում, ում են հասնում, ինչ լեզվով և ինչ միջնորդների միջոցով, և արդյոք կանայք տեղեկացված են դիմելու ընթացակարգի, իրենց իրավունքների կամ հնարավորությունների մասին:



Աղյուսակ 15. Ծրագրերին հասանելիության խոչընդոտներ

«Դասընթացս և սարքերի ձեռքբերումը կազմակերպությունն է ֆինանսավորել, ու հիմա փոքր քայլերով փորձում եմ այս ոլորտում գտնել իմ եկամուտը»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Ծիրակ**

«ՀԿ-ներին ավելի շատ են վստահում, որովհետև նրանց սոցիալական աշխատողները և հոգեբանները ավելի բաց են»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Գեղարքունիք**

«Պետական ծառայությունների դիպայնը բարելավվել է, բայց հասանելիությունը հետ է մնում. ծրագրերը կան, մատուցումն է թույլ»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

«Ծրագրերը պետք է գան գյուղեր, ոչ թե սպասեն, որ գյուղի կանայք հասնեն ծրագրերին

Խորքային հարցազրույցի մասնակից, **Սյունիք**


Ծրագրային բացերից մեկը ընտրողական հասանելիությունն է: Դասընթացների, դրամաշնորհների կամ խորհրդատվական ծառայությունների մասին հաճախ առաջինը տեղեկանում են այն կանայք, որոնք արդեն ակտիվ են, ունեն կապեր, համացանցին հասանելիություն, շարժունակություն կամ տեղական կառույցների հետ հարաբերություններ: Առավել մեկուսացած, սոցիալապես անապահով, խնամքի ծանր բեռ ունեցող, հաշմանդամություն կամ առողջության խնդիր ունեցող, տեղահանված կամ ընտանեկան վերահսկողության տակ գտնվող կանայք կարող են դուրս մնալ ծրագրերից հենց տեղեկատվության, վստահության պակասի և ֆիզիկական հասանելիության սահմանափակումների պատճառով:

«Ծրագրերը հաճախ հասնում են այն կանանց, որոնք արդեն մասնակցում են հանդիպումների և ունեն տեղեկատվություն, իսկ մյուսները նորից դուրս են մնում»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

Քանակական տվյալները ցույց են տալիս, որ կանայք տնտեսական հզորացման համար առաջնային են համարում ոչ միայն ֆինանսական աջակցությունը, այլև կայուն զբաղվածության և կարողությունների զարգացման հնարավորությունները: Հարցվածներն առավել հաճախ որպես անհրաժեշտ աջակցություն նշել են աշխատատեղերի ստեղծումը՝ 68.9%, բիզնես դրամաշնորհները՝ 64.6%, և մասնագիտական վերապատրաստումը՝ 59.7%: Միևնույն ժամանակ, ավելի քիչ նշված, բայց քաղաքականության տեսանկյունից կարևոր կարիքների շարքում առանձնացվել են երեխայի խնամքի ծառայությունները՝ 17.0%, շուկայի հասանելիությունը՝ 15.5%, իրազեկման բարձրացումը՝ 11.7%, տրանսպորտային աջակցությունը՝ 10.7%, մենթորությունը՝ 9.2%, իրավաբանական աջակցությունը՝ 6.3%, և պաշտպանությունը տնտեսական բռնությունից՝ 2.9%:

Այս ցուցանիշները թվային առումով ավելի ցածր են, սակայն դրանք կարևոր են, քանի որ վերաբերում են այն պայմաններին, առանց որոնց կանանց մի մասը կարող է չօգտվել նույնիսկ առկա ծրագրերից: Օրինակ՝ եթե կինը չունի երեխայի խնամքի հնարավորություն, չի կարող հասնել ծրագրի իրականացման վայր, չունի տեղեկատվություն, իրավաբանական աջակցություն կամ մենթորություն, ապա դրամաշնորհը կամ վերապատրաստումը կարող է նրա համար գործնականում անհասանելի մնալ: Հետևաբար, այս տվյալները ցույց են տալիս, որ կանանց տնտեսական արդարությանն ուղղված ծրագրերը պետք է լինեն բազմաբաղադրիչ. միայն դրամաշնորհները կամ վերապատրաստումները բավարար չեն, եթե դրանք չեն ուղեկցվում խնամքի, տրանսպորտային միջոցների, տեղեկատվության, շուկայի հասանելիության և շարունակական աջակցության մեխանիզմներով:



Աղյուսակ 16. Կանանց տնտեսական հզորացման համար անհրաժեշտ աջակցության առաջնահերթ ուղղությունները



7.11 Խաչվող խոցելիություններ և ինտերսեկցիոնալ վերլուծություն

Հարցազրույցների, ՖԽՔ-ների և քանակական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ կանանց տնտեսական անարդարությունը խորանում է այն դեպքերում, երբ գենդերի գործոնը հատվում է խոցելիության այլ գործոնների հետ: Միայն «կին լինելը» չի բացատրում ամբողջ պատկերը. տնտեսական հնարավորությունների հասանելիությունը տարբեր կերպ է ձևավորվում՝ կախված բնակավայրից, տեղահանության փորձառությունից, հաշմանդամությունից կամ առողջության երկարաժամկետ խնդրից, ազգային փոքրամասնության կամ ԼԳԲՏՔ+/քվիր համայնքի պատկանելությունից, ինչպես նաև միայնակ մայր, այրի կամ խնամքի մեծ բեռ ունեցող կին լինելու հանգամանքից:

Ստորև ներկայացված աղյուսակը չի կրկնում նախորդ բաժինների ամբողջ վերլուծությունը, այլ ամփոփում է, թե ինչպիսի լրացուցիչ խոչընդոտներ են առաջանում, երբ կանանց տնտեսական խնդիրները հատվում են այլ խոցելիությունների հետ: Գյուղաբնակ, տեղահանված, հաշմանդամություն կամ առողջության երկարաժամկետ խնդիր ունեցող և խնամքի մեծ բեռ ունեցող կանանց վերաբերյալ զեկույցի նախորդ բաժիններում արդեն ներկայացվել են նաև քանակական ցուցանիշներ: Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ և ԼԳԲՏՔ+/քվիր կանանց վերաբերյալ տվյալները հիմնականում որակական են, սակայն դրանք կարևոր են, քանի որ ցույց են տալիս այն ռիսկերը, որոնք քանակական հարցման տվյալներում ամբողջությամբ չեն արտացոլվում:

Գյուղաբնակ կին



Տրանսպորտի սահմանափակ հասանելիություն, շուկայի սահմանափակ հասանելիություն, աշխատատեղերի սակավություն, համայնքային վերահսկողություն

Ցածր վարձատրվող կամ չվարձատրվող աշխատանք, սահմանափակ շարժունակություն, մասնագիտական աճի սահմանափակում

Տեղահանված կին



Բնակարանային անորոշություն, փաստաթղթային խնդիրներ, մասնագիտական կապերի կորուստ, հոգեբանական ծանրաբեռնվածություն

Աշխատանքի կորուստ, թերաշխատանք, եկամտի անկայունություն, նոր համայնքում ցածր վստահություն

Հաշմանդամություն ունեցող կին



Ֆիզիկական միջավայրի անհասանելիություն, գործատուների կանխակալություն, ծառայությունների և հարմարեցումների պակաս

Աշխատանքի, վերապատրաստման և ֆինանսական աջակցության սահմանափակ հասանելիություն

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ կին



Կրթության շարունակման սահմանափակում, համայնքային նորմեր, ընտանեկան վերահսկողություն, գույքային իրավունքի իրացման ավելի ուժեղ ոչ ֆորմալ արգելքներ

Աշխատաշուկա մուտքի դժվարություն, սեփականության և եկամուտ ստանալու սահմանափակ հնարավորություններ

ԼԲՏՔ+/քվիր կին



Ընտանեկան մերժում, outing-ի դեպքում աշխատանքից ազատման ռիսկ, հարկադիր «ուղղելու» կամ վերահսկելու փորձեր, պետական, սոցիալական, առողջապահական, հոգեբանական, իրավաբանական կամ բռնությունից պաշտպանության ծառայություններից խուսափելու վախ, ժառանգությունից զրկվելու ռիսկ

Բարձր տնտեսական անապահովություն, բնակարանային խոցելիություն, աշխատաշուկայում անտեսանելիություն, աջակցության համակարգերից դուրս մնալու հավանականություն

Միայնակ մայր կամ այրի



Միակ խնամող և ապահովող լինելու բեռ, սոցիալական կասկած, խնամքի աջակցության պակաս

Ժամանակի աղքատություն, ֆինանսական խոցելիություն, աշխատանքային ճկունության սահմանափակում

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ խոցելիությունները պարզապես չեն գումարվում, այլ կարող են փոխադարձաբար ուժեղացնել միմյանց: Օրինակ՝ գյուղաբնակ և հաշմանդամություն ունեցող կինը բախվում է ոչ միայն աշխատատեղերի պակասին, այլև տրանսպորտային միջոցների և ֆիզիկական միջավայրի անհասանելիությանը: Տեղահանված և միայնակ խնամող կինը միաժամանակ կարող է կորցրած լինել բնակարանը, մասնագիտական կապերը և ընտանիքի եկամտի կայունությունը: ԼԳԲՏՔ+/քվիր կնոջ դեպքում տնտեսական ռիսկերը կարող են կապված լինել ոչ միայն աշխատաշուկայում առկա խոչընդոտների, այլև ընտանեկան մերժման, բնակարանային անապահովության, ինքնության բացահայտման և անվտանգ ծառայություններից խուսափելու հետ:

«Մեր համայնքում շատ աղջիկների վաղ տարիքից չեն թողնում կրթություն ստանալ, և հետո մեծ տարիքում աշխատանք գտնելը դառնում է շատ դժվար»:

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ, **Երևան**

«Գյուղաբնակ և հաշմանդամություն ունեցող աղջիկ լինելու դեպքում քաղաք հասնելը կրկնակի դժվար էր՝ հաշմանդամության և հանրային տարածքների անհասանելիության պատճառով»:

Խորքային հարցազրույցի մասնակից, **Շիրակ**

ԼԲՏՔ+/քվիր կանանց դեպքում տնտեսական խոցելիությունը հաճախ ձևավորվում է մի քանի մակարդակներում: Առաջինը ընտանիքի ներսում մերժման կամ վերահսկողության ռիսկն է. եթե կնոջ սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը բացահայտվում է, նա կարող է կորցնել ընտանիքի աջակցությունը, ապահով բնակության վայրը կամ ժառանգության նկատմամբ ոչ ֆորմալ սպասելիքները: Երկրորդը աշխատաշուկայի ռիսկն է. outing-ի կամ ինքնության բացահայտման դեպքում հնարավոր է աշխատանքից ազատում, խտրական վերաբերմունք կամ աշխատանքային միջավայրում մեկուսացում: Երրորդը ծառայություններից օգտվելու սահմանափակումն է. եթե ծառայությունները չեն ընկալվում որպես անվտանգ, գաղտնի և ոչ խտրական, քվիր կանայք կարող են չդիմել իրավական, հոգեբանական, զբաղվածության կամ տնտեսական

աջակցության ծառայություններին նույնիսկ այն դեպքում, երբ դրանց կարիքը կա:

> *«Եթե բացահայտվում է մարդու սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, առաջին քայլը հաճախ տանից դուրս հանելն է կամ «ուղղելու» նպատակով փակ պահելը»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Երևան**

Տվյալներում առանձնացվում էր նաև outing-ի տնտեսական հետևանքը. ինքնության բացահայտումը կարող է հանգեցնել աշխատանքից ազատման, իսկ աշխատանքի կորուստը՝ արագ սոցիալական և եկամտի կտրուկ նվազման: Այս տեսանկյունից ԼԳԲՏՔ+/քվիր կանանց տնտեսական անապահովությունը միայն աշխատաշուկայի հարց չէ. այն կապված է ընտանիքի, բնակարանի, ժառանգության, անվտանգ ծառայությունների, գաղտնիության և սոցիալական պաշտպանության բացերի հետ:

Միայնակ մայրերի, այրիների և տեղահանված կանանց դեպքում խոցելիությունը հաճախ ձևավորվում է խնամքի և եկամտի համադրման դժվարությունից: Նրանք կարող են լինել ընտանիքի միակ ապահովողը և միաժամանակ հիմնական խնամողը, ինչի պատճառով աշխատանք ընտրելիս ստիպված են առաջնահերթություն տալ ոչ թե մասնագիտական աճին կամ բարձր վարձատրությանը, այլ աշխատանքի ճկունությանը, բնակության վայրի հեռավորությանը և ընտանիքի առօրյա կարիքների հետ համատեղելիությանը:

> *«Ես միայնակ մայր եմ երկու երեխաներով և միշտ փորձել եմ ամեն ինչ միայնակ անել: Այդ պատճառով ինձ համար անսովոր է, երբ որևէ մեկը ինչ-որ բան է անում ինձ համար»:*
>
> Խորքային հարցազրույցի մասնակից, **Կոտայք**

7.12 Կազմակերպությունների ծառայությունների քարտեզագրում

Կազմակերպությունների ծառայությունների քարտեզագրման արդյունքները լրացնում են հետազոտության ընդհանուր վերլուծությունը՝ ցույց տալով, թե կանանց տնտեսական մասնակցության և աջակցության հարցերը ինչպես են հասցեագրվում քաղաքացիական հասարակության և համայնքային ծառայությունների մակարդակում: Քարտեզագրման մեջ ընդգրկվել է 10 կազմակերպություն, որոնք գործում են տարբեր մարզերում և աշխատում են կանանց, խոցելի խմբերի, տեղահանված անձանց, բռնության ենթարկված անձանց, հաշմանդամություն ունեցող կանանց, գյուղաբնակ կանանց և երիտասարդների հետ:

Տվյալները ցույց են տալիս, որ քարտեզագրված կազմակերպությունների մեծ մասը կանանց տնտեսական խնդիրներին արձագանքում է առաջին հերթին հզորացման և կարողությունների զարգացման տրամաբանությամբ: 10 կազմակերպություններից 9-ը նշել է, որ իրականացրել կամ իրականացնում է կանանց տնտեսական հզորացմանը, տնտեսական արդարությանը, աշխատանքային իրավունքներին կամ տնտեսական ակտիվության ոլորտում գենդերային հավասարությանն առնչվող ծրագրեր: Սակայն կազմակերպությունների պատասխանների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ծրագրերը հիմնականում ձևակերպված են ոչ թե «տնտեսական արդարության», այլ տնտեսական հզորացման, ֆինանսական անկախության, մասնագիտա-

կան հմտությունների զարգացման, ինքնազբաղվածության և ձեռներեցության աջակցության լեզվով: Ծրագրային ուղղությունների մեջ ամենից հաճախ նշվել են բիզնես հմտությունների զարգացումը և ձեռներեցության խթանումը, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստումները և որակավորման բարձրացումը: Սա ցույց է տալիս, որ կազմակերպությունների հիմնական գործիքակազմը կենտրոնացած է կանանց գործնական կարողությունների, եկամուտ ստանալու հնարավորությունների և ինքնուրույնության զարգացման վրա, մինչդեռ տնտեսական արդարության բաղադրիչը ավելի շատ դրսևորվում է անուղղակիորեն՝ իրավունքների պաշտպանության, բռնության կանխարգելման, խոցելի խմբերի աջակցության և սոցիալական նորմերի փոփոխության միջոցով: Միևնույն ժամանակ, քարտեզագրումը ցույց է տալիս, որ կազմակերպությունների մոտեցումը միայն տնտեսական չէ, այլ սոցիալական և համայնքային: Յոթ կազմակերպություն նշել է հանրային իրազեկվածության բարձրացումը, կարծրատիպերի կոտրումը կամ մեդիա արշավները, իսկ յոթ կազմակերպություն՝ քաղաքական կամ համայնքային մասնակցության խթանումը: Սա կարևոր է, քանի որ կանանց տնտեսական մասնակցության խոչընդոտները տվյալներում չեն ներկայացվում միայն որպես հմտության կամ ֆինանսի պակաս: Դրանք կապվում են նաև համայնքային նորմերի, ընտանիքի ներսում վերահսկողության, կանանց ինքնավստահության, տեսանելիության և սոցիալական ընդունելիության հետ:

Տնտեսական արդարության ավելի ուղղակի բաղադրիչները քարտեզագրման մեջ առկա են, սակայն համեմատաբար ավելի թույլ են ներկայացված: Օրինակ՝ իրավաբանական խորհրդատվություն կամ աջակցություն նշել է 4 կազմակերպություն, գենդերային բռնության կանխարգելում՝ տնտեսական բաղադրիչով՝ 4 կազմակերպություն, աշխատանքի տեղավորման կամ կարիերայի զարգացման աջակցություն՝ 4 կազմակերպություն: Քաղաքականությունների մշակումը և օրենսդրական բարեփոխումները նշել է 3-ական կազմակերպություն, իսկ կանանց տնտեսական իրավունքների վերաբերյալ հետազոտություն կամ վերլուծություն՝ միայն 1 կազմակերպություն: Սա ցույց է տալիս, որ «տնտեսական արդարության» համակարգային օրակարգը դեռևս ավելի թույլ է ձևակերպված, քան «տնտեսական հզորացման» գործնական օրակարգը:

Կազմակերպությունների նշած առաջնահերթությունները ևս հաստատում են այս պատկերը: Հարցին, թե ինչն է ամենից շատ անհրաժեշտ Հայաստանում կանանց լիարժեք տնտեսական արդարության հասնելու համար, առավել հաճախ պատասխանել են սոցիալական նորմերի և կարծրատիպերի փոփոխությունը՝ 3 կազմակերպություն, մասնագիտական վերապատրաստման և կրթական ծրագրերը՝ 2 կազմակերպություն, ինչպես նաև աշխատանքի տեղավորման և բիզնեսի խթանման աջակցությունը՝ 2 կազմակերպություն: Սա վկայում է, որ կազմակերպությունների ընկալմամբ տնտեսական արդարության հասնելու համար միայն ֆինանսական աջակցությունը բավարար չէ. անհրաժեշտ է նաև կրթություն, աշխատանք, բիզնեսին աջակցություն, սոցիալական վերաբերմունքի/ընկալումների փոփոխություն և կանանց ավելի ակտիվ ներգրավում համայնքային կյանքում:

Այս պատկերը համահունչ է հետազոտության այլ արդյունքներին: Շահառուների հարցազրույցները և քանակական տվյալները ցույց են տալիս, որ կանանց տնտեսական մասնակցությունը սահմանափակվում է ոչ միայն անհատական կարողությունների պակասով, այլև խնամքի բեռով, տրանսպորտի բացակայությամբ, գույքային անապահովությամբ, եկամտի անկայունությամբ, ֆինանսական ծառայությունների դժվար հասանելիությամբ և համայնքային կարծրատիպերով: Կազմակերպությունների քարտեզագրումը հաստատում է, որ հենց այս խնդիրներն են արձանագրվում նաև ծառայություններ տրամադրողների կողմից: Հետևաբար, կանանց տնտեսական հզորացման ծրագրերը պետք է դիտարկել ոչ թե որպես առանձին դասընթացների կամ դրամաշնորհների շարք, այլ որպես տնտեսական արդարության ավելի լայն համակարգի մաս:

Ընդհանուր առմամբ, քարտեզագրումը ցույց է տալիս, որ Հայաստանում կանանց տնտեսական ոլորտում գործող կազմակերպությունները կարևոր միջանկյալ օղակ են պետական քաղաքականության և կանանց իրական կարիքների միջև: Նրանք ավելի ճկուն են արձագանքում տեղական խնդիրներին, հասնում խոցելի խմբերին և տրամադրում գործնական աջակցություն: Սակայն հետագա ծրագրերի համար կարևոր է, որ այս աշխատանքը չսահմանափակվի միայն հմտությունների և զբաղվածության խթանմամբ, այլ ավելի հստակ ներառի տնտեսական արդարության այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են աշխատանքային իրավունքները, գույքային և ժառանգական իրավունքները, ֆինանսական ծառայությունների արդար հասանելիությունը, խնամքի բեռի նվազեցումը, անվտանգ ծառայությունները բռնության ենթարկված կանանց համար և քաղաքականության մակարդակում փոփոխություններ:

7.13 Եզրակացություն

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում կանանց տնտեսական արդարության խնդիրը չի սահմանափակվում միայն աշխատանքի, եկամտի կամ բիզնեսի հնարավորությունների պակասով: Այն ավելի խորքային և բազմաշերտ խնդիր է, որը ձևավորվում է ֆորմալ իրավահավասարության, սոցիալական նորմերի, ինստիտուցիոնալ հասանելիության և կանանց առօրյա տնտեսական փորձառությունների միջև առկա խզման հետևանքով: Թեև օրենսդրական և քաղաքական մակարդակում կանայք ունեն աշխատանքի, սեփականության, ժառանգության, սոցիալական պաշտպանության և տնտեսական մասնակցության իրավունքներ, դաշտային տվյալները ցույց են տալիս, որ այդ իրավունքների իրացումը գործնականում սահմանափակվում է մարզային/տարածքային անհավասարություններով, խնամքի բեռով, եկամտի անկայունությամբ, գույքային անապահովությամբ, ֆինանսական ծառայությունների սահմանափակ հասանելիությամբ և ընտանիքի ու համայնքի ներսում գործող գենդերային նորմերով:

Հետազոտության կարևոր եզրահանգումներից մեկն այն է, որ կանանց տնտեսական արդարության ընկալումները տարբեր են՝ կախված նրանց սոցիալական դիրքից, բնակավայրից, զբաղվածության կարգավիճակից, ընտանիքի կառուցվածքից և խոցելիության փորձառությունից: Որոշ կանանց համար տնտեսական արդարությունը հավասար մրցակցության, աշխատանքի և բիզնեսի հավասար պայմանների հարց է, մինչդեռ մյուսների համար այն առաջին հերթին ֆինանսական կախվածությունից ազատվելու, սեփական կարիքների համար գումարը տնօրինելու, ընտանիքի կարիքներն ինքնուրույն հոգալու կամ տեղահանությունից հետո կայունությունը վերականգնելու հնարավորություն է: Այս տարբեր ընկալումները ցույց են տալիս, որ տնտեսական արդարությունը պետք է դիտարկել ոչ թե ըստ մեկ միասնական չափանիշի, այլ որպես իրավունքների, ռեսուրսների, ճանաչման և վերահսկողության համադրություն:

Աշխատանքի հասանելիության վերաբերյալ տվյալները փաստում են, որ կանանց տնտեսական մասնակցությունը մեծապես պայմանավորված է տարածքային միջավայրով: Երևանում և որոշ քաղաքային բնակավայրերում աշխատանք գտնելու դժվարությունը հաճախ կապվում է մրցակցության, մասնագիտական համապատասխանության կամ գործատուների կանխակալ վերաբերմունքի հետ, մինչդեռ մարզերում և գյուղական համայնքներում դրան ավելանում են աշխատատեղերի սակավությունը, ցածր վարձատրությունը, տրանսպորտին սահմանափակ հասանելիությունը և համայնքային վերահսկողությունը: Այսպիսով՝ «աշխատանք ունենալը» դեռևս չի նշանակում տնտեսական արդարություն, եթե աշխատանքը ցածր վարձատրվող է, անկանոն, չի ապահովում մասնագիտական աճ կամ իրական ֆինանսական ինքնավարություն:

Խնամքի չվարձատրվող աշխատանքը հետազոտության ամենակենտրոնական կառուցվածքային թեմաներից է: Տվյալները ցույց են տալիս, որ կանանց մեծ մասի տնտեսական ընտրությունները ձևավորվում են երեխաների, տարեցների, հիվանդ կամ հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամների խնամքի, ինչպես նաև տնային աշխատանքի շուրջ: Խնամքի բեռը սահմանափակում է ոչ միայն կանանց ժամանակն ու տեղաշարժը, այլև նրանց մտավոր և հուզական ռեսուրսները՝ նվազեցնելով աշխատանքի, վերապատրաստման, մասնագիտական աճի կամ բիզնես սկսելու վրա կենտրոնանալու հնարավորությունը: Միաժամանակ, այս աշխատանքը հաճախ չի ճանաչվում որպես արտադրողական կամ տնտեսական արժեք ունեցող ներդրում: Հետևաբար, խնամքի բեռը պետք է դիտարկել ոչ թե որպես մասնավոր ընտանեկան խնդիր, այլ տնտեսական արդարության առանցքային խոչընդոտ:

Ֆինանսական և գույքային տվյալները ցույց են տալիս, որ կանանց տնտեսական կախվածությունը վերարտադրվում է մի քանի մակարդակներում: Ցածր կամ անկանոն եկամուտը, գույքի կամ գրավի բացակայությունը, վարկային պատմության պակասը և ֆորմալ աշխատանքի բացակայությունը սահմանափակում են կանանց վարկունակությունն ու բիզնես սկսելու հնարավորությունները: Միևնույն ժամանակ, գույքի և ժառանգության վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ օրենքով ամրագրված հավասար իրավունքների առկայությունը դեռ չի վերացնում ընտանիքի ներսում գործող ոչ ֆորմալ կանոնները, որոնց համաձայն՝ գույքը հաճախ փոխանցվում է որդիներին, իսկ կանանցից ակնկալվում է հրաժարվել իրենց բաժնից: Այսպիսով՝ գույքային անապահովությունը վերածվում է ֆինանսական կախվածության, իսկ ֆինանսական կախվածությունը՝ որոշումների և անվտանգության սահմանափակման:

Հետազոտությունը նաև ցույց է տալիս, որ կանանց աշխատանքի և ներդրման ճանաչման հարցը տնտեսական արդարության կարևոր բաղադրիչ է: Կանայք մեծ ծավալի աշխատանք են կատարում ընտանիքի, գյուղատնտեսական տնտեսության, երեխաների խնամքի, տնային գործերի և համայնքային կյանքի կազմակերպման մեջ, սակայն այդ ներդրումը հաճախ մնում է անտեսանելի և չվարձատրվող: Ճանաչման պակասը նվազեցնում է կանանց ինքնագնահատականը, հանրային մասնակցությունը և տնտեսական ինքնավարությունը: Այս առումով տնտեսական արդարությունը չի ենթադրում միայն եկամուտ ստանալը. այն նաև կնոջ աշխատանքի, ժամանակի, խնամքի և որոշումների արժևորումն է ընտանիքում, համայնքում և ինստիտուցիոնալ համակարգերում:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց փորձառությունը առանձնացնում է տնտեսական արդարության հետկոնֆլիկտային չափումը: Տեղահանված կանանց համար տնտեսական վերականգնումը չի սահմանափակվում միայն աշխատանք գտնելով, այն ենթադրում է բնակարանային կայունություն, մասնագիտական փորձի ճանաչում, սոցիալական կապերի վերականգնում, հոգեբանական կայունություն և նոր համայնքում վստահության ձևավորում: Նրանց փորձառությունը ցույց է տալիս, որ ճգնաժամային իրավիճակներում կանանց տնտեսական իրավունքները պետք է դիտարկել գենդերազգայուն և կոնֆլիկտազգայուն մոտեցմամբ՝ հաշվի առնելով գույքի կորուստը, եկամտի անկայունությունը, ընտանիքի ներսում դերերի փոփոխությունը և նոր միջավայրում ինտեգրման դժվարությունները:


Ինստիտուցիոնալ աջակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական քաղաքականությունն աստիճանաբար անցում է կատարում սոցիալական պաշտպանության մոդելից դեպի զբաղվածության, խնամքի ենթակառուցվածքների և ֆինանսական ներառականության օրակարգ, սակայն գործնականում կանանց հասանելիությունը դեռ սահմանափակ է: Ծրագրերի մասին տեղեկատվության պակասը, դիմելու բարդ ընթացակարգը, տրանսպորտի հետ կապված խնդիրները, վստահության պակասը և թվային հասանելիության սահմանափակումները թույլ

չեն տալիս, որ աջակցությունը հավասարապես հասնի ամենախոցելի խմբերին: ՀԿ-ները և համայնքային կազմակերպությունները հաճախ լրացնում են այդ բացը՝ տրամադրելով ավելի ճկուն, վստահելի և հասանելի աջակցություն, սակայն նրանց աշխատանքը հիմնականում կենտրոնացած է տնտեսական հզորացման վրա, իսկ տնտեսական արդարության համակարգային բաղադրիչները դեռևս բավարար չափով ինստիտուցիոնալացված չեն:


Ընդհանուր առմամբ, հետազոտությունը ցույց է տալիս, որ կանանց տնտեսական արդարության ապահովման համար անհրաժեշտ է անհատական կարողությունների զարգացման նկատմամբ նեղ մոտեցումից անցնել կառուցվածքային անհավասարությունների նվազեցման ավելի լայն օրակարգի: Կանանց տնտեսական հզորացման միջոցառումները՝ հմտությունների զարգացում, վերապատրաստում, բիզնես աջակցություն, մենթորություն և իրազեկվածության բարձրացում, կարևոր են, սակայն բավարար չեն, եթե չեն ուղեկցվում խնամքի ենթակառուցվածքների զարգացմամբ, աշխատանքային և գույքային իրավունքների պաշտպանությամբ, ֆինանսական ծառայությունների արդար հասանելիությամբ, հարկային քաղաքականության գենդերազգայունությամբ, տեղահանված և այլ խոցելի խմբերի նպատակային աջակցությամբ և սոցիալական նորմերի փոփոխությամբ: Այսպիսով՝ տնտեսական արդարությունը պետք է ընկալվի ոչ միայն որպես կանանց համար ավելի լայն հնարավորությունների ստեղծում, այլև որպես այն պայմանների փոփոխություն, որոնք սահմանափակում են այդ հնարավորություններից օգտվելու նրանց կարողությունը:

7.14 Առաջարկներ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կանանց տնտեսական արդարության ապահովումը Հայաստանում պահանջում է ոչ միայն առանձին ծրագրերի կամ ծառայությունների ավելացում, այլև կանանց տնտեսական մասնակցությունը սահմանափակող կառուցվածքային պայմանների ավելի ամբողջական դիտարկում: Առաջարկների գործնական կիրառելիությունը հեշտացնելու նպատակով դրանք ստորև խմբավորված են ըստ հիմնական հասցեատերերի՝ (ա) կառավարություն և պետական կառույցներ, (բ) քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, (գ) ֆինանսական ոլորտի տեղական և միջազգային ինստիտուտներ: Յուրաքանչյուր առաջարկի համար նշված են հիմնական հասցեատերը և աջակցող կողմերը. մի շարք առաջարկներ իրենց բնույթով միջինստիտուցիոնալ են և ենթադրում են տարբեր կառույցների համագործակցություն:



8 ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



ԱՌԱՋԱՐԿ 1.

Խնամքի բեռի գործնական փոխհատուցում և վերաբաշխում կանանց տնտեսական աջակցության ծրագրերում

Կանանց մասնակցությունը զբաղվածության, վերապատրաստման և ձեռնարկատիրական ծրագրերին մեծապես կախված է ոչ միայն ծրագրերի առկայությունից, այլև դրանց մասնակցելու գործնական հնարավորությունից: Խնամքի պարտականությունները՝ երեխաների, տարեցների, հիվանդ կամ հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամների խնամքը, հաճախ սահմանափակում են կանանց ժամանակը, շարժունակությունը և ծրագրերին հետևողական մասնակցելու կարողությունը: Այս պատճառով տնտեսական աջակցության ծրագրերի արդյունավետության բարձրացման համար կարևոր է դրանց մեջ ներառել կարճաժամկետ խնամքի ծախսերի փոխհատուցման, խնամքի ծառայության հասանելիության և տրանսպորտի գործնական աջակցության բաղադրիչ: Միաժամանակ, խնամքի բեռի կայուն թեթևացումը հնարավոր չէ ապահովել միայն փոխհատուցմամբ. անհրաժեշտ են նաև խնամքի բեռի վերաբաշխմանն ուղղված քաղաքականություններ և տղամարդկանց ու կանանց միջև խնամքի պարտականությունների հավասար բաշխումը խթանող հանրային իրազեկման արշավներ, որոնք երկարաժամկետ հեռանկարում խթանում են կանանց տնտեսական արդարությունը, աշխատաշուկայում ներգրավվածությունն ու մասնագիտական առաջընթացը:

Կանանց զբաղվածության, վերապատրաստման և ձեռնարկատիրության գործող ծրագրերի, մասնավորապես՝ զբաղվածության 2025–2031 թվականների ռազմավարությամբ նախատեսված 30–40 տարեկան չաշխատող կանանց համար միջոցառումների (մասնագիտական ուսուցում, զբաղվածության վաուչերներ/հավաստագրեր), Գենդերային քաղաքականության իրականացման 2025–2028 թվականների ռազմավարության ձեռնարկատիրական բաղադրիչի (դրամաշնորհներ, վարկերի սուբսիդավորում) և Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության ապահովման ծրագրի շրջանակում, սահմանել խնամքի փոխհատուցման բաղադրիչ այն շահառուների համար, որոնք խնամքի պարտականությունների պատճառով կարող են դուրս մնալ ծրագրից կամ դրան լիարժեք չմասնակցել:



Հիմնական հասցեատեր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Միասնական սոցիալական ծառայություն՝ ծրագրերն իրականացնող կազմակերպությունների և միջազգային գործընկերների աջակցությամբ:

Չափելի ցուցիչներ՝

- Մինչև 2028 թվականը առնվազն 3 մարզում փորձնական կարգով կիրառվում է խնամքի ծախսերի փոխհատուցման մեխանիզմ:
- Առնվազն 1,000 կին օգտվում է երեխայի, տարեցի կամ ընտանիքի այլ խնամքի ենթակա անդամի խնամքի ծախսերի փոխհատուցումից:
- Փորձնական ծրագրերում ընդգրկված համայնքներում խնամքի պատճառով ծրագրերից դուրս մնալու դեպքերը նվազում են առնվազն 20 տոկոսային կետով:
- Խնամքի աջակցություն ստացած կանանց առնվազն 40%-ը ծրագրի ավարտից հետո 6 ամսվա ընթացքում անցնում է աշխատանքի, ինքնազբաղվածության կամ եկամուտ ապահովող գործունեության:
- Շահառուների առնվազն 70%-ը նշում է, որ խնամքի աջակցությունը մեծացրել է ծրագրին մասնակցելու հնարավորությունը:

- Մինչև 2029 թվականն իրականացվում է կանանց և տղամարդկանց միջև խնամքի բեռի հավասար բաշխման վերաբերյալ առնվազն երկու համապետական իրազեկման արշավ:



ԱՌԱՋԱՐԿ 2.

Հաշմանդամություն ունեցող կանանց ներառման պարտադիր չափանիշներ տնտեսական աջակցության ծրագրերում

Հաշմանդամություն ունեցող կանանց տնտեսական մասնակցությունը սահմանափակվում է ոչ միայն աշխատատեղերի պակասով, այլև ծրագրերի ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցական անհասանելիությամբ: Ուստի տնտեսական աջակցության ծրագրերի ներառականությունը պետք է ապահովվի ոչ թե առանձին լրացուցիչ միջոցառումներով, այլ բոլոր համապատասխան ծրագրերի պարտադիր չափանիշների սահմանմամբ:

Կանանց տնտեսական աջակցության պետական և համաֆինանսավորվող ծրագրերում սահմանել մատչելիության և հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության նվազագույն չափանիշներ:



Հիմնական հասցեատեր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ պետական և համաֆինանսավորվող ծրագրեր իրականացնող բոլոր կառույցների ընդգրկմամբ:

Չափելի ցուցիչներ՝

- 2028 թվականից կանանց տնտեսական աջակցության ծրագրերի առնվազն 80%-ում սահմանված են մատչելիության նվազագույն պահանջներ:
- Մինչև 2029 թվականը առնվազն 1,000 հաշմանդամություն ունեցող կին մասնակցում է վերապատրաստման, զբաղվածության կամ ձեռնարկատիրության ծրագրի:
- Մասնակիցների առնվազն 35%-ը ծրագրից հետո անցնում է աշխատանքի, ինքնազբաղվածության կամ եկամուտ ապահովող գործունեության:
- Առնվազն 300 գործատու ստանում է խորհրդատվություն կամ խրախուսում՝ հարմարեցված աշխատանքային պայմաններ ստեղծելու համար:
- Ծրագրերի առնվազն 80%-ն ապահովում է ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցական մատչելիություն:
- Շահառուների գոհունակության գնահատման արդյունքներով՝ հաշմանդամություն ունեցող կանանց առնվազն 70%-ը նշում է, որ ծրագիրը հասանելի էր և իրենց կարիքներին համապատասխան:



ԱՌԱՋԱՐԿ 3.

Հարկային և բյուջետային որոշումների գենդերային ազդեցության գնահատում

Հարկային և բյուջետային քաղաքականությունը կարող է տարբեր ազդեցություն ունենալ կանանց և տղամարդկանց վրա՝ պայմանավորված եկամտի մակարդակով, խնամքի բեռով, սպառման կառուցվածքով, փոքր բիզնես վարելու հնարավորություններով և գույքային անվտանգությամբ: Կանանց տնտեսական արդարության ապահովման համար կարևոր է, որ խոշոր հարկային և բյուջետային փոփոխությունները գնահատվեն նաև գենդերային ազդեցության տեսանկյունից:

Խոշոր հարկային և սոցիալական ոլորտում բյուջետային ծախսերի էական փոփոխությունների համար ներդնել գենդերային ազդեցության գնահատման մեթոդաբանություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով խնամքի, մանկական, առողջապահական, կանանց հիգիենայի ապրանքներին, ինչպես նաև փոքր բիզնես վարող և ցածր եկամուտ ունեցող կանանց:



Հիմնական հասցեատեր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ համագործակցությամբ:

Չափելի ցուցիչներ՝

- Մինչև 2028 թվականի պետական բյուջեի շրջափուլը մշակվում է գենդերային ազդեցության գնահատման մեթոդաբանություն:
- 2028 թվականից սկսած՝ տարեկան առնվազն 5 խոշոր հարկային կամ սոցիալական ծախսային ծրագիր անցնում է գենդերային ազդեցության գնահատում:
- 2029 թվականից պետական բյուջեի նախագծին կից հրապարակվում է գենդերային ազդեցության վերաբերյալ համառոտ հավելված:
- Մինչև 2030 թվականն իրականացվում է խնամքի, մանկական, առողջապահական և կանանց հիգիենայի ապրանքների հարկային բեռի ազդեցության առանձին ուսումնասիրություն:
- Գնահատման արդյունքների հիման վրա մինչև 2030 թվականը ներկայացվում է քաղաքականության փոփոխության առնվազն երկու առաջարկ:



ԱՌԱՋԱՐԿ 4.

Գործող մշտադիտարկման համակարգերում կանանց տնտեսական արդարության լրացուցիչ ցուցանիշների ներառում

Քանի որ զբաղվածության ռազմավարության շրջանակում արդեն նախատեսված են մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ, առանձին նոր մշտադիտարկման համակարգ ստեղծելու փոխարեն նպատակահարմար է գործող համակարգերում ներառել կանանց տնտեսական արդարության լրացուցիչ ցուցանիշներ: Դրանք պետք է չափեն ոչ միայն զբաղվածությունը, այլև եկամտի կայունությունը, խնամքի բեռը, գույքային անվտանգությունը, ֆինանսական ինքնավարությունը և ծրագրերից փաստացի օգտվելու հնարավորությունը:

Գործող պետական մշտադիտարկման և գնահատման համակարգերում ավելացնել կանանց տնտեսական արդարության 8-10 լրացուցիչ ցուցանիշ՝ տարանջատված ըստ մարզի, բնակավայրի տեսակի, տեղահանման կարգավիճակի, հաշմանդամության, տարիքի և խնամքի պարտականությունների:



Հիմնական հասցեատեր՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ վիճակագրական կոմիտե՝ ոլորտային ծրագրեր իրականացնող մարմինների հետ համատեղ:

Չափելի ցուցիչներ՝

- Մինչև 2028 թվականը հաստատվում է կանանց տնտեսական արդարության լրացուցիչ ցուցանիշների ցանկ:
- 2028 թվականից առնվազն 5 պետական ծրագիր իր հաշվետվություններում

ներառում է այդ ցուցանիշները:

- Ցուցիչների շարքում ընդգրկվում են կանոնավոր եկամուտ, ծրագրի ավարտից հետո աշխատանքի պահպանում, խնամքի բեռի փոփոխություն, գույքային փաստաթղթավորում, ֆինանսական ծառայություններից ինքնուրույն օգտվելու կարողություն և ծրագրերից դուրս մնալու պատճառներ:
- Տարեկան հաշվետվություններում տվյալները հրապարակվում են ըստ սեռի, մարզի, բնակավայրի տեսակի և խոցելիության կարգավիճակի:
- Մինչև 2030 թվականը այդ տվյալների հիման վրա վերանայվում է պետական տնտեսական աջակցության առնվազն երկու ծրագիր:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



ԱՌԱՋԱՐԿ 5.

Գույքային և ժառանգական իրավունքների գործնական իրացման աջակցություն

Կանանց գույքային անվտանգությունը տնտեսական արդարության առանցքային նախապայման է: Թեև ըստ օրենքի կանայք և տղամարդիկ ունեն սեփականության և ժառանգության հավասար իրավունքներ, գործնականում կանայք հաճախ չունեն փաստաթղթավորված գույք, հրաժարվում են ժառանգությունից ընտանեկան ճնշման կամ սոցիալական նորմերի պատճառով կամ չունեն բավարար իրավական աջակցություն իրենց իրավունքը պաշտպանելու համար: Այս խնդիրը չի լուծվում միայն ընդհանուր իրազեկմամբ. անհրաժեշտ է առանձին գործերի ուղեկցում:

Ձևավորել կանանց գույքային անվտանգության աջակցության փաթեթ՝ ներառելով անվճար իրավաբանական խորհրդատվություն, ժառանգության ձևակերպման գործընթացի ուղեկցում, համատեղ սեփականության գրանցման աջակցություն և համայնքային մակարդակի իրավական իրազեկում:



Հիմնական հասցեատեր՝ իրավապաշտպան և կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ներ՝ ՀՀ արդարադատության նախարարության, Նոտարական պալատի և Կադաստրի կոմիտեի հետ համագործակցությամբ և միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ:

Չափելի ցուցիչներ՝

- Մինչև 2029 թվականը առնվազն 10,000 կին ստանում է գույքի, ժառանգության կամ համատեղ սեփականության վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն:
- Առնվազն 3,000 դեպքի պարագայում տրամադրվում է աջակցություն համատեղ սեփականության գրանցման, ժառանգական պահանջի ներկայացման կամ փաստաթղթերի կարգավորման գործընթացում:
- Փորձնական ծրագրերում ընդգրկված մարզերում կանանց անունով կամ համատեղ գրանցվող նոր գույքային գործարքների մասնաբաժինը աճում է առնվազն 10 տոկոսային կետով՝ 2026 թվականի վարչական տվյալների համեմատ:
- Շահառուների առնվազն 70%-ը ծրագրից հետո նշում է, որ ավելի լավ է հասկանում իր գույքային և ժառանգական իրավունքները և գիտի ուր դիմել դրանց խախտման դեպքում:

- Ծրագրի շրջանակում առնվազն 500 դեպք վերաբերում է ընտանեկան բռնության, ամուսնալուծության, այրիության կամ փաստացի միության դադարեցման հետևանքով առաջացած գույքային ռիսկերի հասցեագրմանը:



ԱՌԱՋԱՐԿ 6.

ՀԿ-պետություն ուղղորդման որակի և հետադարձ կապի համակարգ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարևոր դեր ունեն կանանց տնտեսական հզորացման, իրավական աջակցության, իրազեկման, վերապատրաստման և խոցելի խմբերի ուղեկցման գործում: Քանի որ ծառայությունների քարտեզագրում և ուղղորդման որոշ ձևեր արդեն առկա են տարբեր մակարդակներում, առաջնահերթ է ոչ թե նոր «մեկ պատուհանի» ստեղծումը, այլ ուղղորդման որակի, հետադարձ կապի և դեպքի ավարտի վերահսկման բարելավումը:

Պետական և ՀԿ ծառայությունների միջև ներդնել ուղղորդման որակի միասնական արձանագրություն, որը կներառի ուղղորդման գրանցումը, ծառայությունից օգտվելու փաստի հետադարձ հաստատումը, չօգտվելու պատճառների վերլուծությունը և կրկնակի ուղղորդման հնարավորությունը:



Հիմնական հասցեատեր՝ կանանց տնտեսական աջակցության ոլորտում գործող ՔՀԿ-ներ և Միասնական սոցիալական ծառայություն՝ համատեղ, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Չափելի ցուցիչներ՝

- Մինչև 2028 թվականը կանանց տնտեսական աջակցության ոլորտում գործող առնվազն 20-30 ՀԿ, համայնքային ծառայություն և պետական կառույց կիրառում են ուղղորդման միասնական արձանագրություն:
- Մինչև 2029 թվականը գրանցվում է առնվազն 3,000 ուղղորդման դեպք՝ ՀԿ-ից պետական ծառայություն կամ պետական ծառայությունից ՀԿ:
- Ուղղորդված շահառուների առնվազն 60%-ը փաստացի օգտվում է առնվազն մեկ ծառայությունից:
- Չավարտված կամ չիրացված ուղղորդումների առնվազն 80%-ի դեպքում արձանագրվում է պատճառը՝ տեղեկատվության պակաս, տրանսպորտի հետ կապված խնդիրներ, փաստաթղթերի բացակայություն, վստահության պակաս, թվային հասանելիության խնդիրներ կամ այլ խոչընդոտներ:
- Տարեկան հրապարակվում է ծառայությունների հասանելիության և ուղղորդման ընթացքում արձանագրված խնդիրների վերաբերյալ համառոտ հաշվետվություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ



ԱՌԱՋԱՐԿ 7.

Կանանց ֆինանսական հասանելիության գենդերազգայուն ռիսկային մոդել

Ֆինանսական ծառայությունների հասանելիությունը կանանց համար սահմանափակվում է ոչ միայն վարկերի առկայությամբ,

այլև այն նախապայմաններով[60], որոնք անհրաժեշտ են վարկունակ համարվելու համար՝ կայուն եկամուտ, գույք կամ գրավի առարկա, վարկային պատմություն, ֆորմալ աշխատանք և երաշխավոր: Այս պայմանները կանանց համար հաճախ ավելի դժվարհասանելի են: Հետևաբար, ֆինանսական աջակցության գործիքները պետք է հաշվի առնեն ոչ միայն վարկերի տրամադրումը, այլև պարտքային խոցելիության կանխարգելումը:

Գործող ֆինանսական աջակցության և վերավարկավորման ծրագրերում ներդնել կանանց համար այլընտրանքային վարկունակության գնահատման, մասնակի երաշխավորման և պարտքային ռիսկերի պարտադիր խորհրդատվության բաղադրիչներ:



Հիմնական հասցեատեր՝ ՀՀ կենտրոնական բանկ, առևտրային բանկեր և վարկային կազմակերպություններ՝ միջազգային ֆինանսական կառույցների առկա գործիքների կիրառմամբ (օրինակ՝ EIB Global-ՀՀ կենտրոնական բանկ վերավարկավորման գիծ՝ գենդերային հավասարության նպատակային բաղադրիչով):

Չափելի ցուցիչներ՝

- Մինչև 2029 թվականը առնվազն 1,500 կին օգտվում է գրավի նկատմամբ ցածր պահանջով, մասնակի երաշխիքով կամ այլընտրանքային գնահատման մեխանիզմով ֆինանսական գործիքից:
- Շահառուների առնվազն 30%-ը առաջին անգամ է օգտվում ֆորմալ ֆինանսական ծառայությունից:
- Շահառուների առնվազն 40%-ը գյուղական, սահմանամերձ կամ տեղահանված կանայք են:
- Վարկ ստացող կանանց 100%-ը մինչև վարկի տրամադրումը ստանում է պարտքային ռիսկերի և ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ խորհրդատվություն:
- Ծրագրի շրջանակում վարկերի մարման ուշացումների և չվճարումների մակարդակը չի գերազանցում համադրելի ՓՄՁ վարկերի միջին ցուցանիշը ավելի քան 2 տոկոսային կետով:
- Շահառուների առնվազն 60%-ը 12 ամիս անց նշում է, որ կարողանում է ինքնուրույն կառավարել իր վարկային պարտավորությունները և կայացնել ֆինանսական որոշումներ:

60 Գենդերազգայուն ռիսկային մոդել – Վարկային ռիսկի գնահատման մոդել, որը հաշվի է առնում կանանց և տղամարդկանց տնտեսական վիճակի կառուցվածքային տարբերությունները (չվճարվող խնամքի բեռ, ոչ ֆորմալ զբաղվածություն, սեփական անունով գրանցված գույքի և վարկային պատմության բացակայություն) և ստանդարտ չափանիշների փոխարեն կամ դրանց լրացմամբ կիրառում է վարկունակության այլընտրանքային գնահատման, մասնակի երաշխավորման և պարտքային խոցելիության կանխարգելման գործիքներ՝ ընդլայնելով կանանց հասանելիությունը ֆորմալ ֆինանսական ծառայություններին՝ առանց ֆինանսական կայունությունը վտանգելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Alcoff, L. M. (2007). Fraser on Redistribution, Recognition, and Identity. European Journal of Political Theory, 6(3), 255–265. https://doi.org/10.1177/1474885107077305
2. EIB Global-ը 100 միլիոն եվրո է հատկացրել հայկական միկրո և փոքր բիզնեսներին աջակցելու համար (2025). https://www.cba.am/hy/news/eib-global-provides-%E2%82%AC100-million-to-support-armenian-micro-and-small-businesses/478
3. EU4Gender Equality Reform Helpdesk (2024). COUNTRY GENDER PROFILE ARMENIA. https://euneighbourseast.eu/wp-content/uploads/2024/04/eu4genderhelpdesk_armenia_countrygenderprofile_2024-cgp_v3__compressed.pdf
4. Fraser, N., & Honneth, A. (2003). Redistribution or recognition ? A political-philosophical exchange. Verso.
5. March, C., Smyth, I., & Mukhopadhyay, M. (2005). A guide to gender-analysis frameworks (Repr). Oxfam.
6. RA Government. (2026). Activity report 2025 of the Ministry of Labor and Social Affairs discussed. https://www.primeminister.am/en/press-release/item/2026/02/06/Nikol-Pashinyan-report-Ministry-of-Labor-and-Social-Affairs/
7. SIGI 2023 Global Report (1st ed). (2023). Organization for Economic Cooperation & Development.
8. UN Women. (2026). Joint SDG Fund programme: Country factsheets. https://eca.unwomen.org/en/digital-library/publications/2026/03/joint-sdg-fund-programme-country-factsheets?fbclid=IwY2xjawR7iLlleHRuA2FlbQIxMABicmlkETFHQXV1ZWJ2enRudHdValFwc3J0YwZhcHBfaWQQMjIyMDM5MTc4ODIwMDg5MgABHpZSD5pwKvAdbmcsMq_I6pIKFbWRUzebze8XBoasQzV1sOPsZSuBI2o3gnYp_aem_FHSabTeIY4WK6qPxB5QAxQ
9. World Bank. (2026). Women, Business and the Law 2026: Benchmarking Laws for Jobs and Inclusive Growth. World Bank. https://doi.org/10.1596/978-1-4648-2196-7
10. World Bank Group. (2024). ARMENIA COUNTRY GENDER ASSESSMENT (Poverty & Equity Global Practice). https://documents1.worldbank.org/curated/en/099102124050535514/pdf/P179877-f61a1f91-4953-4b73-8730-ed7bc075deb6.pdf
11. Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025–2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, N 482-Լ (2025). https://www.arlis.am/hy/acts/206364
12. ԵՄ. (2024). ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Բարեփոխումներին աջակցության ծառայություն. https://euneighbourseast.eu/hy/projects/eu-project-page/?id=1480
13. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ (2026). https://www.mlsa.am/Programs-And-Services/99
14. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ (2026). https://www.mlsa.am/Programs-And-Services/126
15. Զբաղվածության 2025–2031 թվականների ռազմավարական ծրագիրը, N 2083-Լ (2024). https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GVAB-CCC9-B9BB-9A7C/2083.1.pdf
16. Ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրմանն

ուղղված նախագծերի փաթեթները երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ԱԺ-ի կողմից (2024). https://mlsa.am/news/799

17. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (2020). https://www.arlis.am/hy/acts/146281
18. Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության ապահովման ծրագիր (2026). https://www.mlsa.am/Programs-And-Services/152
19. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (2026). https://www.mlsa.am/Programs-And-Services/100
20. Ովքե՞ր կարող են օգտվել անկանխիկ գործարքների դեպքում 20% հետվճարի ծրագրից (2025). https://www.mlsa.am/Programs-And-Services/90
21. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020–2024 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2020–2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին, N 1443-Լ (2020). https://www.arlis.am/hy/acts/145707



9

ՆԵՐԴԻՐ



ԽՈՐՔԱՅԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԱՇԱՐ

Կանանց տնտեսական (ան)արդարության փորձառությունների ուսումնասիրություն Հայաստանում



Մոտավոր տևողություն՝
90–120 րոպե

Մաս 1. Ներածություն

1. Ինչ է գալիս ձեր մտքին, երբ լսում եք «տնտեսական արդարություն» կամ «կյանքում արդար վերաբերմունքի արժանանալ» արտահայտությունները:
2. Ինչպե՞ս կբնութագրեիք ձեր համայնքի մի կնոջը, որը համարվում է «տնտեսապես հաջողակ» կամ «հարգված»:

Խորացնող հարցեր

- Ո՞վ է որոշում, թե ով է «հաջողակ»:
- Կան արդյոք կանայք, որոնք մեծ աշխատանք են կատարում, բայց դեռևս ճանաչված չեն: Ինչո՞ւ:

Մաս 2. Տնտեսական ռեսուրսների և հնարավորությունների հասանելիություն (բանալի բառ՝ «հասանելիություն»)

1. Որքանո՞ւ հեշտ կամ դժվար է կնոջ համար՝
   - Հիգիենայի և խնամքի միջոցներ, հագուստ և այլ պարագաներ ձեռք բերելը:
   - Աշխատանք գտնելը:
   - Սեփական բիզնեսը սկսել:
   - Հող կամ գույք ունենալը կամ ժառանգելը:
   - Վարկ կամ ֆինանսական աջակցություն ստանալը:
2. Ձեր համայնքում կամ ընտանիքում որքանո՞վ է ընդունված, որ կանայք ժառանգեն հող, տուն կամ այլ գույք: Ինչ են ասում/ինչպե՞ս են վերաբերվում մարդիկ այն կանանց, որոնք ծնողներից պահանջում են ժառանգության իրենց բաժինը: Երբ ընտանիքի անդամ է մահանում (օրինակ՝ ամուսին կամ ծնող), արդյո՞ք կանայք մասնակցում են ժառանգության հետ կապված որոշումների կայացմանը, և նրանց կարծիքը հաշվի առնվո՞ւմ է:

Խորացնող հարցեր.

ա. Եղե՞լ են դեպքեր, երբ կանայք զրկվել կամ հրաժարվել են իրենց բաժնից ընտանիքի կամ համայնքի կողմից ճնշման պատճառով:

i. Դուք ունե՞ք որևէ փաստաթուղթ, որը հաստատում է ձեր գույքային իրավունքները: Եթե ոչ, ի՞նչ խոչընդոտներ են եղել, և տեղյա՞կ եք՝ ուր կարելի է դիմել նման իրավիճակում:

բ. Ձեր համայնքում կամ ընտանիքում որքանո՞վ է ընդունված, որ կանայք ժառանգեն հող, տուն կամ այլ գույք: Երբ կինը ժառանգում է գույք, որքանո՞վ է նա իրականում տնօրինում այն առանց արտաքին ճնշումների:

3. Արդյո՞ք կան կանանց հատուկ խմբեր (օրինակ՝ տեղահանվածներ, էթնիկ փոքրամասնություններ, հաշմանդամություն ունեցող կանայք), որոնք ավելի

շատ խոչընդոտների են բախվում այս ռեսուրսներին հասանելիություն ունենալու հարցում:

Խորացնող հարցեր.

ա. Արդյո՞ք կանայք թույլտվության կարիք ունեն աշխատելու, ճանապարհորդելու կամ բիզնես սկսելու համար: Ֆինանսական ինչ միջոցներ ունեն կանայք ճանապարհորդելու և ժամանցի այլ ծախսերի համար:

4. Կան արդյոք համայնքային ցանցեր կամ ոչ ֆորմալ խմբեր, որոնք օգնում են կանանց աշխատանք գտնելու կամ ռեսուրսներից օգտվելու (օրինակ՝ կոոպերատիվներ, շրջանառվող խնայողական խմբեր, կանանց ցանցեր):

Խորացնող հարցեր.

ա. Ո՞վ է դրանք կազմակերպում: Արդյո՞ք դրանք հասանելի են բոլոր կանանց համար:

5. Կարո՞ղ եք հիշել մի դեպք, երբ ձեր համայնքից որևէ կին հաղթահարել է այս խոչընդոտները և հաջողությամբ օգտվել տնտեսական հնարավորությունից: Ի՞նչն է օգնել նրան հաջողության հասնելու:

6. Վերջին տարիներին փոփոխվե՞լ են արդյոք կանանց՝ աշխատանքի կամ ռեսուրսների հասանելիության հետ կապված հարցերը: Եթե այո, ի՞նչն է նպաստել այդ փոփոխություններին կամ խոչընդոտել դրական փոփոխությունները:

Խորացնող հարցեր.

ա. Պատերազմը/տեղահանումը, տնտեսական փոփոխություննե՞րը, ՀԿ-ների աջակցությո՞ւնը, նոր օրենքնե՞րը:

Մաս 3. Սոցիալական նորմեր և սպասումներ (բանալի բառ՝ «նորմեր»)

1. Ի՞նչ դեր ունեն ընտանիքի անդամները (ամուսին, ծնողներ, սկեսուր) կանանց տնտեսական հնարավորություններին հասանելիությունն ապահովելու կամ սահմանափակելու գործում: Կարո՞ղ են արդյոք կանայք ազատորեն որոշել, թե ինչպես ծախսեն կամ խնայեն իրենց վաստակած կամ ստացած գումարը: Ինչո՞ւ այո կամ ինչո՞ւ ոչ:

2. Ձեր համայնքում կամ ընտանիքում ի՞նչ է ակնկալվում «լավ կնոջից»՝ աշխատանքի և խնամքի պարտականությունների առումով, և ի՞նչ ուղերձներ եք ստացել մանկուց ընտանիքում և տնտեսության ոլորտում «կնոջ դերի» մասին:

3. Մոտավորապես քանի՞ ժամ եք դուք կամ ձեր ընտանիքի/շրջապատի կանայք տրամադրում տնային գործերին (ճաշ պատրաստել, մաքրություն, լվացք և այլն), և որքա՞ն ժամանակ են, ձեր կարծիքով, տղամարդիկ հատկացնում այս գործերին:

ա. Մոտավորապես քանի՞ ժամ են կանայք և տղամարդիկ, ձեր կարծիքով, հատկացնում տնային գործերին, և ինչպե՞ս է այս տարբերությունն ազդում կանանց եկամտի, կարիերայի և մասնագիտական աճի վրա:

4. Ինչպե՞ս է ընկալվում կանանց վարձատրվող աշխատանքը տղամարդկանց աշխատանքի համեմատ, և ինչպիսի՞ վերաբերմունք կա այն կանանց հանդեպ, որոնք իրենց ամուսիններից ավելի շատ են վաստակում: Արդյո՞ք սա նաև ազդում է տղամարդու նկատմամբ հասարակական վերաբերմունքի վրա:

5. Դուք կամ ձեզ ծանոթ որևէ մեկը երբևէ բախվե՞լ եք խարանի, բամբասանքի կամ քննադատության՝ աշխատելու, բիզնես վարելու կամ տնտեսապես անկախ լինելու համար, և ինչպե՞ս է ձեր համայնքը վերաբերվում այն կանանց, որոնք չեն հետևում կարծրատիպերին (օրինակ՝ միակ կերակրողները, բիզնեսի

սեփականատերերը):

Խորացնող հարցեր.

ա. Երբևէ զգացե՞լ եք, որ ձեզ դատում են կամ մեկուսացնում ձեր ապրելակերպի կամ աշխատանքի պատճառով:

բ. Կան արդյոք «չգրված կանոններ», թե ինչ կարող է կինը անել կամ չանել, այդ թվում՝ ո՞ր մասնագիտություններն են կանանց համար, և որո՞նք՝ ոչ:

գ. Եթե դուստր ունենայիք, կցանկանայի՞ք, որ նա ընտրեր ձեր անցած ճանապարհը: Ինչո՞ւ այո կամ ինչո՞ւ ոչ:

Մաս 4. Ճանաչում և մասնակցություն (բանալի բառ՝ «ճանաչում»)

1. Ինչպե՞ս է համայնքում ճանաչվում և արժևորվում կանանց ներդրումը (այդ թվում՝ տնային, խնամքի կամ ոչ ֆորմալ աշխատանքը), և զգո՞ւմ եք արդյոք դուք, որ ձեր ներդրումը գնահատվում է:
2. Ո՞ւմ կարծիքն է կարևոր որոշումներ կայացնելիս՝ տանը, աշխատավայրում կամ համայնքում, և կանայք արդյո՞ք մասնակցում են տեղական մակարդակի (քաղաքապետարան, գյուղական խորհուրդ), տնային տնտեսության ֆինանսների կամ կոոպերատիվների/բիզնես խմբերի գործունեության վերաբերյալ որոշումների կայացմանը:
3. Երբ կանայք խոսում են հանրային կամ պաշտոնական միջավայրում, ինչպե՞ս են նրանց ընդունում, և կարո՞ղ եք հիշել մի դեպք, երբ ձեր համայնքից որևէ կին ճանաչում է ձեռք բերել տնտեսության ոլորտում իր գործունեության համար:

Խորացնող հարցեր.

ա. Երբևէ եղե՞լ եք մի իրավիճակում, երբ ձեր գիտելիքները կամ աշխատանքը անտեսվել են:

4. Մասնագիտական զարգացում և կարիերայի առաջխաղացում. ինչպիսի՞ հնարավորություններ ունեն կանայք մասնագիտական հմտությունները զարգացնելու համար, և որո՞նք են հիմնական խոչընդոտները (ժամանակի աղքատություն, տնային պարտականություններ, ֆինանսական միջոցների պակաս, գործատուի կամ գործընկերների վերաբերմունք): Կարո՞ղ եք պատմել ձեր կամ ձեր շրջապատի որևէ կնոջ փորձառության մասին:

Մաս 5. Վերահսկողություն, անվտանգություն և տնտեսական անկախություն (բանալի բառ՝ «վերահսկողություն»)

1. Ի՞նչ է տեղի ունենում, երբ կինը ցանկանում է ինքնուրույն ֆինանսական որոշումներ կայացնել. ինչպե՞ս են դրան արձագանքում ընտանիքները կամ հաստատությունները:
2. Ի՞նչ մարտահրավերների կամ խնդիրների են կանայք բախվում աշխատավայրում կամ պետական և ֆինանսական ծառայություններից օգտվելիս (օրինակ՝ մերժում, շահագործում, վրեժխնդրություն և այլն) և զգացե՞լ եք ձեզ անապահով աշխատելիս, ծառայություններ փնտրելիս, օգտվելիս կամ ձեր իրավունքները պաշտպանելիս:
3. Երեխայի խնամքի պարտականությունները որքանո՞վ են մեծացնում կանանց ֆինանսական կախվածությունը ընտանիքից կամ ամուսնուց, և ինչպե՞ս է դա ազդում նրանց՝ որոշումների կայացման ազատության վրա:
4. Արդյո՞ք երեխա ունենալը կամ չունենալը ազդում է աշխատանքի ընդունվելու կամ մասնագիտական առաջխաղացման վրա (օրինակ՝ փոքր երեխաներ ունեցող կամ նոր ամուսնացած կանանց մերժելու դեպքում):

5. Եթե կինը բախվում է բռնության կամ խտրականության տնտեսական կյանքում, ո՞ւր կարող է նա դիմել օգնության համար: Արդյո՞ք այդ համակարգերն արդյունավետ են:

Խորացնող հարցեր.

ա. Երբևէ նկատե՞լ կամ զգացե՞լ եք տնտեսական վերահսկողություն կամ հարկադրանք հարաբերություններում:

բ. Ի՞նչ ընտրություններ են ստիպված լինում կայացնել կանայք այստեղ՝ գոյատևելու անհրաժեշտությունից, այլ ոչ թե ազատ ընտրությամբ:

գ. Երբ կանայք բարձրաձայնում են իրենց նկատմամբ անարդարության մասին, արդյոք նրանք պաշտպանվո՞ւմ են, թե՞ պատժվում:

Մաս 6. Հաղթահարման մեխանիզմներ և առաջարկներ

1. Երբ կանայք բախվում են տնտեսական անարդարության կամ լուրջ դժվարությունների, իրավիճակին դիմակայելու ի՞նչ լուծումներ են նրանք գտնում: Աջակցության ի՞նչ համակարգեր կան կանանց համար, որոնք տնտեսական կյանքում բախվում են բռնության կամ խտրականության: Դրանք արդյո՞ք արդյունավետ են:

2. Աջակցության ո՞ր համակարգերն են առավել արդյունավետ կանանց համար՝ լինեն դրանք ֆորմալ կամ ոչ ֆորմալ (օրինակ՝ ընտանիք, ընկերներ, համայնքային խմբեր, պետական ծառայություններ):

Խորացնող հարցեր.

ա. Ի՞նչն է ձեզ ներշնչում և ուժ տալիս շարունակելու, նույնիսկ ամենադժվար պահերին:

բ. Կարո՞ղ եք բերել կոնկրետ օրինակներ, թե ինչպես են կանանց ցանցերը կամ փոխօգնության խմբերն օգնել ձեզ կամ ձեր շրջապատում որևէ մեկին:

3. Եթե հնարավորություն ունենայիք փոփոխություններ կատարելու, ի՞նչ որոշակի քայլեր կձեռնարկեիք ձեր համայնքի կանանց համար ավելի արդար և հավասար պայմաններ ստեղծելու համար:

4. Պատկերացրե՛ք մի ապագա, որտեղ ձեր համայնքի կանանց համար ապահովված են արժանապատիվ կյանքի և ազատ ընտրության հնարավորություններ: Ինչպիսի՞ն կլիներ այդ տնտեսական համակարգը, և սոցիալական, քաղաքական և կառուցվածքային ի՞նչ հիմնարար փոփոխություններ կպահանջվեին դրա համար:



ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Մաս 1. Ներածություն

1. Ներկայացրե՛ք ձեր մասնագիտական ոլորտը, կազմակերպությունը կամ հաստատությունը, գործունեության հիմնական ուղղությունները և թե ինչպես եք առնչվում կանանց տնտեսական մասնակցության ու իրավունքների ապահովման հարցերին:

2. **Ընդհանուր առմամբ, ի՞նչ հիմնական խնդիրներ և մարտահրավերներ եք տեսնում Հայաստանում կանանց տնտեսական իրավիճակի հետ կապված: Ինչպե՞ս են այս խնդիրներն արտահայտվում տարբեր ոլորտներում և խմբերում: Խնդրում ենք նաև նկատի ունենալ ամուսնական կարգավիճակը և երեխա ունենալու կամ չունենալու հանգամանքը՝ որպես հնարավոր ազդող գործոն:**

3. Ձեր փորձից և դիտարկումներից ելնելով՝ ո՞ր խմբերի կանայք են առավել հաճախ բախվում տնտեսական մեկուսացմանը: Ի՞նչ համակարգային կամ կառուցվածքային գործոններով է դա պայմանավորված: Կա՞ն արդյոք տարբերություններ ամուսնացած, չամուսնացած, երեխա ունեցող և չունեցող կանանց միջև:

Մաս 2. Տնտեսական հասանելիություն և ռեսուրսների բաշխում

1. Որո՞նք են հիմնական համակարգային խոչընդոտները, որոնց կանայք բախվում են աշխատանք փնտրելիս, բիզնես սկսելիս կամ ֆինանսական աջակցություն (վարկեր, դրամաշնորհներ) ստանալիս, և որքանո՞վ են ֆորմալ ծրագրերը (պետական, ՀԿ, միջազգային) հասանելի տարբեր խմբերի, այդ թվում՝ գյուղաբնակ, տեղահանված, ազգային փոքրամասնության կամ հաշմանդամություն ունեցող կանանց: Ի՞նչ բացեր կամ արդյունավետության խնդիրներ եք տեսնում: Կա՞ն արդյոք խոչընդոտներ կամ առավելություններ, որոնք պայմանավորված են կնոջ ամուսնական կարգավիճակով և երեխա ունենալու հանգամանքով:

ա. Ըստ ձեզ՝ ՀՀ տարբեր մարզերում տնտեսական հնարավորությունների հասանելիությունը, արդարությունը և ռեսուրսների բաշխվածությունը հավասա՞ր են, թե՞ տարբեր մարզեր ունեն տարբեր պատկերներ: Եթե տարբեր են, ապա ինչպե՞ս և ինչո՞վ է դա պայմանավորված:

բ. Ըստ ձեզ՝ ԼՂ հակամարտությունը որևէ ազդեցություն ունեցե՞լ է կանանց տնտեսական արդարության և ռեսուրսների հասանելիության վրա, հատկապես սահմանամերձ բնակավայրերում: Եթե այո, ապա ինչպե՞ս և ինչո՞վ է դա պայմանավորված:

2. Արդյո՞ք կանայք ունեն հավասար հնարավորություն և իրավունք՝ ժառանգելու և տնօրինելու հող, տուն կամ այլ գույք (օրինակ՝ վաճառելու, վարձով տալու), և ի՞նչ գործնական կամ իրավական խնդիրներ են առաջանում: Ովքե՞ր են հաճախ զրկվում ժառանգությունից, ինչո՞վ է դա պայմանավորված (սոցիալական նորմեր, իրավական բարդություններ, ճնշում, կարծրատիպեր), և կանայք փաստացի տնօրինո՞ւմ են իրենց գույքը, թե՞ այն գրանցվում է ուրիշի անունով:

3. Արդյո՞ք կանայք ունեն հավասար հնարավորություն և իրավունք՝ ժառանգելու հող, տուն կամ այլ գույք: Ի՞նչ գործնական և իրավական խնդիրներ են ամենից հաճախ ի հայտ գալիս ժառանգական գործընթացում:

Խորացնող հարցեր.

ա. Ովքե՞ր են սովորաբար զրկվում ժառանգության իրենց բաժնից, և ո՞ր գործոններն են դրան նպաստում (օրինակ՝ սոցիալական նորմեր, իրավական բարդություններ,

ճնշում, կարծրատիպեր):

բ. Կանայք փաստացի տնօրինո՞ւմ և վերահսկո՞ւմ են իրենց գույքը, թե՞ այն հաճախ գրանցվում է ուրիշի անունով: Ի՞նչ պատճառներով է դա տեղի ունենում:

գ. Կարո՞ղ եք նշել իրավական կամ համայնքային միջամտության լավագույն փորձի օրինակներ, որոնք օգնել են կանանց՝ պաշտպանելու իրենց ժառանգական կամ գույքային իրավունքները:

4. Ինչպե՞ս է ամուսնական կարգավիճակը և երեխայի առկայությունը կամ բացակայությունը ազդում կնոջ հնարավորությունների վրա՝ ժառանգելու, տնօրինելու կամ պահպանելու գույքը: Արդյո՞ք այս հանգամանքները մեծացնում կամ նվազեցնում են ճնշումը կամ աջակցությունը գույքային իրավունքների իրացման հարցում:

Մաս 3. Սոցիալական նորմեր և հասարակական ընկալումներ

1. Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ ազդեցություն ունեն գերակշռող հասարակական կարծրատիպերը և գենդերային նորմերը կանանց՝ տնտեսության մեջ լիարժեք ներգրավվելու վրա: Որո՞նք են հիմնական մեխանիզմները, և ինչպե՞ս են դրանք դրսևորվում:

Խորացնող հարցեր.

ա. Որքանո՞վ են սոցիալական նորմերը (օրինակ՝ խնամքի բեռի անհամաչափ բաշխումը, տղամարդկանց առաջնահերթությունը որոշումների կայացման հարցերում, ընտանեկան կամ համայնքային ճնշումները, երեխայի/ների հիմնական խնամողը լինելու հանգամանքը) սահմանափակում կանանց տնտեսական շարժունությունը և ինքնուրույնությունը Հայաստանում: Արդյո՞ք ամուսնական կարգավիճակը ուժեղացնում կամ թուլացնում է այս ազդեցությունները:

բ. Ձեր գնահատմամբ՝ արդյո՞ք վերջին հակամարտությունը և դրա հետևանքով առաջացած կորուստները (մարդկային, նյութական) որևէ կերպ փոխել են գենդերային դերերը ընտանիքում կամ համայնքում: Խնդրում ենք բացատրել:

2. Որքանո՞վ են կանայք մեր օրերում ընկալվում և փաստացի հանդես գալիս որպես որոշումներ կայացնողներ՝ ինչպես իրենց համայնքներում, այնպես էլ տնտեսական հարցերում: Ի՞նչ գործոններ են նպաստում նրանց այդ դերին կամ խոչընդոտում դա:

3. Արդյո՞ք հասարակության վերաբերմունքը տարբերվող է այն կանանց նկատմամբ, որոնք շեղվում են ավանդական գենդերային դերերից կամ կարծրատիպերից (օրինակ՝ կանայք, որոնք ղեկավարում են, մենակ են ապրում կամ ֆինանսապես անկախ են): Ինչպիսի՞ վերաբերմունք է նկատվում այս համատեքստում ամուսնացած և չամուսնացած, ինչպես նաև երեխա ունեցող և չունեցող կանանց նկատմամբ:

Խորացնող հարցեր.

ա. Ձեր կարծիքով՝ փոխվե՞լ է արդյոք «լավ կնոջ» կամ «օրինակելի մոր/կնոջ» մոդելը պատերազմից հետո առաջացած նոր սոցիալական և տնտեսական իրականության մեջ:

բ. Ի՞նչ հետևանքներ է ունենում նման դրական կամ բացասական վերաբերմունքը կանանց տնտեսական կյանքի վրա:

Մաս 4. Ինստիտուցիոնալ մեխանիզմներ և իրավական աջակցություն

1. Ի՞նչ ինստիտուցիոնալ մեխանիզմներ և իրավական շրջանակներ գոյություն ունեն Հայաստանում՝ կանանց տնտեսական իրավունքների պաշտպանությունն ու խթանումն ապահովելու համար (օրինակ՝ ֆինանսական

ծառայությունների հասանելիությանը նպաստող օրենսդրություն, գենդերային հավասարությունը խթանող ծրագրեր, իրավական խորհրդատվության ծառայություններ): Որքանո՞վ են դրանք արդյունավետ:

2. Որո՞նք են, ձեր կարծիքով, պետական կամ տեղական մակարդակում առկա բացերը և մարտահրավերները՝ կապված կանանց տնտեսական արդարության ապահովման հետ:

Խորացնող հարցեր.

ա. Ձեր գնահատմամբ՝ որքանո՞վ են կանայք իրազեկված իրենց տնտեսական և գույքային իրավունքների մասին, և ի՞նչն է հիմնականում խանգարում կամ նպաստում նրանց իրազեկվածությանը: Արդյո՞ք ամուսնական կարգավիճակը և երեխա ունենալը/չունենալը ազդում են կանանց իրազեկվածության և այդ իրավունքները իրացնելու նրանց կարողության վրա:

բ. Ովքե՞ր են հիմնական վստահելի միջնորդները կամ աջակցողները, որոնց կանայք դիմում են իրենց տնտեսական իրավունքների պաշտպանության կամ արդարության/տնտեսական խնդիրների լուծման հարցերում (օրինակ՝ ՀԿ-ներ, իրավաբաններ, համայնքային առաջնորդներ/ներկայացուցիչներ, ընտանիքի անդամներ):

Մաս 5. Վերահսկողություն և անվտանգություն

1. Որքանո՞վ են կանայք, հատկապես խոցելի խմբերի ներկայացուցիչները (օրինակ՝ տեղահանված, կորուստներ կրած, սահմանամերձ համայնքներում բնակվող), լիարժեք տնօրինում իրենց եկամուտները, ունեցվածքը կամ ինքնուրույն որոշումներ կայացնում աշխատանքի ընտրության հարցում: Ի՞նչ գործոններ են ազդում այս վերահսկողության վրա: Կա՞ տարբերություն ամուսնացած և չամուսնացած, երեխա ունեցող և չունեցող կանանց միջև:

2. Ի՞նչ սպառնալիքների կամ ճնշումների են կանայք բախվում տնտեսական կյանքում: Խնդրում ենք մանրամասնել առավել տարածված խնդիրները, ինչպիսիք են աշխատանքային շահագործումը, ֆինանսական կախվածությունը, ընտանեկան կամ համայնքային ճնշումները, կամ պետական/ֆինանսական հաստատություններում անարդար վերաբերմունքը:

Մաս 6. Առաջարկներ, համակարգային լուծումներ

1. Ձեր կարծիքով՝ ի՞նչ կոնկրետ և գործնական քայլեր պետք է ձեռնարկվեն կանանց համար տնտեսական հավասարություն և արժանապատիվ պայմաններ ապահովելու համար: Խնդրում ենք առանձնացնել դրանք ըստ մակարդակների՝ համայնքային, ինստիտուցիոնալ (օրինակ՝ բանկեր, կրթական հաստատություններ, զբաղվածության կենտրոններ) և պետական (օրենսդրական, քաղաքականության մակարդակներում):

2. Եթե հնարավորություն ունենայիք առաջարկելու մեկ՝ ամենակարևոր ինստիտուցիոնալ բարեփոխումը, ո՞րը իրական և կայուն ազդեցություն կունենար կանանց տնտեսական արդարության ապահովման վրա, ի՞նչը կառաջարկեիք և ինչո՞ւ:



ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ԲԱԺԻՆ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Ո՞ր մարզում եք ներկայում բնակվում:
2. Ձեր բնակավայրի տեսակը:
3. Ձեր տարիքային խումբը:
4. Ձեր ամուսնական կարգավիճակը:
5. Ձեր ներկայիս զբաղվածությունը:
6. Ներկայում ունե՞ք սեփական եկամուտ:
7. Ունե՞ք երեխաներ կամ ձեր խնամքի տակ գտնվող այլ անձինք:
8. Դուք տեղահանվա՞ծ եք Լեռնային Ղարաբաղից:
9. Ունե՞ք հաշմանդամություն կամ առողջության երկարաժամկետ խնդիր, որն ազդում է ձեր աշխատանքի կամ տեղաշարժի վրա:

ԲԱԺԻՆ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10. Ինչպե՞ս կգնահատեք կանանց՝ աշխատանք գտնելու, եկամուտ վաստակելու, բիզնես սկսելու կամ մասնագիտական վերապատրաստման մասնակցելու հնարավորությունները:
11. Տղամարդկանց համեմատ՝ ձեր համայնքում կանայք ունե՞ն աշխատանքի հավասար հասանելիություն:
12. Որո՞նք են կանանց զբաղվածության հիմնական խոչընդոտները ձեր համայնքում:
13. Ձեր կարծիքով՝ կանանց ո՞ր խումբն է առավել դժվարությամբ հասնում տնտեսական անկախության:

ԲԱԺԻՆ 3. ՉԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

14. Դուք անձամբ բախվե՞լ եք աշխատանք գտնելու դժվարության:
15. Եթե այո, ո՞րն էր հիմնական պատճառը:
16. Աշխատանք փնտրելու կամ աշխատանքի տեղավորվելու փուլում ի՞նչ դժվարությունների եք բախվել:
17. Ձեր կարծիքով՝ ձեր համայնքում կամ ոլորտում նույն կամ համարժեք աշխատանքի դիմաց կանայք և տղամարդիկ սովորաբար ստանո՞ւմ են նույն վարձատրությունը:
18. Ձեր կարծիքով՝ ի՞նչ հիմնական խոչընդոտների են բախվում կանայք ղեկավար պաշտոններ զբաղեցնելիս:
19. Հետկոնֆլիկտային իրավիճակով պայմանավորված՝ ի՞նչ հիմնական խոչընդոտների եք բախվել տնտեսական ակտիվության, աշխատանք գտնելու կամ եկամուտ ստանալու հարցում:

ԲԱԺԻՆ 4. ԽՆԱՄՔԻ ԲԵՌ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

20. Ձեր տնային տնտեսությունում ո՞վ է հիմնականում կատարում չվճարվող տնային աշխատանքը՝ երեխաների խնամք, տարեցների խնամք և տնային գործեր:

21. Միջինում օրական քանի՞ ժամ եք տրամադրում չվճարվող տնային աշխատանքին, օրինակ՝ ճաշ պատրաստելուն, մաքրությանը, լվացքին, գնումներին և այլ կենցաղային աշխատանքների:

22. Միջինում օրական քանի՞ ժամ եք տրամադրում չվճարվող խնամքի աշխատանքին, օրինակ՝ երեխաների, տարեցների, հիվանդ կամ հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամների խնամքին, ուղեկցելուն կամ աջակցությանը:

23. Որքան հաճախ են ընտանեկան պարտականությունները սահմանափակում ձեր՝ աշխատելու, սովորելու, վերապատրաստման մասնակցելու կամ բիզնեսով զբաղվելու հնարավորությունը:

24. Ո՞ր պարտականությունն է ավելի շատ սահմանափակում կանանց տնտեսական ակտիվությունը:

25. Ձեր ընտանիքում սովորաբար ո՞վ է որոշում՝ կինը կարող է աշխատել, ճանապարհորդել կամ վերապատրաստման մասնակցել, թե ոչ:

26. Ձեր համայնքում որքանո՞վ է ընդունելի, որ երեխաներ ունեցող կինը աշխատի լրիվ դրույքով:

ԲԱԺԻՆ 5. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

27. Սովորաբար ո՞վ է որոշում, թե ինչպես է օգտագործվում ձեր անձնական եկամուտը:

28. Ունե՞ք բանկային հաշիվ կամ քարտ, որը կարող եք օգտագործել ինքնուրույն:

29. Երբևէ դիմե՞լ եք վարկ կամ փոխառություն ստանալու համար:

30. Եթե այո, ի՞նչ արդյունք է ունեցել դիմումը:

31. Ձեր կարծիքով՝ ո՞րն է կանանց համար վարկերի կամ ֆինանսական միջոցների հասանելիության հիմնական խոչընդոտը:

ԲԱԺԻՆ 6. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ

32. Երբևէ փորձե՞լ եք սկսել կամ ընդլայնել բիզնես:

33. Եթե ոչ, ո՞րն է հիմնական պատճառը կամ պատճառները:

34. Եթե այո, ո՞րն էր հիմնական դժվարությունը կամ դժվարությունները:

35. Ձեր համայնքում կանանց կողմից փաստացի վարվող ընտանեկան բիզնեսները սովորաբար ո՞ւմ անունով են պաշտոնապես գրանցված:

36. Ստորև թվարկվածներից աջակցության ո՞ր տեսակներն են ամենաօգտակարն այն կանանց համար, որոնք ցանկանում են սկսել կամ ընդլայնել բիզնեսը:

ԲԱԺԻՆ 7. ԳՈՒՅՔԱՅԻՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

37. Ունե՞ք հող, տուն, բնակարան կամ բիզնես, որը/որոնք փաստաթղթերով ձեր սեփականությունն են:

38. Ձեր ընտանիքում կամ համայնքում ո՞վ է ավելի հավանական, որ ժառանգի հող կամ գույք:

39. Երբևէ գույքային կամ ժառանգության իրավունքներից հրաժարվելու համար ճնշման ենթարկվե՞լ եք:

40. Ի՞նչն է սովորաբար խանգարում կանանց՝ պահանջելու իրենց ժառանգությունը կամ իրացնելու գույքային իրավունքները:

ԲԱԺԻՆ 8. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

41. Լսե՞լ եք որևէ պետական, հասարակական կամ միջազգային ծրագրի մասին, որն աջակցում է կանանց զբաղվածությանը, բիզնեսին կամ տնտեսական անկախությանը:

42. Ո՞րն է նման ծրագրերին հասանելիություն ունենալու հիմնական խոչընդոտը (խոչընդոտները) կանանց համար:

43. Ստորև նշված աջակցության տեսակներից որո՞նք են ամենակարևորները կանանց համար:

44. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կգնահատեք ձեր տնտեսական անկախությունն այսօր:




ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

1. Կազմակերպության անվանումը:
2. Կազմակերպության/համայնքի գտնվելու վայրը:
3. Կազմակերպության գործունեության մարզը/մարզերը կամ տարածաշրջանը/տարածաշրջանները (կարելի է նշել մեկից ավելի տարբերակ):
4. Կոնտակտային անձի անունը, պաշտոնը, էլ. հասցեն և հեռախոսահամարը:
5. Կազմակերպության առաքելությունը կամ գործունեության հիմնական ուղղությունները (մինչև 50 բառ):
6. Նշե՛ք, թե ձեր ծրագրերում որ ուղղություններն են ընդգրկված կամ ընդգրկված եղել (կարելի է ընտրել մեկից ավելի տարբերակ):
7. Ի՞նչ շոշափելի արդյունքներ կամ ձեռքբերումներ եք արձանագրել ձեր ծրագրերի շրջանակում կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնման և կարողությունների զարգացման առումով:
8. Ի՞նչ հիմնական մարտահրավերների կամ խոչընդոտների եք բախվել ծրագրերն իրականացնելիս, հատկապես՝ սահմանամերձ, գյուղական բնակավայրերի կամ խոցելի խմբերի կանանց հետ աշխատելիս:
9. Ձեր կազմակերպությունն իրականացրե՞լ է կամ այժմ իրականացնո՞ւմ է ծրագրեր կամ նախաձեռնություններ, որոնք ուղղված են կանանց տնտեսական հզորացմանը, տնտեսական արդարության ապահովմանը, աշխատանքային իրավունքների պաշտպանությանը կամ տնտեսական ակտիվության ոլորտում գենդերային հավասարության ապահովմանը:
10. Ծրագրի նպատակը՝ մեկ նախադասությամբ:
11. Ծրագրի իրականացման ժամանակահատվածը (սկիզբ–ավարտ):
12. Ծրագրի հիմնական թիրախային խմբերը (կարելի է ընտրել մեկից ավելի տարբերակ):
13. Ցանկանո՞ւմ եք ավելացնել ևս մեկ ծրագիր:
14. Երկրորդ ծրագրի նպատակը՝ մեկ նախադասությամբ:
15. Երկրորդ ծրագրի իրականացման ժամանակահատվածը (սկիզբ–ավարտ):
16. Երկրորդ ծրագրի հիմնական թիրախային խմբերը (կարելի է ընտրել մեկից ավելի տարբերակ):
17. Ցանկանո՞ւմ եք ավելացնել ևս մեկ ծրագիր:
18. Երրորդ ծրագրի նպատակը՝ մեկ նախադասությամբ:
19. Երրորդ ծրագրի իրականացման ժամանակահատվածը (սկիզբ–ավարտ):
20. Երրորդ ծրագրի հիմնական թիրախային խմբերը (կարելի է ընտրել մեկից ավելի տարբերակ):
21. Արդյո՞ք ձեր կազմակերպությունը նախատեսում է առաջիկա 2–3 տարիների ընթացքում շարունակել կամ զարգացնել կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրերը:
22. Ձեր կարծիքով՝ այս պահին ի՞նչ է ամենից շատ անհրաժեշտ Հայաստանում կանանց տնտեսական արդարությունը լիարժեք ապահովելու համար (խնդրում ենք ընտրել մինչև երեք ամենակարևոր տարբերակ):



ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ



womensagenda.am